

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ

ԿՅԱՆՔԸ

ԵՎ. ԱՏԵՂԵԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

ЕРЕВАНСКИЙ ГОС. ПЕДАГОГИЧ. ИНСТИТУТ АССР

А. С. АСАТРЯН

ЖИЗНЬ
И ТВОРЧЕСТВО
АВЕТИКА ИСААКЯНА

ИЗДАТЕЛЬСТВО ГОС. ПЕД. ИНСТИТУТА
ЕРЕВАН. 1940

Ա.Ս. Ա.Ս. Ա.ՏՐԵՅԱՆ


ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ

ԿՅԱՆՔԸ

ԵՎ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

H
50023
A





ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ կլասիկ պոեզիայի խոշորագույն դեմքերից մեկն է Ավետիք Իսահակյանը: Ինչպես գրել է Վալերի Բրյուսովը՝ «Հովհաննիկայանը, թումանյանը և Իսահակյանը կազմում են ամենալառ եռաստեղությունը հայ գրականության երկնակամարում», որի (հայ գրականության: Ա. Ա.) պատմական ուղիներն անցնում են այդ երեք գրողների գործունեության միջով»:

«Իսահակյանն առաջնակարգ բանաստեղծ է. թերևս այժմ չկա այդպիսի լուսավոր և անմիջական տաղանդ ամբողջ Եվրոպայում», գրել է ուստի մեծ բանաստեղծներից մեկը՝ Ալ. Բլոկը 1916 թվին:

Բանաստեղծի կյանքն ու ստեղծագործությունը ցույց են տալիս, որ Բրյուսովն ու Բլոկը լիովին ճիշտ են զնահատել Իսահակյանի մեծությունն ու տեղը հայ գեղարվեստական գրականության զարգացման մեջ:

Իսահակյանը ծնվել է 1875 թ. հոկտեմբերի 18-ին, Ալեքսանդրապոլի (այժմ Լենինականի) շրջանի Ղազարապատ գյուղում և իր մանկությունն անց է կացը և այստեղ:

Նա սկզբնական կրթությունն ստացել է տեղի ծխական գըտը բոցում, այնուհետեւ սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում մինչև 5-րդ դասարանը: 1891 թվին Ճեմարանում տեղի ունեցած աշակերտական խորվություններին մասնակցում է նաև Իսահակյանը: Եվ այդ առիթով էլ նա հեռանում է Ճեմարանից:

Այնուհետև Իսահակյանը գնում է Եվրոպա և այնտեղ սովոր բարձրագույն կրթություն՝ նախ Վիեննայի և ապա Լայպցիգի համալսարաններում սովորելով մարդարանական, ազգագրական և գրական գիտություններ:

Վիեննայի համալսարանում սովորելիս Իսահակյանը միաժամանակ աշխատում էր տեղի (Վիեննայի) մարդարանական թանգարանում:

1896թվին Խսահակյանը վերադառնում է Հայրենիք։ Զորո-
հինգ տարի հետո նա նորից է գնում Եվրոպա, այս անդամ հաս-
կապես գրականություն ուսումնասիրելու նպատակով։ Վերադառ-
նում է Հայրենիք Հիմանդրության պատճառով։

Խսահակյանն սկսել է գրել 11—12 տարեկան հասակից։ իսկ
մամուլում հանդես է գալիս 90-ական թվական սկզբին։ «Տարագում»
1892—93թ. տպագրվում են «Մաղիկ էի նորաբարողոջ…»,
«Խորին գիշեր է…», «Օխալ սարով հետո քեզնեն», «Իսրայելա-
ցիք Բարերանում» բանաստեղծությունները։ Այնուհետև Խս-
ահակյանի բանաստեղծությունները տպվում են նաև «Արաքում»,
«Մուրճում», «Աղրյուրում» և այլ պարերականներում, այնպէս
որ մինչև իր բանաստեղծությունների առաջին գիրքը հրատարա-
կելը Ավ. Խսահակյանն արդեն ճանաչված բանաստեղծ էր ըն-
թերցող հասարակության համար։

1898թ. սկզբին Ալեքսանդրասլում (այժմ Լենինական)
լույս տեսավ Խսահակյանի բանաստեղծությունների առաջին ժո-
ղովածուն՝ «Երգեր ու վերքեր» վերնագրով։ Այդ փոքրիկ գրը-
քույզը, որ պարունակում է 60-ից ավելի բանաստեղծություն-
ներ, միանգամից ժողովրդական մեծ հոչակ ստեղծեց նոր, երի-
տասարդ բանաստեղծի համար։ Խսահակյանը հաստատուեն մտալ
գրականության մեջ՝ հենց սկզբից որպես ինքնամբ ժողովրդ-
դական լիրիկ բանաստեղծ, որի ստեղծագործություններն արա-
գորեն առաջարկեցին ամենուրեք և խորը հետաքրքրության
առարկա դարձան ու սիրվեցին ժողովրդի ամենալայն խավերի
կողմից։

Խսահակյանը սրպես բանաստեղծ ձեռավորվեց 90-ական և
900-ական թվականներին, ծննդեց այդ ժամանակաշրջանի հասա-
րակական-քաղաքական միջավայրում, ըստորում նրա գրական
կյանքի համար վճռական նշանակություն է ունեցել հայ ժողո-
վրդի ապրած լիճակը։

Հայ ժողովրդի ազգային սարկական գրությունը «տաճկական
գեսպոտիզմի Սցիլլայի և ոռւսական բռնակալության Խարիբդա-
յի արանցում» (Ֆ. Էնգելս), աշխատավորության, մասնավորա-
պես գյուղացիության զրկանքներով ու վշտով լի կյանքը և բուր-
ժուական հարաբերություններում կաշկանդված մարդկային անձ-
նավորության բռնադատված վիճակը, որպես աղատությունից
զրկված թուչունինը փակ վանդակում, —ահա այս հանգամանքներն
են զրավել Խսահակյանի ուշագրությունը և դարձել նրա հու-
գումների, վշտի և ըմբռուացման արամադրությունների աղբյուրը։

Իսահակյանի կյանքում ու ստեղծագործության մեջ աչքի ընկնող գիծը մինչսովութեական չըջանում՝ դա տիրող իրականությունից դժգոհությունն է և բանաստեղծի աճող բողոքի ու լմբոսացման արամադրությունը։ Տիրող իրականությունը նրա համար անշափի նեղ էր, անհրապույք ու անտանելի, ոչինչ միթքարական նաև չէր տեսնում այնուեղ, մանավանդ որ ժողովուրդն ազլում էր ծայր աղքատության մեջ։ Իսահակյանն այդ գիտեր ոչ թե գրքերից ու մամուլից, այլ անձամբ, սեփական աչքերով տեսնելով իր՝ գրեթե անվերջ թափառումների ժամանակ՝ թե՛ իր հայրենիքում՝ Հայաստանում ու Անդրկովկասում և թե՛ արտասահմանում։

Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկին՝ Սովետական գրողների համամիութենական 1-ին համագումարում աված իր զեկուցման մեջ մեծ ընդհանրացում կատարելով նշեց, որ «XIX դարի ելքոպական և ոռուական գրականության հիմնական թեման է անձնավորությունը՝ իր հակադրությամբ հասարակությանը, պետությանը»^{*}։ Իսկ ի՞նչն էր այդ հակադրության պատճուր և ի՞նչպես էր այն պատկերացվում գրականության մեջ։ Գորկին այս հարցին պատասխանում է. «Այն գլխավոր պատճուր, որը դրդում էր անձնավորությանը՝ իրեն կանգնեցնել բուրժուական հասարակության գեմ—հանդիսանում է տիրող հարաբերությունների շրջապատից ստացվող բացասական տպավորությունների առատությունը... Անձնավորությունը լավ զգում էր, որ այդ տպավորությունները ճնշում են նրան, դանդաղեցնում են նրա աճման ոլորտեսը», սակայն, նկատում է Գորկին, «ընդհանուր առմամբ ըմբոստացող անձնավորության՝ հասարակության կյանքի, գոյություն ունեցող կարգերի քննադատության մեջ, որպես հիմնական մոտիվ, ամելի սակավ էր հանդես գալիս սոցիալ-տնտեսական պատճառների նշանակության խորհ ու ճիշտ լմբունումը։ Բայց ամելի հաճախ քննադատությունն առաջ էր գալիս կամ նրանից, որ նա (անձնավորությունը) զգում էր իր գոյության անհուսալի լինելը կապիտալիզմի նեղ, երկաթե վանդակում, և կամ՝ իր կյանքի անհաջողության համար, նրա ստորացուցիչ վեճակի համար վրեժինդիքի լինելու ձգտումից»^{**}։

Գորկու այդ ընդհանրացումը շատ է հեշտացնում մասնա-

* М. Горький, О литературе, 1935 г., стр. 382—383.

** Նույն տեղում, էջ 383։

վորապես հայկական կլասիկ պոեզիայի մեծ վարպետներից մեկն է Ավ. Իսահակյանի ստեղծագործությունը հասկանալու և լուսաբանելու գործը: Իր ամբողջության մեջ Ավ. Իսահակյանի ստեղծագործությունն էլ նույն այն գծերն ունի, որոնք նշված են Գորկու կողմից ելլոպական ու ռուսական գրականության վերաբերյալ:

Ի՞նչն է մտահոգել, զբաղեցրել իսահակյանին՝ նրա որոնումների ընթացքում: «Պատանի հասակիցս ինձ մշտապես հուզել է, մտալիկել աշխարհիս մեջ գոյություն ունեցող չարիքը, մարդկությունը տառապեցնող չար իրերը—աղքատությունը, չահագործում, ոճիրներ: Ինձ տանջել է հայ աշխատավոր ժողովրդի դառն վիճակը սուլթանի և ցարի գաժան լուծերի տակ և այդ չարիքները վերացնելու գործը, փրկության միջոցները»—ասել է իսահակյանն իր ելույթներից մեկում 1937 թվին*: Իսահակյանի ստեղծագործությունն իր հիմնական բովանդակությամբ պատկերում է «աշխարհիս մեջ գոյություն ունեցող չարիքը», աշխատավոր մարդու կրած տառապանքը բուրժուական կարգերում և արտահայտում է բանաստեղծի խորը զայրույթը, բուռն ըմբոսացումը տիրող իրականության գեմ՝ հանուն լավագույն ապագայի: Ճիշտ է, չի կարելի անտեսել, որ իսահակյանի պոեզիան, նրա ողջ ստեղծագործությունն իր մեջ որոշ խորթ տարրեր է պարունակում, տարրեր, որոնք հետեւանք են աշխատավոր մարդկության համար վնասակար գաղափարական հոսանքների ազգեցության, բայց դրանք տիրապետող չեն իսահակյանի հիմնական ուղղության համար: Եվ երբ մենք զատենք, մի կողմ գնենք, թեև ոչ պատահական տարրերը,—մեր առաջ կկանգնի հայ դեմոկրատական պոեզիայի լեռնապարի մեծ գաղաթներից մեկը, հայ ժողովրդական բանաստեղծը, որ ապրել և արտահայտել է իր՝ կրկնակի ճնշման տակ եղած մայր ժողովրդի հոգու-սրտի վերքը, որոնել է այդ վերքը բուժելու միջոցները և երկար ժամանակ չգտնելով ճշմարիտ ուղին, տանջին է, երբեմն հուսահատվել, պեսիմիզմի գիրկն ընկել, տարբել խորթ հոսանքների ազգեցությամբ:

* Ավ. Խահիկյան, «Իմ ապատ և ստեղծագործ ժողովրդի հետ», իսահակյանի նամակը, որ կարգացվել է գրողների ընդհանուր ժողովում 1937 թ. ապրիլ 20-ին. «Ա. Հ.» 23 ապրիլ 1937 թ.:

ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԼԻՐԻԿԱՆ

Իսահակյանն իր ստեղծագործության բազմազանության մեջ գերազանցապես լիրիկ բանաստեղծ է: Այդ նշանակում է, որ արտաքին աշխարհը, հասարակական կյանքն ու պայքարը, պատմությունն ու այժմէությունը՝ նրա ստեղծագործության մեջ արտահայտվում է սուբյեկտիվ բնկվածությամբ: Սակայն ինչպես մեծ լիրիկ բանաստեղծների մոտ ընդհանրապես, նույնը և Իսահակյանի, ստեղծագործության առերևույթ սուբյեկտիվ բնույթը չի խանդարում, որ իրականությունը նրանում արտացոլվի ճշմարտացիությամբ:

Իսահակյանի՝ որպես լիրիկ բանաստեղծի՝ մեծությունը այն է, որ նա մեծ տաղանդով ու վարպետությամբ պատկերելով մարդու ներքին, անհատական զգացմունքների աշխարհը, հենց դրանով արտացոլել է այդ զգացմունքների առաջացման արտաքին աղբյուրը, այդ զգացմունքները կրող մարդու սոցիալական մեջավայրի պատկերը:

Իսահակյանի երգերը գերազանցապես սրտի երգեր են, անսահման իորբ ու զյուրազգաց սրտի բարախման արձագանքը նըրքալար քնարի վրա: Իսահակյանի լիրիկան—զա նրա բազմատանջ հոգու կենսագրությունն է: Անհուն թախիծ, վիշտ ու տառապանք են արտահայտում նրա լիրիկական ստեղծագործությունները:

Սակայն շատ սահմանափակ և անարյուն ու անկյանք կլիներ իսահակյանի լիրիկան, եթե նա իր բովանդակությամբ սոսկ անձնական բնույթ ունենար: Բանաստեղծի արտահայտած վիշտն ու տառապանքը իրենց էությամբ և աղբյուրներով խորապես սոցիալական են, համամարդկային: Նա իրեն զգում ու պատկերում է որպես ողջ տանջվող աշխարհի—մարդկության վշտի կրողն ու արտահայտողը:

Ել անսպատից, հեռու ծովերից
 Ել գարբաներից, թե խուլ բանտերից
 Լըսում եմ անվերջ, դիշեր ու ցերեկ
 Ալլը ու Հեծեծանք միշտ, ամենուրեք.
 Տեսնում եմ արցունք ժբարի հետ հյուալած,
 Հացի հետ արցունքից համատարած...
 Ել ծով-արդունքներն անձայր աշխարհի
 Ամեն խորչերից, ամեն սրաներից
 Կաթիւ առ կաթիւ հավաքաւմ, զալիս,
 Թափվում են վշտու, խոցված սրախ մեջ...

Այս բանաստեղծությունը գրված է 1905 թվին:

Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ սեոլուցիայից առաջ,
 Հեռու լինելով պրոլետարիատի դասակարգային պայքարից ու
 Նրա ուներտցիոն աշխարհայացքից, Խսահակյանն իր ստեղծադոր-
 ծական ուղին անցել է գրեթե միշտ խարիստելով, չունենալով
 գալքի պարզ հեռանկարը:

Անցնելիք ուզու և գալիք անորոշությունն ու անհայտու-
 թյունը, «անդուռ և անել» վիճակը և գրանից էլ բղխող ծանր
 հուսահատությունը բնորոշ են Խսահակյանի քնարի համար:

Հետեյալ տողերն այդ են վկայում:

Անհայտ, անորոշ, անձեւ տեսչերով
 Զգում է հողին հեռու, շատ հեռու.
 Տխուր ու մոայլ, ինչպես մշուշ-ծով,
 Կուլ հեծեծում է ափերի վրա,
 Եվ ինչպես երազ—հ՛ կա, հ՛ չկա...:

Այսպիս և գրել Խսահակյանը 1899 թվին, երրորդ, թեև երի-
 տասարդ, բայց արդեն անվանի բանաստեղծ եր:

Կանգնած լինելով իր սեփական ու հաստատուն ուղին չու-
 նեցող սոցիալական շերտերի խարխուլ գիրքերում, բանաստեղծն
 իր քնարից շատ վաղ շրջանում էլ հնչեցրել է հուսահատության
 նոտաներ:

Դեռ 1895 թվին քսանամյա երիտասարդ բանաստեղծը հյուսել
 է հետեյալ հուսակտուր, դառնաթախիծ տողերը:

Թափվեցին տերեներն աշնան ծառերից
 Բոշնած ու զարուկ:
 Թափվեցին երգերս բեկված իմ սրտից՝
 արտում ու թարուկ:
 Թափվեցին ասադերն անհուն երկնքից
 տխուր ու անփայլ,—
 — Թափվեցե՛ք, արցունքներս, հոգուս խորքերից
 անհույս ու մոայլ...

Հոռետեսական այդ տրամադրություններն Խսահակյանի քը-
նարից լովել են շատ հաճախ իր «անհատնում և անափ ուղին»
անցնելիս, որ անցյալում եղել է «սև ու մութ և մոլոր...»:

Նշելով Խսահակյանի քնարի այդ առանձնահատկությունը,
անցյալի քննադատությունը, սակայն, ճիշտ չի բնութագրել նրան,
պնդելով, թե նա «լոկ անհատական վշտի ու ցավերի երգիչ» է,
թե հասարակական կյանքի զանազան հոգսեր այնքան էլ չեն հե-
տաքրքրել նրան, որքան անհատական տենչերը, ցանկություն-
ները*:

Այս դատողությունն անհիմն է ու սխալ: Ճիշտն այն է, որ
Խսահակյանը «անհատական վշտերի ու ցավերի երգիչ» լինելով,
միաժամանակ սոցիալական վշտի ու ցավի երգիչ է, և նրան
ոչ պակաս չափով հետաքրքրել են հասարակական կյանքի հոդ-
ուերն ու չարիքը:

Ես սիրում եմ մըմունջ-արտունջ —
Տանջված սրտի երդ ու վերք...

գրել է Խսահակյանը իր գրական գործունեության հենց սկզբին
(1893):

Խսահակյանի պոեզիայի երկինքը հազեցած է, չնչում է երկ-
րի իրական կյանքով: Եվ գրեթե միշտ նրա՝ «լոկ անհատական»
թվացող տրամադրության մեջ արտափայլում է ընդհանրակա-
նը—սոցիալականը:

Մայրիկ, հիվանդ եմ, սիրուս քրքրված,
Տես, որքան խորն են հոգուս վերքերը,
Արնուա ու խոցոս:

Նրա վերքերը՝ ողջ «տիեզերքի հսկա վերքերի կաթիլներիցն
են» և այդ «հսկա վերքերի» ցալն է արտահայտում բանաստեղծն
իր գառնաթափիծ երդերում:

Տես, ինչպես դառն երգում եմ երգեր,
Անհուն վըշտերի, տանջված մտքերի,
Մի՞թե կարող ես երգերս մարել,
Որ տիեզերքի հսկա վերքերի
ցալն ու կոկիծն է...:

* Ա. Ռուբենի, Ա. Խսահակյանի «Բանաստեղծությունները» («Ծուրճ»,
1904 № 3, էջ 130):

Այդ տրամադրությունն իսահակյանի մոտ համաշխարհային-թախծի, համամարդկային վշտի արտահայտությունն է, վիշտ, որի իրական սոցիալական աղբյուրը, Մարքսի արտահայտությամբ ասած՝ «մերկ շահի, անսիրտ կանխիկ հաշվի» վրա հիմնըված կապիտալիզմի համաշխարհային տիրապետությունն է: Եկուորդիչետե այդ աղբյուրը կար, իսկ բանաստեղծը դեռ չէր հասնում այդ աղբյուրն իսպատ ցամաքեցնելու (այսինքն կապիտալիզմի ոչնչացման) միջոցների ռեռլուցիսն տեսությանը՝ մաքսիզմին, այդ պատճառով էլ նրա պոեզիայում սկզբից մինչեւ վերջ առկա է «տիեզերքի հսկա վերքերի ցալն ու կսկիծը», որ բանաստեղծին թվացել է համբայան անբուժելի:

Նա տեսնում է շրջապատող սոցիալական անհավասարությունը, ձնչումը, տեսնում է սոցիալական կյանքի հակադիր ընեռները և նրա պոեզիայում ամենից առաջ հնչում է այդ անհավասարության փաստը պատկերող մոտիվը: Նա տեսնում է մի կողմից մի բուռ հարուստներ, շահագործողներ, որոնք թե՛ւ անհաշխատ, բայց վայելում են կյանքը, առատորեն ուտում-խմում «աշխարհի ճոխ սեղանից», մյուս կողմից՝ «կյանքի խորթ որդիներին»—«աշխարհի խորթ տղերքին», որոնք «գառը դատում» են, բայց «դատարկ նստում», իսկ նրանց քրտնքի արդյունքը խժում են «հարուստ մարդկեց»: Սոցիալական կյանքի այդ աղաղակող հակագրությունը պոետը տիեզ է իր նշանավոր «Ախ, մեր սիրտը» բանաստեղծությամբ, որը լույս տեսնելուն պես (1898 թ.) արագությամբ տարածվեց ժողովրդի մեջ:

Ախ, մեր սիրտը լիքը դարդ, ցալ,

Օր ու արև չտեսանք.

Ու մեր կյանքը սեռով անցավ,

Աշխարհից բան չիմացանք:

Հարուստ մարդկել կուտեն-խմեն

Աշխարհի ճոխ սեղանից,

Մենք աշխարհի խորթ տղերքն ենք,

Մեզ փայտ չկա աշխարհից:

Խեղճ աղքատի հողին գուրս դա,

Քարից-հողից հաց քամեն,

Բեռով հացը հարուստին տա,—

Հարուստն ուտե, վայելե:

Խեղճ աղքատը դառը դատի, —

Դատարկ նստի... է՛ր, աշխարհ,

եւ ինչո՞ւ ես քարը թողնում

Քարի վրա, քար—աշխարհ:

Բանաստեղծը դիտակցում է, որ սոցիալական այդ խոր անհավասարության հետևանքով՝ ոչ միայն իր հայրենիքում, այլև ամբողջ աշխարհում «անլիբորջ, գեղեր ու ցերեկ» լսվում է «ողբու և հեծեծանք միշտ ամենուրեկք».

...Տեսնում եմ արցանք ժամանակած,
Հացի հետ արյուն, վիշտ համատարած:

Իրականության այդ վառ պատկերման մեջ թեև չկան ուղղակի մարտակոչի խոսքեր, բայց ուժգնորեն զգացվում է սոցիալական բուռն բողոքը աիրող անարդարության գեմ. «Ել ինչո՞ւ ես քարը թողնում քարի վրա; քար-աշխարհ»: Այս հարցի մեջ գիտակցված է սոցիալական չարիքի անուելիությունը, բայց ոչ նրա աղբյուրը և ոչ էլ մանափանդ նրա վերացման ճշմարիխ ուղին:

Իսահակյանի մոտ սոցիալական մոտիվների զարգացման հետեւյալ քայլը, որ անմիջապես հետևում է տիրող անհավասարության պատկերմանը և պասսիվ բողոքին, դա «մեծ ճշմարտության» անդուլ որոնումն է:

Այդ տեսակետից բնորոշ է նրա «Զայն հնչում է...» բանաստեղծությունը՝ գրված 1900 թվին: Քսանհինգամյա Երիտասարդ բանաստեղծը գետ խարխափում է խավարում, նա շատ հեռու է կանգնած իր որոնած «մեծ ճշմարտության» նիշտ ուղեներից, բայց տանջալից ձգտում է արտահայտում գտնելու այդ ուղինեները:

Զայնը հնչում է խավարի խորքից,
Գըթա, հայտնիլիր, սուրբ ճշմարտություն,
Ես քեզ փնտրել եմ իմ կյանքի շնմքից,
Եվ, տես, քարացա անհուն տանջանքում:
Բյուր ուղիներով ես գիմեցի քեզ,
Քո հետքն ու ըուքը նույնիսկ չըդբառ,
Տես, սրբության մեջ, մոլորության մեջ
Զախախիվեց կյանքը... ու դու չե՞ս գըթա:

Ու թեև, ասում է բանաստեղծը, որոնման տանջանքից՝ ջախչախված, «Հոգնած եմ հիմա, անուժ ու հիվանդ», «բայց—հավատում եմ, որ ունես գոյություն»: Բանաստեղծը հավատում է, որ կա և երբեք կհայտնի «մեծ ճշմարտությունն» աշխարհում:

Բայց էլ չըմնաց մի ուղի անհայտ,
Այս, երևեցիր, մեծ ճշմարտություն:
Եվ ես ուժ կառնեմ, կը սրտապնդվեմ,

Ցուպըս կըվերցնեմ և ճամբա կերթամ,
Լույսըդ կավեռեմ խավար աշխարհին,
Մոլոր ժարդկության վեհ կյանքըդ կուտամ:

Ակնհայտ է, որ պոետն իր որոնած ճշմարտությունը գտնելու, նրան հասնելու անհուսալի և անորոշ ուղու վրա էր կանգնած: Բանաստեղծը «Հասարակական չարիքի», շահազործման ու ճնշման «Համատարած վշտի» գոյությունը համարում է արդյունք «մարդկության մոլորվածության» և բացի այդ, նրան թվում է, թէ՝ «Էլ չըմնաց մի ուղի անհայտ», որով կարելի լիներ հասնել ու բերել «մեծ ճշմարտությունը»:

Շուտով վրա է հասնում ոռոսական առաջին մեծ ուելուցիան, որը ցնցեց ու խարիսխեց «Ժողովուրդների բանտի» հիմքերը:

Այդ մի հզոր «Ժողովրդական ուելուցիա էր», որը շարժման մեջ գրեց ամբողջ ժողովրդին, ամբողջ բանվոր զասակարդին, ամբողջ գյուղացիությանը*: Այդ մեծ, համաժողովրդական ուելուցիան իր լայն արձագանքը գտավ նաև զբականության մեջ: Մեզանում Զակոր Զակորյանը, Շ. Կուրզինյանը, Արագին, Ան. Վարդանյանը սկզբնավորեցին ուելուցիոն պրոլետարական գրականությունը: Ուելուցիան արձագանք գտավ նաև մյուս գրողների ստեղծագործության մեջ: Հասարակական ընդհանուր վերելքի, ուելուցիոն մեծ մակընթացության կինարար շունչը արտահայտվեց նաև Ավ. Իսահակյանի պոեզիայում: Հաստատուն ու տեսական չեղավ այդ ազգեցությունը՝ իսահակյանի քնարի վրա. Երբ սկսվեց ուելուցիայի տեղատափությունը, յուրահատուկ տեղատափություն կատարվեց նաև լանաստեղծի ստեղծագործության մեջ: Բայց այն, ինչ նա գրել է ուելուցիայի ազգեցությամբ, այդ էլ պատիվ է բերում նրան, այդ էլ նրա պոեզիայի պայծառ էջբից է:

Այս շրջանում իսահակյանը մի պահ թողնում է ճշմարտության ապարդյուն որոնումները և տոգորված «անհուն վրեժի և ատելության» կրակով, սոցիալական կովի մարտակոչն է հնչեցնում՝ ընդդեմ տիրող կարգերի: Բանաստեղծը հայտարարում է, որ ինքը «չի բերում խոսքը հաշտության, որ ծանր է նստում գրեկվածի ուսին»:

Անհուն վրեժի և տանըլության
Պատգամն եմ վառում ևս ձեր սրտերում,—

* «Համեկ(ը)Պ պատմութ. համառոտ դասընթաց», էջ 84, 88—89:

ասում է բանաստեղծը և ապա դիմում է իրեն հարազատ շերտերին՝ պայքարի հրավեր կարդալով նրանց.

Կանգնեցնում եմ բազուկը ահա,
ինչպես ոխակալ օձն անապատի,
եվ քո քարացած բռունցքում հիմա
ես սուրեն եմ զնում ահեղ ճշմարտի:

Եվ քո սրաի մեջ վասում եմ ահա
Հուրն ազատության և իրավունքի:—
Կանգնեցնում եմ բազուկը ահա,
ինչպես ոխակալ օձն անապատի:

Իսահակյանի լիբիկայում ոռուական առաջին ուկոլուցիայի ուղղակի անմիջական արձագանքն են նաև նրա՝ «Հացի երգը» և «Լեռների լանջում . . .» բանաստեղծությունները՝ երկուսն էլ գրրած 1906 թվականին, երկուսն էլ սոցիալական պայքարի բուռն պափուն արտահայտող:

«Հացի երգը»* բանաստեղծության մեջ Իսահակյանը պատկերում է աշխատավոր դյուլացիության՝ վայրագ շահագործումը:

Արյուն ու քրտինք ծով-ծով թափեցի,
Ասկի արտերում արեմն-բոցին.
Եվ անձրեսի չափ արցունք թափեցի
Աւ արյուն քրտինք ի սեր չոր հացին:

...Ամենքն եկան իրենցն առան,
Ես մհացի աղքատ նորեն,
Չեռքս ծոցիս մերկ ի մորեն,
Չեռքս ծոցիս կուտ կը մուրամ
Իմ քրտինքով շեղած ցորնեն:

Բանաստեղծի «Հոգին այրված է» «անհուն վրեժի և ատելության» կրակով: Նա կոչ է անում՝ «իրենց քրտինքով շեղած ցորնեն կուտ մուրացողներին», աղքատ ու զուրկ» ժողովրդին՝ ոտքի կանգնելու և պաշտամանելու իրենց իրավունքը՝ շահագործողներից ու ճնշողներից:

Ե՛ւ, աշխատավոր, ստրուկ ժողովուրդ,
Եվ լուծող զցիր, եղիր ինքնիշխան,
Քրտինքիդ տերը մենակ դու եղիր,
Մւկեն կ'կորչեն աղա, խան, իշխան:
Աղատությունն է հացն այս աշխարհում.
Երգեցեք դովքը մեր հալալ հացին:

* «Հացի երգը» տպվել է միայն մեկ անգամ մամուլում՝ 1906 թ. սկզբին՝ «Հառաջ» № 22:

Աւշաղրավ է նաև մյուս բանաստեղծությունը, որն արտահայտում է բանաստեղծի վերաբերմունքը Առևական պուաջին ու ուղղուցիայի նկատմամբ: Բանաստեղծը ճիշտ է պատկերել իրեն: Քանի դեռ չէր բռնկվել ու ուղղուցիոն պայքարը, բանաստեղծը «կեռների լանջում, ծանր հողի տակ թաղված» էր զգում իրեն՝ «մեռած, մոռայված», բայց երբ օդը դղրդում է ուազմական շեփորի, մարտական երգերի ձայներով ու «զենքի շառաչյունով», նա ունինդրում ու լուս է «ըմբոստ ամբոխի ձայնը մըրկալից» և կամենում է ենել՝ մասնակցելու կույին:

Եվ հանկարծ մի օր լոեցի հեռվեց
Մարտահրավերը վեհ աղատության,
Ըմբոստ ամբոխի ձայնը մըրկալից,
Երգեր մարտական, շեփոր ուազմական,
Վառ դրաշակի խրոխտ ծածանում,
Զենքի շառաչյուն, ձիերի դոփյուն,
Քայլեր առնական
Հողիս մոտեցան,
Ել գողաց ահա,
Ել թեթևացալ
Հողը իմ վրա,
Եվ սիրտու լցվեց այրվող արյունով,
Ուղեցի ենել, նժույզն ամեհի
Խըթանել, թլունել, շառաչել զենքով,
Կըսվել ու մեռնել զաշտերում ուազիի...:

Վրա են հասնում ստոլիալինյան ուեակցիայի ծանր ժամանակ-ները. այս շրջանը ցալագին ազգեցություն է թողնում իսահա-կյանի քնարի վրա: Արագ անցնում ու լուս են ուղղուցիայի արձագանքները. հեռալոր հուշ են դառնում բանաստեղծի համար, իր սրտում՝ երթեմնի բռնկված պայքարի «կըսկը, որո-աը ու զայրույթը» և մարտի շառաչը:

Այդ արամագրությունն արտահայտված է հետեւյալ ոտանա-վլորում՝ զբանական ուեակցիայի շրջանի սկզբին: Ուշաղրավ է, սա-կյան, որ այդ բանաստեղծության մեջ կա գորկիական մի պատ-կեր՝ անկասկած «Բաղեյի երգի» ու «Մըրկահավի երգի» ազդե-ցությամբ հղացված:

Մոալ ամպերից հըղոր կայծակով
Սիրտը շանթահար մի մըրկահավ,
Որ սավանում էր, հըրճում փոթորկով,
Շովագինյա խոժոռ ժայռերին ընկավ,
Ծնկավ և ծածկվեց հօղով ու քարով,

**Թայլ Համեռու պատեց նրա շիրիմին
Եվ տարիք անցան համբը շարքերում...**

Բայց երբ երկնքում լրաբ դեմ ու դեմ
Եվ ծովի գրա բանակ առ բանակ
Աժակերն են խոնդում և որոտում են
Եվ սրտերի մեջ կրակ ու կայծակ.—
Նա լուռ հիշում է, որ տարիք առաջ
Իրա սրտումն էլ տեսչ կար ու կրակ,
Որոտ ու զայրույթ և սեր ու շառաչ:

**Իսահակյանը իրեն է համեմատում «Հղող կայծակով» «սիրութ
շանթահար մի մըրկահալի» հետո: Այս պատկերի մեջ զգացվում
է բանաստեղծի «տարիք առաջ» ապրած կրակը, որոտ ու զայ-
րույթ վերապրելու կարոտը:**

Այդ կարոտի ապրումը գեղեցիկ կերպով արտահայտված է
հետեւյալ ուժնյակում, ուր դարձյալ կա գորկիական պատկեր,
գորկիական մոտիվ:

Աղաս լեռների արծիվը մեկ-մեկ
Աղաս ազուալից ցածր կը թըռնի,
Սակայն դաշտերի աղոտիլը երբեք
Հըզոր թըռիչքին նրա չի հասնի:
Ինչքան թաթափիմ դարձ ճահճում կյանքի,
Հողիս չի զարթնի վանմ երազից,
Չի կորում մըթնում չողն արեգակի,
Տարձունքն ես դիտեմ, կը ճախրեմ նորից:

Ասացինք, որ ուելուցիայի ժամանակավոր պարտությունը
(իսկ մանր-բուրժուական ինտելիգենցիային դա թվում էր այլևս
անհուսալի ու մահացու) ցալագինորեն աղդեց Ավ. Իսահակյանի
տրամադրության վրա: Եթե ուելուցիայի վերելքի շրջանում
իսահակյանը լսեց «մարտահրավերը մեծ աղատության, ըմբոստ
ամբոխի ձայնը մըրկալից», լսեց ու արձագանդեց «անհուն վրեժի
և ատելության» մարտական երգերով, ապա ժամանակավոր
պարտությունից հետո, ուելուցիոն շարժման անկման և ժողո-
վըրդական մասսաների հոգնածության պայմաններում, Իսահա-
կյանը համակվեց խորը պեսսիմիզմով: Հուետեսությունը նախորդ
շրջաններում էլ անծանոթ չէր պոետին, բայց այս շրջանում
իսահակյանի գրեթե բոլոր երգերում անբուժելի վերքի մըրմուռն
է զգացվում, անհույս հիվանդի խոր հառաջանքը լովում: Բա-
նաստեղծը որոշ ժամանակ այլևս չի հավատում, որ իր սրտում
կարող է արշալույսը ծագել:

Արդուս արդեն մոռցած շիրիմ,
Արդեն դատարկ օրօրան—
Կը խարխափիմ, թող, ընկեր իմ,
Այսպես հասնեմ գերեզման*:

Երդում էր պոետը: Նրա երեւակայության մեջ մահվան տեսիլներն այժմ ավելի հաճախակի են դառնում: բանաստեղծը մտածում է իր մահվան, իր շիրմի ու շիրմաքարի մասին (1909):

Որտեղ է ընկած
Այն քարը հիմքի,
Որ հողիս վրա
Շիրիմ պիտ մինի:
Իմ թափառ կյանքում,
Մարդ ինչ իմանա,
Չեմ նստել, թափծել
Այդ քարի վրա:

Այդ մղձավանջային հուսահատության մեջ, սարկայն, բանաստեղծը մերթընդմերթ ոզի է առնում «և մոայլ աշխարհի», «ստրուկ աշխարհի» դեմ ըմբռստացման տրամադրությամբ համակվում: Նա զիմում է «լեռների արծվին» որ «հանգիստ ու հպարտ ճախրում է բարձրում».

Արծիվ սեաթույր, արծիվ լեռների...
Այս, նայիր՝ սիրացս—չըզթայված, գերի
Մարդկանց օրենքով, ստրուկ աշխարհում:
Աղաս միտք ու խոսք, աղաս երդ ու սեր
Ողջ բռնարարված ծաղրով անհոմքույր,
Թևերը հոգուս—աստղոտ երազներ,
Թռչնած, խորտակված, արծիվ սեաթույր:

Ահա այդ ստրուկ աշխարհից վեր է ուզում թռչել բանաստեղծը:

Ակնհայտ է, որ բանաստեղծի հուսահատ զայրույթի սլաքներն ուղղված են տիրող սեակցիայի գեմ, որին նա չի ուզում համակերպել, ինչքան էլ որ նրա վիրավոր սիրուը «շղթայված է» «ստրուկ աշխարհում»: Վիրավոր արծիվը նորից բարձր թռչելու մասին է երազում, ու նրան թվում է, թե արդեն սավառնում է, բայց ինչպես և ո՞ւր:

Թափ կուտամ թևերս և կը սավառնեմ
Խորքերը գեպի մեծ տիեզերքի.—
Արեներ խեմ—պատղամներ վեմ
Մի աղատ, պայծառ, մի նորոգ կյանքի:

* «Երդեր ու վերեր», 1908 թ., էջ 213:

Ոտանավորի վերջին տողերն ավելի են պարզում բանաստեղծի օդային թուչքի բնույթին և ուղղությունը.

Թափի կուտամ թեերս և կը սալսանեմ,
Վեր՝ ձեր օրենքից, բռունցքից դաժան.
Իմ անհասական ոլորտըս կողեմ,
Ուր կամքըս լինի օրենքըս մխայն....:

Այդպիսով՝ բանաստեղծը նորից ելք է որոնում՝ տիրող մռայլ խալարից դուրս գալու համար և այդ «ելքն» այս անդամ նա դտնում է «անհասական ոլորտի» մեջ:

Ինդիվիդուալիզմի տարրեր Խսահակյանի մոտ կային և նախորդ շրջանի ստեղծագործություններում, իսկ ոեակցիայի շըրջանում այդ տարրերը տիրապետող են դառնում և գրեթե ամբողջությամբ կլանում են բանաստեղծի միտքն ու հոգին: Ռեակցիայի շրջանումն է հատկապես, որ նրա պոեզիայում երևան է դալիս առանձնապես նիցշեական ինդիվիդուալիզմի որոշ ազդեցությունը:

Խսահակյանը մի պահ մոռանում է ժողովրդի «Հացի երգը», «անհուն վրեժի և ատելության» երգերը, արհամարհում է «ամբոխին»—այսինքն ժողովրդին և հարուսաների ու աղքատների հակադրության փոխարեն տեսնում է միայն կենդանական աշխարհին հատուկ գոյության կոփի—«ամենքը դեմ ամենքին»:

Կյանքն է պայքար գոռ ու դաժան,
Ժդմիր մարդուն ու թոփ վեր,
Իրալունքը ուժն է միայն,
Վայ հաղթվածին, հապար վայեր.
Տեր կամ սորուկ պիտի լինես,—
Ճշմարտություն չկա ուրիշ:

Զես սպանի, քեզ կսպանեն,
Դու սպանիր, քեզ չսպանեն:
Լուծ կամ լծկան պիտի լինես.—
Ճշմարտություն չկա ուրիշ:

Այսպիսով կյանքը բանաստեղծին պատկերանում է որպես մի ահռելի պատերազմի դաշտ, ուր «ամենքն են ամենքի դեմ» կովում, «սուր են սրում ամենքը դեմ ամենքին»:

Պետք է նկատել, սակայն, որ նիցշեական ինդիվիդուալիզմի ազդեցությունը Խսահակյանի վրա ամբողջապես չկլանեց նրան, նույնիսկ ոեակցիայի տարիներին: Խսահակյանի ինդիվիդուալիստական տրամադրություն արտահայտող նույն այդ մոտիվի բա-

նաստեղծություններում իտկ կան առողջ հատիկներ, որոնք նշում են բանաստեղծի անհաշտությունը, նրա ատելությունը տիրող սոցիալական կարգերի, տիրող գաղանային էթիկայի, բուժուած կան անասնական ինդիվիդուալիզմի նկատմամբ:

Իսահակյանը տեսնամբ է «կյանքի կովում ամենքը դեմ ամենքին», բայց չի արդարացնում, այլ դատապարտում է այդ «անարդար ստայքարը», «որ մզվում է ունեղների—շահագործողների կողմից՝ «խելու արնոտ հայց աղքատի բերնից», «ծծելու տանջված ճակատի վառ քրտինքը»:

Բանաստեղծը ծառանում է հասարակական այն սիստեմի դեմ, ուր արհամարհվում, ծաղրվում ու ոսնահարվում է այն ամենը, ինչ սրբազն է մարդ անվան համար: Նրա «հպարտ ճակատին» «վեհ կնճիւներ» են կուտակվել, նա աղնիվ զայրույթով է լցված «նյութի տաճարում արբեցողների», «ոզու վառ զեղմունք, միտք և երազանք» «լրբենի ծաղրով արհամարհողների» դեմ:

Բուրժուական աշխարհում տիրող նյութամոլությունը, ստորությունը, անասնական էդուկացին է հիսաթափեցրել բանաստեղծին մարդկանցից և աշխարհից: Բանաստեղծը մաքուր, վառ հավատով էր մտել աշխարհ, անհուն սեր տածելով դեսի մարդը և աշխարհը, բայց մարդիկ իրենց դաժանությումք հիսաթափեցրին նրան:

...եւ ես կյանք մտա...

Մաքուր, ջինջ հոգով ջերմ ողջունեցի

Բնկեր ու եղբայր—այս բոլոր մարդկանց.

— Ահա իմ սիրուր, աստցի նրանց.

Թող ձեր մեծ, հսկա, բյուր օրտերի հետ

Միասին բաղկան, թող մի սիրա լինի...

Եվ ես տանջվեցի նրանց տանջանքով,

Նրանց ցավերով հալուման եղա,

Բայց երբ ես հիմանե, անհույս վայր ընկա,

Նրանք ինձ մենակ, երեսի վրա,

Քցին, հեռացան...

Բանաստեղծի հիսաթափությունը կյանքից և մարդկանցից այնքան խորն է, այնքան «մեծ է տանջանքը», «որ «նրա աչքի առաջ» թվում ե թե

Ողջ կյանքն է ընկած, ինչպես պաղ դիակ...

* Ավ. Խասհակյան, «Բանաստեղծություններ», 1903 թ., էջ 31:

Իսահակյանի լիրիկան արտահայտում է խորը տանջանք, որի աղբյուրը՝ նրա փայփայած «լեռ երազի» և գաժան իրականության հակադրությունն է: Բանաստեղծին առանձնապես տանջում է այն միտքը, որ իր երգը արձագանդ չի գտնում մարդկանց մեջ և թափառաշրջիկ—անտուն, անհայրենիք թռչունի պես, «դլուխ գնելու մի տեղ» չի գտնում մարդկանց սրտերում, որովհետև «քար է աշխարհը», «չար են սրտերը» մարդկանց, «շուրջունզգացման»:

Անտուն թռչնակս, իմ խեղճ, տխուր երգ,
Դու իզուր թռար իմ սիրող սրանս.
Գլուխ գնելու մի տեղ զու երրեք,
Գիտեմ, չես գտնի, ինչքան թափառես:
...Թոիր, թռչնակս, գնա ու զտիր
Ազատ, սուրբ սիրո մի նորող աշխարհ,
Ուր մարդն է հսկարտ, անկեղծ, անոպատիր.
Եվ երդիր այնտեղ—այդ մարդկանց համար....

Բանաստեղծն անհաշտ հակամարտության մեջ էր մտել տիրող իրականության, աշխարհի ու մարդկանց հետ: Եվ ոչ միայն այդ բանաստեղծությունները, այլ ընդհանրապես իսահակյանի ողջ պոեզիան իր էյությամբ արտահայտում է կապիտալիստական աշխարհում շղթայլած մարդու հոգեկան ծանր ապրումներն ու տանջանքները, մարդու, որը տեսնում է, խորը գիտակցում իր վիճակի անտանելիությունը, իր շղթայլած լինելը, բայց ազատության ուղին չի տեսնում, չգիտե:

Իսահակյանն իր պոեզիայում ինքնաստիպ բանաստեղծական ձեերի ու արտահայտությունների մեջ պատկերում է նույն այն դրաման ու ողբերգությունը, որ ապրել են մինչդորիկիական—մինչպրոլետարական շրջանի բոլոր մեծ բանաստեղծներն իրենց անմահ երկերում: Իսահակյանն էլ տեսնելով տիրող իրականության անտանելիությունը, ընդհարման մեջ մտավ նրա հետ և աշխարհի, մարդկանց չարությանը նա պատասխանեց չարությամբ, իր անբուժելի վիրավորված, խոցված սրտում կուտակված ատելությամբ:

Չար է իմ հոգին, չարիքն եմ պաշտում,
Եվ մասյլ մենակ, —անհաղթ հզոր եմ:

Բանաստեղծը «հեռանում է» այդ հասարակությունից, նա մխիթարություն է փնտուում միայնության մեջ, մարդկանցից հեռու, անմարդաբնակ անծանոթ վայրերում: Այստեղից էլ պարզ

Էղառնում, թե ինչու Իսահակյանի լիրիկայում այնքան հաճախ
է կրկնվում անապատի պատկերը, ձգտումը զեսի անապատը:
Նկատենք, որ մարդկանց նկատմամբ ատելությունը և փախու-
տի տրամադրությունը շատ վաղ է երեան դալիս Իսահակյանի
մոտ: Այդ տրամադրությունը, սակայն, ուժեղանում է հետագա-
յում: Դեռ 90-ական թվականների վերջերին Իսահակյանը հյու-
սել է այս տողերը.

Եղ այս մոայլ, խոլ աշխարհում,
Այս քար ու փուշ ճամրեքով,
Դեպի արեն ենք մենք վազում,
Վառ արեր լույսի ծով*:

Հետագայում այդ «մենքը» «ես» է դառնում, իսկ «արելը»
մեծ մասամբ անապատ, ամայի վայրեր, ուր մարդ չի բնակ-
վում և ոտք չի դրել:

Դեռ 900-ական թվականների սկզբին (1903 թ.) բանաստեղծն
իր «քարավանով» «օտար» «ամայի ճամրեքի վրա» է և գնում է
դեպի անհայտ հեռուն:

Գնա, քարավանս, ինձ հետք քաշ տուր,
Օտար, ամայի ճամրեքի վրա.
Ուրակդ կհողնես, զլուխս զեր վար —
Ժեռ-քարերի մեջ, փրչերի վրա...**:

Հաջորդ թվին (1904) գրած իր մի բանաստեղծության մեջ
բանաստեղծը և՛ տիրությամբ և՛ զայրութով ասում է, որ իր
«լացը թող քամին տանի».

Անկոծ ծովեր, անապատ մի վայր,
Սակայն մարդու մոռ... երբեք չտանի...***:

Այդ հեռացման տրամադրությունը չի անցնում մինչև իսկ
ունուցիայի տարիներին (1905—1906 թ. թ.), երբ բանա-
ստեղծն արձագանեց համաժողովրդական պայքարին:

Ահա, օրինակ, 1905 թվին նա գրել է հետեյալը.

Բաղերը վայրի թռան շվարած.—
Ո՞վ է արշավում մոայլ գիշերով.
Մըրեկի նման նժույգին նստած—
Ես եմ սկանում նիրհած դաշտերով:

* «Աղբյուր» 1898 թ. № 5—6:

** «Բանաստեղծություններ», 1930 թ., էջ 33:

*** Նույն անգամ, էջ 27:

Այդ բանաստեղծն է, որ ատելի իրականությունից—երկրից թոշում է «լեզվի աստղերն անշեն» և սիրտն իր բաց անում «անհունության գեմ»։ Նա փախչում է մարդկանցից, թունավոր ատելությամբ ու զգվանքով հիշում նրանց մասին։

Գծուծ ու նանիր մարդկանցից հեռու,
Վախկոտ, նենդամիտ, կեղծ ու դավաճան,
Ստոր ու ստրուկ աշխարհից հեռու,
Եյութին միշտ գերի, ապահ ստության։
Աշխարհը չարժե քո արտասուրին,
Եվ կինն ու ընկեր զգվանքիդ այդ ծով,—
Անասդատ զնա—սիրիր վագրերին,
Եվ այրվիր անմահ արևի սիրով...*:

Այս մոտիվները նախապատրաստում են բանաստեղծի ստեղծագործական և հոգեբանական—իդեական անցումը «Արու-Լալա-Մահարի» պոեմի ստեղծմանը։

Աշխարհից անհունաչափ դժգոհ բանաստեղծը վճռում է դուրս դալ այնտեղից, բայց նա այդ անում է ակամա, երբեմն հետ նայելով, անհուն ափսոսանք զգալով իր սրտում։

Օտար, ամայի ճամբեքի վրա
Իմ քարտվանո մեղմ կը զողանջե.
Կանզնիր, քարավանս, ինձի կը քվա,
Թի հայրենիքն ինձ մարդ կը կանչե**։

Այսպես ուրեմն, աշխարհից—մարդկանցից հետացող բանաստեղծին մի պահ թվում է, որ իրեն իր հայրենիքից են կանչում։ Այդ նշանակում է, որ բանաստեղծը դժվարությամբ է թողնում հայրենիքը։

Իսահակյանի լիրիկայում հայրենիքը հիմնական թեմաներից մեկն է։

Իսահակյանը մեծ հայրենասեր է։ Անժխտելի է, որ նրա պահպիսի հայրենասիրական մոտիվներում մեկ-մեկ երեացել են խորի նոտաներ, որպես հետեանք բուրժուական նացիոնալիստական իդեոլոգիայի ազգեցության («Մեր ճակատագիրը» և այլն)։ Բայց նրա հայրենասիրությունը իր հիմնական բովանդակությամբ ժողովրդի հայրենասիրությունն է՝ ուղղված հայրենիքը թե՛ արտաքին և թե՛ ներքին—ազգակից ճնշողների դեմ։ Իսահա-

* «Բանաստեղծություններ», էջ 192։

** Նույն տեղում, էջ 33։

Հյանն անհունորեն սիրել է իր հայրենիքը և միշտ Երազել նրա ազատագրման մասին՝ ցարիզմի և սուլթանիզմի լծից:

Բանաստեղծի հայրենիքը տանջվում էր օտար լծի տակ. «ցարական Ռուսաստանը ժողովուրդների բանտ էր: Յարական Ռուսաստանի ոչ-ռուս ժողովուրդները կատարելապես իրավագուրկ էին, շարունակ ենթարկվում էին ամեն տեսակ անարդանքի և վիրավորանքի: . . . Յարական կառավարությունը ձգտում էր խեղդել ազգային կուլտուրայի ամեն մի արտահայտություն, վարում էր ոչ-ռուս ազգությունները բռնությամբ «ռուսացնելու» քաղաքականություն: Յարիզմը հանդես էր դալիս որպես ոչ-ռուս ժողովուրդների դահիճն ու տանջողը»*: Խստհակյանն ահա՝ չնայած ժանդարմական հետապնդումներին, հանդես էր դալիս ցարիզմի, նաև սուլթանիզմի արյունոտ քաղաքականության դեմ, Երգում իր ճնշված հայրենիքի փառքն ու դեղեցկությունը, երազում նրա ազատությունը:

Նրա հայրենասիրական բանաստեղծությունները մեծ ժողովրդականություն են վայելել:

Ահա նրա «Ել, ջան հայրենիք» ժողովրդականացած գեղեցիկ լիբրիկական բանաստեղծությունը (1908թ.), որը ոչ միայն բանաստեղծի անձնազոհ սերն է արտահայտում դեպի հայրենիքը, այլև պատկերում է հայրենի գեղեցիկ բնությունը, նրա անպատճենակը և վառ երազանքը նրա աղատության մասին:

Իո հողին մեռնեմ, անդին հայրենիք,
Ախ, քիչ է թե որ մի կյանքով մեռնեմ,
Երնեկ ունենամ հազար ու մի կյանք,
Հաղարն էլ որտանց քեզ մտուալ անեմ**:

Խստհակյանի պոելիայում հայրենիքի անհուն կարուր կա, մի աղբում, որ առաջացել է բանաստեղծի պանդխտության պայմաններում:

Այդ կարուտն արտահայտվել է բազմաթիվ բանաստեղծություններում: Ահա կարուտի մոտիվի մի նմուշ 1903թ. դրված-ներից.

Իմ հայրենիքին կարոտ մնացի,—
Օտար աշխարհում խեղճ որբի նման,
Անտուն ու անտեր լուռ թափառեցի,
Մեն-մենակ, անօք ու անօդնական...***:

* «Համեկ(ր)կ պատմութ. Համառոտ դասընթ.», 1938թ., էջ 7:

** «Երդեր ու վերքեր», 1908թ., էջ 137:

*** «Մուրճ», 1903թ. № 10, էջ 131:

Բացի կարոտից, գովքից և սպատագրական երազանքից, կանակ կովի կոչ։ Բանաստեղծը մարտի կոչ է հնչեցրել ընդդեմ օտարերկրյա բռնակաների հանուն ժողովրդի—հայրենիքի ազատության։ Այդ կոչի մեջ նա արտահայտել է իր ժողովրդի ազատալիքու իրավունքն ու արժանապատվության զգացմունքը, որ ստնահարված էր ցարական և սուլթանական բռնակալությունների կողմից։

Վաս կածմիր հաղիք դու, հայ ժողովուրդ,
Եվ սուրդ շարժե, քեզ ճանապարհ բաց。
Այս աշխարհի մեջ սուրն է միշտ կարող.
...Ու ոտքդ ամուր դու խփիր երկրին,
Հողիդ ու տանդ տերը դու եղիր,
Եյ, դու արևի ճամբորդ վաղեմի,
Մըով, զոտեպինդ և հառաջ անցիր...*:

Այսպիսով բանաստեղծը ձգտում է մի հիմնական նպատակի, այն է, որպեսզի հայ ժողովուրդն ինքն իր ձեռքով վշրի բռնության, արտաքին ճնշման շղթաները և տեր դառնա իր սեփական տանն ու հողին։

Թե ինչքան տարբեր է իսահակյանի հայրենասիրությունը, ասենք, օրինակ, պատկանյանական հայրենասիրությունից, տարբեր իր էությամբ ու բնույթով, բավական է հիշել Պատկանյանի հայտնի «Կտակը» «սուրբ էջմիածնուութ թազվել» ցանկանալու մասին և այն համեմատել իսահակյանի՝ «Ես որ մեռնեմ...» երկտուն ոտանավորի հետ։ այս ոտանավորում շատ վառ կերպով արտահայտված է իսահակյանի հայրենասիրության գյուղացիական-ժողովրդական էությունը։

Ես որ մեռնեմ, ինձ կթաղեք
Ալագյազի լանջերում.
Որ Մանթաշի հովերը դան,
Վրաս հւեսն ու երթան:
Գերեզմանիս չորս դին փովեն
Ցորեն արտերն ու ցոլան.
Եվ ուսիներն, մազերն հովին,
Վրաս ընկնեն, անուշ լան...**:

Դրեւ է բանաստեղծը 1899 թվին։

Իսահակյանի հայրենասիրության աղբյուրը հայրենի երկրի գեղեցիկ բնությունն է, նրա հողն ու ջուրը, նրա աշխատավոր

* «Մուրճ», 1903 թ., № 1:

** «Բանաստեղծություններ», 1903 թ., էջ 85։

Ժողովուրդն իր վշտահառաչ կյանքով ու դարավոր պայքարով հանուն ազատության :

Կանգնած լինելով գեմոկրատիզմի, ժողովրդի շահերի պաշտպանության դիրքերում, Խսահակյանն իր ճնշված ժողովրդի ազգային ազատագրության գործը չի հակադրել հարեան ժողովուրդներին:

Դեռ ոռւսական առաջին ռեռլուցիայի նախօրյակին՝ 900-ական թվականների սկզբին Խսահակյանը հնչեցրել է ազգային ազատագրական պայքարի զանդը Կովկասի ժողովուրդների համար։ Նրա նշանավոր «Ազատության զանգ» (գրված 1903 թվին) բանաստեղծությունը կովկասյան ճնշված ժողովուրդների ազատագրական կովի մարտակոչն է, «անհագ վրեժի և ըմբռոստացման», «սրբազն ռազմի շեփորի գոչյունը» ոռւսական ցարիզմի դեմ՝ ազգային ճնշումների կապանքը վշրելու ողով։

Բանաստեղծը ձայն է տալիս, հրավիրում է «ըմբռոստ ոգիներին» «թե առնելու» և զանգահարելու՝ «զանդ ազատության» «Կովկասի համար հանուր, ընդհանուր»։

Եվ ազատության նորող արել
Ոսկի ներբուզը, Զանդ, զվարթ հնչե,
Բյուր զագաթներից աղօստ Կովկասի
Սուրբ եղբայրության առնին մեղ կանչե։

Սովորական ազատ հայրենիքի կախարդանքը Խսահակյանին վերջնականապես օտար աշխարհից վերադարձեց, բերեց տուն, ուր նա իր վերածնված «ազիզ հայրենիքի» գովքն է երգում, ակտիվորեն մասնակցում ժողովուրդների երջանիկ կյանքի կառուցմանը, իր ազատ, «ստեղծագործ ժողովրդի» հետ միասին վայելում իր երազած՝ ժողովուրդների «սուրբ եղբայրության առնի» անհուն հրճվանքը։

Խսահակյանին ամենից շատ հուզող թեմաներից մեկն է սերն է։ Մերը, սիրո զգացմունքը Խսահակյանի կախարդական նրբալար քնարի ամենահիմնական մոտիվներից մեկն է, երբեք չլուզ մոտիվ, որ հնչում է նրա քնարից՝ սկզբից ևեթ։ Միրո երգերով է սկավում նրա պոեզիան։ Բանաստեղծի առաջին ժողովածուի (1898 թիվ), «Երգեր ու վերքերի» լեյտոնոտիվը սերն է, սիրո երջանկության ու բուռն կարոտի, նաև սիրո արածության, վշտի ու տանջանքի զգացմունքով են առգործած այդ ժողովածուի գրեթե բոլոր բանաստեղծությունները։

Միրո զգացմունքն, ըստ բանաստեղծի, մի անհաղթահարելի

Հզոր ուժ է, և այն էլ «անքննին ուժ», որը թե՛ երջանկության և թե՛ տանջանքի անսպառ աղբյուր է:

Սիրո մոտիվն այնքան ուժեղ է իսահակյանի պոեզիայում, որ նրան թվացել է, թե ինքը միմիայն սիրո երգիչ է, թե իր քնարի բոլոր լարերը մի գիշեր կտրատվեցին և միայն «սիրո լարը մնաց». բնորոշ է, որ այդ միտքն արտահայտող ոտանավորը բանաստեղծի առաջին «Երգեր ու վերքերում» (1898) տպվել է «Հառաջարանի տեղ» վերնագրով: Ահա այդ ոտանավորը.

Ես վեր ելու ոգի առած,
Զարկի սրտիս լարերին.—
Սիրոս խնդաց, կուրծքս թնդաց—
Եվ լարերը կորվեցին...

— Մենակ սիրո լարը մնաց
Սրտիս անհուն խորքերում,
Մենակ սիրո երգը չողաց
Կյանքիս ամեն ծալքերում*:

Այս ոտանավորը գրված է 1895 թվին, բանաստեղծի ստեղծագործության առաջին շրջանում, երր իրոք, նրա քնարի միայն «սիրո լարն» էր բարձր հնչում: Մենք վերևում արդեն տեսանք, որ իսահակյանի քնարը ուրեմն լարեր էլ ունի, որ բանաստեղծի սրտին այնքան նվիրական այդ լարի հնչյունները նոր խմասու են ոտանում նրա պոեզիայի հետագա զարգացման ընթացքում:

Քուչակի ու Սայաթ-Նովայի սիրո լիրիկան վերակենդանացել է իսահակյանի քնարի վրա և հնչում է նոր ուժով ու նոր երանգներով:

Իսահակյանի մոտ սիրո մոտիվն սկզբում երևան է գալիս միանդամայն անկախ հասարակական միջավայրի պայմաններից:

Այս շրջանում բանաստեղծն արտահայտում է սիրո երջանկության ու կարոտի գգացմունքը: Նա ինքնամոռացման մեջ «անտուն գիշերներ, անքուն գիշերներ» է անցկացնում, իր սիրության սրագության ու կարոտի գգացմունքը: Նա սիրության առաջական մեջ «անտուն գիշերներ, անքուն գիշերներ» է սպասում է սիրո երջանկության օրիգան: Նա սիրում է իր սիրուհուն անսահման սիրով: Եթե սիրուհին սիրող տղայի հոգին ուղի, սա չի մերժի, կտա: «Հոգիս կուգես, հանեմ տամ քեզ»—ասում է բանաստեղծը: բայց՝

Վախճան թե աչերս ուղես,
Էլ ինչով նայեմ ես քեզ**:

* «Երգեր ու վերքեր», 1898 թ., էջ 10:

** Նույն տեղում, էջ 31:

Սիրող տղայի նվիրվածությունն իր սիրած էակին արտա-
հայտված է ավելի մեծ ուժնությամբ հետեւյալ տղերում.

Քու կարոտով սիրոս լիփ-լիք,
Ես հալ ու մաշ թել դառա,
Օրեր անցան, տարիք անցան,
Շուշը եղա, ման եկա*:

Բայց սիրած աղջիկը չի արձագանգում բանաստեղծի սիրուն:
Նրա «Հոգին էս քարի պես ժեռ է», «Էս այրի պես լուռ ու
մութ»: Եվ բանաստեղծն հետո ուշքի է դալիս, որ զուր են եղել
իր նվիրական ապրումները, «անոռուն, անքուն գիշերները»: Ու
այնուհետև ուև դիշերն է իջնում բանաստեղծի սրտի վրա: Նրա
սիրո երգերն հեղեղվում են մերժված, անմուրազ սիրո չմարող
վշտի հորդ արցունքով: Բանաստեղծի սրտում անբուժելի, գեղ-
դարման չունեցող վերք է բացվում:

Սիրուս արցունքով աշխարհ թաթախվեց—

ասում է բանաստեղծը:

Սիրո երջանկության սպասումի զգացումը փոխվում է տան-
ջանքի զգացման, երբ նա տեսնում է, որ իր սիրած աղջիկը շըր-
ջապատվում է «հարուստ տղաներով»:

Այստեղ աշա սիրո անհատական վիշտը միախառնվում է
հասարակական վշտին, սիրո մոտիկը դառնում է քաղաքացիական
լիրիկայի մոտիվներից մեկը:

Բանաստեղծը տեսնում է, որ «աղքատ մարդկանց» «փայտ չկա
աշխարհից» ոչ միայն նյութական, այլև բարոյական կյանքում:
Բավական չե, որ

Հարուստ մարդիկ կուտեն-խմեն
Աշխարհի ճոխ սեղանից—

Նրանք միաժամանակ, իրենց հարստության չնորհիվ, աղքատին
զրկում են սիրո երջանկությունից:

Զէ որ բուրժուական հասարակակարգում և՛ նյութական, և՛
բարոյական բոլոր հարստությունների մարմնացումն ու չափա-
նիշը-դրամը՝ Մարքսի արտահայտությամբ ասած՝ «բոլոր կա-
պերի կապն է»: «Նա է, որ կապում և արձակում է ամեն տեսակի
կապերը»: Դրամը բուրժուական հարաբերությունների, բուր-
ժուական «հասարակության դալվանո-քիմիական ուժն է»: Պետք

* «Երգեր ու վերքեր», 1908 թ., էջ 14:

է նկատի ունենանք և այն, որ բուրժուական հասարակակարգում կինն իրավազուրկ է մինչեւ ամուսնանալը՝ աղջիկը ծնողների գերին է, իսկ աղջկան կնության տալը, ամուսնությունը «մի դործարք է, որ կնքում են ծնողները» (Ֆ. Էնդելս), գործարք, որի հիմքը ոչ թե ամուսնացող զույգի փոխադարձ անկեղծ սերն է, այլ մեծ մասամբ նյութական ապահովության հարցը։ Հասկանալի է, որ այդպիսի պայմաններում ապատ, ինքնարուի, բնական սեր ընդհանուր առմամբ գոյություն չունի, «բուրժուազիան պատուեց սրտաշարժ սանտիմենտալ քողը ընտանեկան հարաբերություններից և դրանք վերածեց զուտ դրամական հարաբերությունների»*, գրել են Մարքսն ու Էնդելսը։ Այդ պայմաններում, ահա, մեծ մասամբ անկախ ամուսնացնողների կամքից ու ցանկությունից «ծնողներն էին ամուսնություն կնքում իրենց երեխաների համար» (Ֆ. Էնդելս), իսկ աշխարհիկ ու եկեղեցական օրենքն էլ հաստատում ու անխախտելի համարում այն (թեև իրականում այդ «օրինական» ամուսնությունը խախտվում էր ամենաայլանդակ ձեւերով ու ողբերգական հետեանքներով)։ Այստեղից էլ բղխում է սիրո այն համատարած դրաման ու տրագեդիան, որ պատկերված է բաղմաթիվ մեծ ստեղծագործողների երկերում։

Իսահակյանն էլ իր սիրո լիրիկայով մտնում է այդ մեծ ստեղծագործողների շարքը, որովհետեւ նա էլ իր մեծ տաղանդի գերող ուժով վառ կերպով պատկերել է սիրո ողբերգությունը հին հասարակության մեջ։

Իսահակյանի ապրած անմուրազ սիրո տանջանքը սոսկ մի անհատի, իրա՝ բանաստեղծի տանջանքը չէ։ Եթե այդպես լիներ, ապա Իսահակյանի (և ոչ միայն Իսահակյանի) սիրո լիրիկան, որ ցողված է անհուն վշտի արցունքով, նրա սիրո «երգերն ու վերքերը» բաղմաթիվ ընթերցողների վրա ներգործելու, նրանց հուզելու ուժ չէին ունենա։ Իսահակյանի սիրո երգն ու վերքը իր ժամանակի աշխատավորության երիտասարդ սերնդի սրտի երգն ու վերքն է։

Անթիվ անմուրազ երիտասարդներ Իսահակյանի լիրիկայում վերապրել են իրենց սեփական կյանքը, իրենց գերախոտ, անուրախ սիրո պատմությունը, կարդալով հետեայալ տողերը։

* Կոմ. պարտ. ժանիֆեստը, 1938 թ., էջ 40։

Սիրեցի, յարս տարան,
Յարա տիլին ու տարան.
—Էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Պոկեցին սիրսո ու տարան:

Ցավոս խորն է, ճար չը կա,
Ճար կա, ճար անող չը կա—
—Էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Սրացավ ընկեր չը կա:

Բանաստեղծը ցավով է հայտնում, որ սիրո երդի համար
«վայել վայր չկա» իր ապրած «փուշ աշխարհում, քար սրտերի
մեջ».

Դու օտար թռչուն, ժեռ քարերի մեջ,
Դու կյանք, դու տանջանք, —չուրջըդ անզգա...:

Այդ նույն միտքն ու զգացումն ալելի վառ է արտահայտված
Հետեւալ քառյակներում —

Ախ, մանկուց լացեց քո սերը, սիրս իմ,
Ոչ ոք չհասկացավ երազդ աղջոր.
...Հանիր քա սերը սրբահցըդ անհույս,—
Այդ խորք, ապօբեն զավակն աշխարհի.
Զգիր այս զաժոն, մութ ուշերին զուրս՝
Ցուրտ քամու բերան... թող երթա սառի...:

Իրավացի է բանաստեղծը. այն հասարակակարգում, ուր
«մարդու անձնական արժանապատվությունը վեր էր ածվում
փոխանակային արժեքի», ուր մարդկայնությունը «խեղդվում էր
անսիրա» «կանխիկ հաշվի», «Եսամուլ հաշվիս սառցային ջրի մեջ»*,
այդ հասարակակարգում մաքուր, անկեղծ սերը՝ «խորթ, ազօ-
րեն զավակն» էր աշխարհի:

Այդպիսով, Խոսհակյանի առանձին վերցրած սիրային լիրի-
կան ևս ոչ միայն բարձր գեղարվեստականությամբ է օժտված.
Դրա հետ միասին այդ լիրիկան ունի նաև հասարակական խմա-
ցական արժեք:

Բանաստեղծի սիրաը չար տրամադրությամբ է համակվում
կնոջ նկատմամբ: Նրա մենասիրությունն էլ, իրեն մենակ զգալու
և մարդկանցից—աշխարհից առանձնանալու զգացումը մասամբ
բղխում է սիրո անհաջողությունից.

* «Կոմ. պարս. մանիքեսոս», էջ 46:

Անց ու գարձող ինձ չի նայում,
Իսկ ես սիրու ծով-ծարավ եմ.
Ծարավ սիրս վշեք բռւցուց,
Հիմա չար եմ ու նախանձ եմ:

Եվ բանաստեղծն իր այդ «չար» տրամադրության ամրող ուժով չար խոսքեր է ասում ընդհանուր առմամբ կնոջ հասցեին: Զրկվելով սիրուհուց, բանաստեղծն իրեն զրկված ու կտրված է համարում աշխարհից.

Զառ հույսելով, անմահ սիրով
Ես քեզ խորոնկ սիրեցի.
Ասող ու երկինք—սերս ու սիրոս,
Ռաներիդ տակ փոեցի.
Սեր չովիք, ու աշխարհեն
Սիրոս կըսրավ, Շուշան ջան —

ասում է բանաստեղծը: Դրանից հետո աշխարհում, կյանքում ամեն ինչ խորթ է թվում նրա աչքին, նույնիսկ իր «ազիզ հայրենիքը»:

Աս, հայրենիքս ինձ խորթ է հիմա,
Ու քնքույշ սերս ուրիշի զրկում:

Երբեմն խորը չթափանցելով իրականության մեջ, չկարողանալով բացատրել ակրող բարոյականության սոցիալական արմատները, չտեսնելով կնոջ սոցիալական ստրկության պատճառները, բանաստեղծն իր անմուրադ սիրուց առաջացած բարկությունը թափում էր կնոջ վրա:

Ես չեմ հավատա կնոջ երդումին —

ահա այս միտքն է արտահայտված իսահակյանի շատ ոտանակություն:

Կնոջն ուզեցի հավատալ նորից,
Լալ ու երազել առաջլա նման.
Բայց այրունություն ինդ սիրոս նորից
Եվ որք մնացի, և թափառական (63):

Իր լավ հույսերը, իր երջանկությունը, իր ողջ կյանքը նա խորստակլած է համարում սիրած, բայց կորցրած կնոջ պատճառով:

Վառ աստղերը երկնից ընկան,
Վարդ ու չուշան թառամեց.
Աս, իմ կյանքս, անուշ կյանքս,
Կտոր-կտոր փշովից (32): —

Երգում է բանաստեղծը: Սակայն բանաստեղծն իր հոդու մեջ փայփայում է անկեղծ, վոխաղարձ անձնվեր սիրո լորեան:

Իրական սիրո ողբերգությունից իսահակյանի միտքն անցնում է սիրո ռումանութեային:

Շրջապատող «փուշաշխարհում»—«... մաքուր սերը երազ է միայն»—ասում է բանաստեղծը: Եվ այդ երազն էլ հենց դառնում է բանաստեղծի մխիթարանքը իր ապրած «աղջոր կյանքի ափերին»:

Բանաստեղծի հոդին անհուն ատելությամբ է լցվում այն աշխարհի գեմ, ուր մարդն անաղատ է, «ինչպես մի թռչուն, անդուռ ու անել մեծ վանդակի մեջ»: բայց նա չի դադարում սիրելուց, այլ երազում է «հայերժական սիրո» մասին: Բանաստեղծն իրեն է պատկերում իր փայփայած «հայերժական սիրո» երազանքով՝ հետեւյալ ոտանավորում:

Անապատում, միքամի մեջ մի բեզվին

Շողքն է տեսել մի աղջևկա զեղեցիկ,

Եվ վեճուռում է հոգեսըլաց, տենչաղին

Ծովկարոտով այն աղջրկան զեղեցիկ:

Եվ ծարավուտ անապատում հըրավառ,

Տատասկներում, արևի տակ բոցափայլ

Փնտոռում է նա նրան անվերջ, անդադար,

Եվ մեռնում է վեհ սիրո մեջ հոդեղմայլ:

Եվ քնի մեջ—աննյութական, անվախճան,

Տեսնում է նա այնպես քնքուչ ու սիրուն

Շողքը չփնադ այն նաղելի աղջկան

Եվ գնառում է նրան հայերժ երազում...:

Ինչքան էլ բանաստեղծը վիրավորվել ու զայրացել է մերժված, խարխած սիրուց, չարացել՝ մաքուր, անկեղծ սերն արատավորող կնոջ նկատմամբ, այնուամենայնիվ նրան միշտ թվում է, թե կա մի ազնիվ սիրո, որ վշտակցում է իրեն:

Այս երազանքի պատուղն են իսահակյանի սիրային լիրիկական պոեմները՝ «Հայերժական սիրը» (1914 թ.) և «Ասպետի սերը» (1917): Այդ երազանքն է բանաստեղծին մղել դեպի ժողովրդական սիրավեպերի և սիրային ավանդությունների մշակումը՝ «Լեյլին և Մեղլումը» (1910), «Իմ վիրին» (1893 թ.), ինչպես նաև գրել «Ալագյաղի մանիներ» շարքը (գրված 1895—1917 թ. թ.), որ «Հայրենի աղբյուրից» ժողովածվում (1920 թ.) տպվել է իր ըն պոեմ՝ «Մանթաշի փերին» վերնագրով: Այդ ստեղծագործու-

թյուններն իսահակյանի սիրո ռոմանտիկայի արդյունքն են։ Բանաստեղծն իր «Հավերժական սիրո» երազանքն արտահայտել է Հատկապես «Հավերժական սերը» պոեմում և «Լեյլի ու Մեջլում» ժողովրդական սիրավեպում։

Ի՞նչ իմաստ ու արժեք ունի սիրո ռոմանտիկան մինչսոցիալական պոեզիայում, մի ռոմանտիկա, որը մեր գրականության մեջ բացառիկ պայծառությամբ ու գեղեցկությամբ տվել է Ավ. Իսահակյանը։ արդյոք «Երանով նա ուզում է իր սիրո գատարկությունը լցնել»—ինչպես կարծվում է մեր քննադատության մեջ։ Այդ մասսամբ է միայն ճիշտ։ Բայց դա սիրո ռոմանտիկայի նայիլ բացառություն է։ Այսպես մոտենալով հարցին՝ մինչայժմ յան քննադատությունը արժեքազրկել է սիրո ռոմանտիկայի պոեզիան, որը նշանակալից տեղ է զրավում ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականության մեջ։ Սիրո ռոմանտիկայի ճիշտ, գիտական մեկնաբանությունը տվել է սոցիալիստական էսթետիկայի հանճարեղ տեսարան Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկին։ «Անհատական սիրո ռոմանտիզմի հանի խորը կուլտուր-դաստիարակչական իմաստ,—այն արտահայտում է տղամարդու ցանկությունը՝ կնոջ նկատմամբ ունեցած վերաբերմունքի մեջ սահմանել ինչ-որ բան, որ երկուտանի արուին տարբերում է չորքուտանուց։ Այդ ցանկության հողի վրա երեակայության ուժը օգնել է մարդուն (երկու սեռին էլ պատկանող) իր մեջ մշակելու ներքին բիոլոգիական ձգտում դեպի» կնոջ նկատմամբ ունեցած վերաբերմունքի այդ «ինչ-որ բանի» «ձեփի կատարելազործումը, այսինքն՝ սեռական էսթետիկայի (սեքսуալիա էստետիկա) ստեղծումը։ Բայց անարխիկ հասարակության պայմաններում (այսինքն՝ հատկապես կապիտալիզմի, բուրժուազիայի տիրապետության պայմաններում։ Ա. Ա.) այդ ձգտումը գեռեարտահայտության պատկան է միայն գեղեցիկ խոսքերում, իսկ գործնականում արգեն հանգում է կրքերին սանձարձակ հագուրդ տալուն։ Զնայած կնոջ ուժեղացող, նույնիսկ զահլատարության հասնող պուտիզացիային, նրա նկատմամբ շարունակում են վերաբերվել անասնաբար և որպես «երկրորդ տեսակի» մարդու։ Մենք գետենք, որ եկեղեցին ի սկզբանն անտի սերն անվանում է «անառակություն», մեղք, և գիտենք, որ բուրժուական հասարակության մեջ ամեն մի գարշելի քաղքենի ցանկանում է լինել ստըր-կատեր, իսկ կնոջից, եկեղեցու օգնությամբ, հեշտ է շատ հար-

մար ստբկուհի դաստիարակել սովորելը»*: Մաքսիմ Գորկու այս խմաստուն բացատրությունները լրւյա են սիուում անցյալի մեծ բանաստեղծների ստեղծած սիրո լիրիկայի վրա, ցույց տալով այդ լիրիկայի «խորը կուլտուր-դաստիարակչական իմաստը»: Մեր կլասիկ պոեզիայի մեծ վարպետներից մեկի՝ Ավ. Իսահակյանի սիրո լիրիկան, ըստորում և նրա սիրո սոմանտիկան, ահա այդպիսի իմաստ ու նշանակություն ունի: Իսահակյանի սիրո լիրիկան հասարակական-բարոյական տեսակետից մաքուր և անկեղծ, բարձր մարդկային ազնիվ զգացմունքներով է առողորված, հիմնականում առողջ և գերծ՝ կոնջը հասարակականորեն ու բարոյապես ստորացնող տենտենցներից:

Ասացինք, որ Իսահակյանի պոեզիայում չարասիրու խոսքեր են ասված կնոջ հասցեին (դրա ցայտուն նմուշն է «Արու-Լալա-Մահարի» պոեմը), բայց օրյեկտովորեն Իսահակյանի զայրութը կանանց դեմ՝ ուղղված է կնոջ նկատմամբ սեփականատիրական հայացք ունենալու դեմ:

Ֆրեդրիխ Էնդելսն իր մի աշխատության մեջ նկատել է, որ սեփականատիրական հասարակությունում մաքուր-սեռական սերը կնոջ նկատմամբ... «գոյություն ունի միմիայն ճնշված դասակարգերի մեջ»—առավել ևս կապիտալիզմի, բուրժուական քաղաքի անառակ բարքերից ազատ գյուղում, նահատակետական պարզ կենցաղի պայմաններում, մասնավորապես հովիվների մոտ: «Այն հովիվները, որոնց բերկանքներն ու տանջանքները երգել են թեռկրիտն*** ու Մոսկովս****, Լոնդոնի***** Դաֆնին ու Ալյոն-բոլորն էլ ստրուկներ են, որոնք մաս ու բաժին չունեն պետության, ազատ քաղաքացու այդ կենսական ոլորտի մեջ»*****—դրել է Էնդելսը:

Հենց ճիշտ այլպես, «Էելլի և Մեջում», «Սիրահար Նադոն» գրպածքներում Իսահակյանը մաքուր-սիրային հարաբերություններ տեսնում է նահապետական-գյուղական, հովվական կյանքում: Իսահակյանին շատ հարազատ է ժողովրդի ստեղծած սիրո սոմանտիկան, որն արտահայտում է սիրո հավերժության իդեան:

* М. Горький, О литературе, 1935 г., стр. 99—100.

** *** **** Թեռկրիտը, Մոսկովս և Լոնդոնը հին հանական բանաստեղծներ են, առլրած 3-րդ—2-րդ գարերում մեր թվականությունից առաջ. «Դաֆնին ու Ալյոն» Լոնդոնի գրչին պատկանող հովվական սիրալեզն է:

***** Ֆ. Էնդելս, «Բնատանիքի, մասնավոր սեփականության և պետության ծառումը», էջ 88, 1932թ.:

ԱԵՐԻՆ և ՄԵՎԼՈՒՄԸ ԺՈՂՈՎՐԴԻ պատկերացման մէջ «Հայլերժական սերն» են մարմնացնում։ Եվ հենց այդ էլ գրալի է սիրո ժողովրդական երգչին, որը մշակել է ժողովրդական այդ սիրավեպը։

Սիրային լիրիկայի բնադավառում իսահակյանը յուրացրել է ոչ միայն ժողովրդի ստեղծագործական ձևերը, այլև իդեական ազգեցություն կրել նրանից։ Իրական սիրո իդեալի պատկերացումը իսահակյանի լիրիկայում հատուկ է աշխատավոր գյուղացու հոգերանությանը։ Բանաստեղծն իր սիրո երջանկությունը չի կապում քաղաքային կյանքի, նյութական հարստության ու փառասիրության հետ։

Արագի ափին բոստանս լինի.

Սալիք ուռ անկեմ, վարդեր ու լուս,

Հով ուռենու տակ քողովեկս լինի,—

Օջախիս միջն կրակ բոցկլառ։

Ու սրտով սիրած Շուշանը լինի,

Օջախիս կողքին գուրգուրենք իրար,—

Արագի ափին բոստանս լինի,

Մովքրատինք թափիս համար։

Առաջին հայացքից ոժվար է հայլատալ, թե սիրո երջանկության այդ իդեալը փայտայել է մի մեծանուն բանաստեղծ, «որը երկար տարիներ ապրել է ելքոպական քաղաքակրթության կենտրոննելում։ Այդ փաստը, սակայն, վկայում է այն մասին, որ իսահակյանն իր ստեղծագործության ակունքներով օրդանապես անխղելի կապված է եղել իր հայրենիքի, իր գյուղական մայր ժողովրդի հետ։

Բարձր գնահատուելով իսահակյանի սիրո պոեզիան, միաժամանակ չենք կարող չնչել մի հիմնական թերություն։ Իսահակյանի մեծարվեստ պոեզիայում սիրո մոռափը և կինը շատ միտկողմանիորեն են պատկերված։ Կինը ներկայացված է իր արտաքին, գերազանցապես (եթե ոչ ամբողջովին) մարմնական գեղեցկությունների գունագեղ նկարագրությամբ։ Կինը, որպես սիրով կողմ, պասսիվ է, բանաստեղծը նրա սիրահույզ ձայնը գրեթե լսելի չի գարձնում ընթերցողին, և երկրորդ, հենց դրա հետեւ վանքով էլ, իսահակյանի երգերում, ինչպես և պոեմներում վանքով էլ, իսահակյանի սերը։ Հայլերժական սերը») ու սիրավեպերում («Սիրահար Նաղոն» և այլն) չի տրված, չի պատկերված կնոջ սիրատը, հոգին, որ լցված է սիրով սիրված երիտասարդի նկատը։

մամբ։ Հետեւաբար կարելի է ասել, որ Իսահակյանի սիրո պոետիան տղամարդու սիրային ապրումների, նրա սիրային երազանքների, սիրային տառապանքների, սպասումների ու հիասթափումների, հաճախ նաև չարասիրտ հուզումների պոեզիան է, ուր հանդես է գալիս նա՝ տղամարդը, որպէս ակտով կողմը։ Այս պոեզիայում ներկա է միայն սիրահար տղամարդը, իսկ կինը—սիրուհին չխոսկան է, և նրա գոյության մասին իմացվում է այնպես ու այնքան, ինչպես ու ինչքան իմացվում է գրամատիկական դործում անձամբ հանդես չեկող և միայն գործող անձերի պատմություններում հիշատակվող անձնավորության մասին։

Քննադատներից ոմանք ասում են, թե Իսահակյանի սիրո երգերը մերժված սիրո մորմոքի երգեր են։ Բայց ոչ ոք չի նկատել, որ սիրո մերժումն էլ ընթերցողը բանաստեղծի սիրուհուց անձամբ չի լսում, այլ միջնորդաբար՝ բանաստեղծից, որը միայն հայտարարում է այդ մերժման մասին։ Կոնկրետ պատկերացում շտալով սիրուհու—կնոջ ներքին—հոգեկան աշխարհի մասին, բանաստեղծը հանկարծ վիրավոր սրառվ հայտնում է, որ իր այնքան դովիրգած սիրուհին ուխտադրուժ է եղել, մերժել է իրեն և այժմ նա հիասթափված է բոլոր կանանցից։ «Ես—հայտարարում է բանաստեղծը—այլևս չեմ հալատում կնոջ երդումին»։ Իսկ մինչ այդ բանաստեղծը ինչպես սիրով տարված գովերգում է իր սիրուհուն՝ նկարագրելով նրա արտաքին—մարմնական գեղեցկությունները։

Ահա միքանի օրինակներ, թե ինչպես է Իսահակյանը պատկերում ու գովիրողում սիրո առարկային։

— Նրանք իմ կյանքը երազ դարձրին,
Կուսական մաքուր աչերը անուշ (16)։

«Իմ նազելի աչազեղ…» (17), «Իմ նազելուս շունչը քըն-քուշ», «Մովլազերի բույրը անուշ» (I, 25) «Սոսենու պես ոլացիկ» «մազեր ունես ոսկի հասկի ու աչերդ մեղեսիկ» «պարանցիդ ինչ է վայել», «Երբ շրբունքով երազարտույր…» (38), «քո ունիքերդ, իմ սիրեկան…» (39), «քարիկներդ լուսեղեն…», «զմբուխս թասով զինի ես…» (47) «աչերդ սե-հուր», «մազերդ սե սուր» (48) «խոստումներով զյութական, նակատը լույս ու ճաճանչ» (54), «վարդի շրբունքդ, աղջիկ աչազեղ…» «…մազերդ չքեղ» (58) «դու նըսշուն նուռ… դու քընքուշ…մազերդ…» (68) «յար, աչերը արեգական… աբրիշում է մակարդ…»

վերդ…» (138), «նուռ շրբունիքը, նուշ թշերդ…» (152), և
այլն, և այլն:

Այս միակողմանիությունը իսահակյանի սիրային պոեզիա-
յում պատահական երկույթ չէ: Կնոջ իրավական ու փաստական
անհավասարությունը տղամարդու համեմատությամբ իր անդ-
րադարձումն է գտել նրա պոեզիայում: Այդ միակողմանիու-
թյունը բնութագրական է բանաստեղծի հայացքների համար՝
սիրո և կնոջ նկատմամբ:

Եվ այնուամենայնիվ, չնայած այդ թերությանը՝ իսահակյա-
նի սիրո պոեզիան հայկական պոեզիայի մարդարիտներից է,
որով հայ բանաստեղծական խոսքը նոր բարձրության է հասել
նախորդ շրջանի (Դուրյան, Հովհաննիսյան) համեմատությամբ:

Իսահակյանի լիրիկայում մի ուշագրավ մոտիվ էլ, որ նույն-
քան նվիրական է նրա համար, ինչքան սիրո և հայրենասիրու-
թյան մոտիվը, այդ մայրական ու որդիական սիրո մոտիվն է,
որի միջոցով բանաստեղծն արտահայտում է բարձր մարդկայնու-
թյան գլացմունքներ ու գաղափարներ:

Կյանքում, աշխարհում մարդու համար ամենից հարազատը
և միակ անկեղծ վշտակցող սիրոը մայրն է, մոր սիրոը: Այդ
իդեան գալիս է Հայնելից ու Նեկրասովից, բայց իսահակյանի
մոտ այն ծալալուն բանաստեղծական արտահայտություն է ստա-
ցել:

Ռուս մեծ գեղոկրատ բանաստեղծ Նեկրասովն իր մի բանա-
ստեղծության մեջ («Внимая ужасам войны...») մայրական սիրո
անկեղծության մասին ասում է, որ կովում ընկած հերոսին եր-
րեք չի մոռանա միայն նրա մայրը.

Կմխիթարյան, օ՛, կինը մի օր,
Ընկեր ընկերոջ կանի մտահան,
Բայց մի հոգի կա մի տեղ սկալոր—
Նա հիշելու է մինչեւ գերեզման...

Այս մեր կեղծալոր, սոոր աշխարհքում,
Ես անկեղծ և սուրբ մի բան տեսա միայն—
Թշվառ մայրերի արտասուքն էր այն*:

Ավ. Իսահակյանի պոեզիայում հենց ճիշտ այդ հայացքն է
բանաստեղծական մարմնացում ստացել և այդ՝ ոչ թե մեկ կամ
միքանի, այլ տասնյակ բանաստեղծություններում:

* Հ. Թումանյանի թարգմանությունից «Գեղարվեստական երկեր», 1934թ.,
էջ 172: Некрасов, «Полн. собр. соч.», 1929 г., стр. 31:

Մորը նվիրված այդ բանաստեղծությունները լիրիկական պոեզիայի բարձրագույն նմուշներ են թե՛ իրենց էմոցիոնալ խորությամբ, հուզականությամբ և թե՛ իրենց կատարման-արտահայտչական ձևերով։

Հայմական պոեզիայում գրեթե եզակի են խսհակյանի մայրական սիրո մոտիվն ունեցող բանաստեղծությունները։

Իսահակյանն էլ, ինչպես Նեկրասովը, բանաստեղծի ազգած «կեղծավոր, ստոր» և «փուշ-աշխարհառ», քար-արտերի մեջ» միակ հարազատ էակը մորն է համարում։

Մայրը բանաստեղծի փրկության խսրիսխն է, բարոյական կյանքի ամենաամուր կապը, որով բանաստեղծը միանում է աշխարհի հետ։

Արդ—ինչպես է տրված մոր կերպարը։ Բերենք մի շարք նմուշներ խսհակյանի մայրական լիրիկայից։ Ուշագրավ է, որ բանաստեղծի ստեղծագործության հենց սկզբումն էլ մոր և զավակի փոխադարձ սիրո մոտիվը նշանակալից արտահայտություն է գտել, իսկ հետագայում բանաստեղծն իր երկերի մի ժողովածուն («Բանաստեղծություններ», 1903 թ.) ամբողջապես նվիրում է իր մորը, հետեւյալ մակագրությամբ։

«Անդին մորս—Ալմաստ խսհակյանին նվիրում եմ բանաստեղծություններս»։

Այդ ժողովածուն սկսվում է «Գուցե իմ հեծծանք» գեղեցիկ լիրիկական բանաստեղծությամբ, որ բանաստեղծի մտերմական խորհրդածությունն է իր մոր հետ։ դա աշխարհից արհամարհված ու խոցված հուսահատ զավակի տիսուր դրույցն և հարազատ մոր հետ։

Բանաստեղծը պատմում է, որ իր հոգին սերվել է մոր հոգուց և իր երգերը հարազատ մոր լավագույն զգացմունքների մարմնացումն են։ «Իմ երգերը քեզ հարազատ են, քեզ խորթ չեն, մայր իմ»—ասում է բանաստեղծը։

Դու վասիր իմ մեջ հուրը երկնային։—

Գեղեցիկ ծարավ, անհունի ձգտում,

Կոփէ չարի դեմ ու ընդգեմ ստին,

Ապրել ու տանջիկ ուրիշի սիրուն։

Մյորիկ ու լույս տալ ամբոխի համար,

Բնենել փոթորկի, հրարուխի մեջ

Ամբոխի համար, աշխարհի համար...»

Ահա իմ սիրաը... նայիր դու մեկ-մեկ,

Ընդունիր, մայր իմ, օրհնիր ինձ, մայր իմ...»։

Ակնհայտէ, որ բանաստեղծի սերն իր մոր նկատմամբ և մոր
սերն իր զավակի նկատմամբ՝ խորը իմաստ ունի: Այդ «ծովի
չափ մեծ սերը» տոգորված է հասարակական վեհ ձգտութերով,
խորը հուզումով: Բանաստեղծ-որդին իր մոր միջոցով է կապ-
վում աշխարհի—մարդկության հետ, տանջլում ու կովում «ամ-
բոխի համար, աշխարհի համար»:

Այդպիսով, բանաստեղծը մոր կերպարի մեջ ամենից առաջ
և ամենից ավելի չեշտում է սերը դեպի ժողովուրդը՝ բարին
ու ազնիվը սիրելու դիմք, հումանիզմը, անձնազոհությունը՝
«ապրել ու տանջլել ուրիշի սիրուն»:

Մայրական սիրո այդ վսեմ գծերը նշված են իսահակյանի մի
շարք այլ բանաստեղծություններում էլ: Աչա մի օրինակ, մի
բանաստեղծություն՝ գրված վերոհիշյալից մոտ տաս տարի հե-
տո՝ 1911 թվին: Բանաստեղծն այստեղ էլ իր մորը պատկերում է
նույն վսեմ մարդկայնության գծերով:

Կունենեմ ահա,—լուս երեկոյին
Բարակ ծուխ կենի իմ հոր օջախին.
...Մեղմ ճրագի տակ նսաել է տխուր
Ծերունի մայրս՝ մանկիլու զրկին.—
Մուշ-մուշ քնել է մանկիլու անդորր,
Ու աղոթք կանի մայրիկո՝ լուին.—
Ամենեն առաջ թող ինքը հասն
Ամեն հիվանդի, հեռու նամբորդի,
Ամենեն հետո թող ինքը հասնի
Քեզ, իմ խեղն որդի, իմ պանդուխտ որդի:

Բանաստեղծի մայրը ծերացել է, բայց նրա «վսեմ հոգում»
վաս ու բոբրոքուն է մնացել «ծովի չափ մեծ սերը» դեպի մար-
դը, վաս մնացել նրա վսեմ զգացմունքը՝ «ապրել ու տանջլել
ուրիշի սիրուն»:

Իդեպ, նկատենք, որ մոր նկատմամբ ունեցած կարուի
զգացմունքն արտահայտվում է մեծ մասամբ կապված դարձբու-
թյան մոտիվի հետ: Որդին թողել է իր հայրենիքը, գնացել է
օտար երկիր և զարթիսության մեջ, անծանոթ աշխարհում,
«տիսուր-տրտում» քուն չունի»՝ հիշելով մորը.

Հայրենիքն հեռացել եմ,
իեղձ պանդուխտ եմ, տուն չունեմ,
Ազգ մորից բաժանվել եմ—
Տըլուր-տրտում քուն չունեմ:—

Էրգում է զարիք դարձած բանաստեղծը և դիմում՝ սարեն եկող
«նըխուն հավքերին», ծովեն եկող «մարմանդ հովերին» հարցնե-
լով՝ արդյոք չե՞ն տեսել իր մոբը, բարեւ չե՞ն բերել նրանից:
Ահա մի այլ ոտանալոր, ուր որդին դարձյալ պանդուխու է և
պանդխառությունից վերադասնում է հայրենիք. երկար տարիներ
են անցել, երբ նա հեռացել է հայրենիքից, անչափ փոխվել է ու
վերադառնում է տուն «դարդը սրտին, աղքատ ու խեղճ»: Հայ-
րենիքում նա կհանդիպի հարազատ ծանոթներին, ո՞վ կարող է
մոռացած լինել ու չհիշել, չճանաչել և ո՞վ խկույն կհիշի օտա-
րությունից վերադարձած զարիբին:

Իր «հայրենի գեղի հանդում» զարիբը «տեսալ մանկութ ըն-
կերին». «կարոտ սրտով նըրա առաջ վազեց», սիրով-կարոտով
բարեեց ու հարցրեց՝ «անդին ընկեր, չե՞ս ճանաչում դուն ին-
ձի»: Բայց «անդին ընկերը» «չըճանաչէց» իր զարիբ դարձած ըն-
կերովը:

Հարիբն ահա գյուղն է մտնում, անցնում է սիրած «յարի
տան ճամփով»:

Տեսա յորը վարդը ձեռին,
Մենակ կանգնած դըռան մոտ.
Ասի. — «քուրիկ, աղիկ տեսրիդ
Սրժանացա ևս բարով...»
Նա էլ ինձի չը ճանաչեց...
— Աղքատ էի ու փոշոտ....:

Արդյոք խեղճ զարիբի հայրենի գյուղում չկա՞ր մեկը, որ
չիշեք նրան — մոռացել էր «մանկութ ընկերն անդին», մոռացել
էր «ազիզ յարն» խսկ: Ուրեմն էլ ո՞վ էր մնում հարազատ սիրտ,
որ «աղքատ ու խեղճ» զարիբին ծանոթություն տար, մտերմա-
բար ընդուներ նրան.

Դարդը սըրտիս հասա մեր տուն,
տեսա ծերուկ, խեղճ մորըս.
Ասի. — «նանի, ճամբորդ մարդ եմ,
զիշերս ինձ հյուր կընդուհմա».
Ա՛խ, մերիկ ջան... վզովս ընկավ,
սըրտին զըրկեց ու լացեց.
«Ա՛խ, բալա ջան, զարիբ բալու, եղ
գո՞ւն ես...»:

Բանաստեղծի հայացքով, հարազատ մայրը այն ոսկի օղակն
է, որը միացնում է անհատին ընդհանրության հետ:

Բառհակյանն այլպիսով իր մայրական սիրո և իր երազած

«Հավերժական կնոջ» «Հայլերժական սիրո» մոտիվներով անհաշտելի հակադրության մեջ է մտնում Ժամանակի մոլի նյութապաշտ «քար-աշխարհի»—բուրժուական աշխարհի հետ: Բանաստեղծն անհաշտ է այդ տիրող հասարակության հետ ոչ միայն այն պատճառով, որ այնտեղ խորը սոցիալական անհավասարություն ու ճնշում կա, ուր մարդը մարզու համար գալլ է, այլև այն պատճառով, որ բանաստեղծը տեսնում է այդ աշխարհի հոգեկան աղքատացումը, նա կանխազգում, տեսնում է այդ հասարակության ոգու սովը, որի մասին գրել է հետեւյալ՝ զայրութով իր բանաստեղծությունը:

Ես ձեզ ասում եմ՝ կդա ոգու սով
Եվ գուք կը քաղցեք ճոխ սեղանի մոտ,
Կը նկնեք մուրալու հափրած որկորով—
Հը եղեն խոսքի, վեհ խոսքի կարստ:
Լը բնի ծաղրով արհամարհեցիք
Ողու վաս զեղմունք—միտք ու երազանք,
Նյութի տաճարում արրած՝ սպարեցիք՝
Մոռացած անմահ, անհունի տենչանք:

Այսքան խորը կերպով զգալով տիրող հասարակության անտանելիությունը, հակամարդկայնությունը, իսահակյանը, ճիշտէ, անորոշ ու անձեռնչերով, բայց անդուր եռանդով ձգտել է լավագույն սպադայի ոչ միայն իր ժողովրդի, այլև ողջ մարդկության համար:

Իսահակյանի լիրիկայի պատկերը շատ թերի կլիներ, եթե մենք անտեսեինք նրա թեմատիկայի մի շատ նշանակալից մոմենտը. այդ բանաստեղծի բնութենասիրությունը, բնութենապաշտությունն է, որ մարմնացած է նրա՝ բնությանը նվիրված րազմաթեր երգերում:

Բնության առկայությունն իսահակյանի համար բանաստեղծական երևակայության, արտահայտչական միջոցների արաենալն է, այն ընդհանուր լեզուն, որով բանաստեղծը թարգմանում, արտահայտում, պատկերում է իր մտահղացումը, իր զգացումը:

Բնության առկայությունն իսահակյանի լիրիկայում արտահայտվում է բազմազան ձևերով, բայց մեծ մասմբ բանաստեղծի տիրությունը, վիշտը, անուրախ արամադրությունը պատկերելու գերում:

Երբեմն բանաստեղծն իր փոխարեն բնության այս կամ այն առարկան է դարձնում իր տրամադրության արտահայտիչը՝

մարդկայնացնելով այն. ահա, օրինակ, «Ամեն դիշեր իմ պարտեզում» ոտանալվորը:

Այստեղ բանաստեղծի տխուր տրամադրությունն է արտահայտված, բնության առարկան՝ ուռի ծառը պարտիզում, իրահանաստեղծի փոխարեն է «վշտատոչոր լաց լինում», իսկ արենէ էլ նազելի կնոջ պես սրբում է «ուռենու արցունքները»:

Նրա սիրային լիրիկան ամբողջությամբ բնությամբ է շընչում և բնության «մատերիալով» է հյուսված: Տարվա բոլոր եղանակները, բնությունն իր բազմազան ու բազմապիսի արտահայտություններում բանաստեղծի ստեղծագործական ֆանտազիայի մէջով է անցնում, նրա ներքին ապրումները և ուրախությունը, և' սպասումի, և' հուսահատության, թե՛ վայելքի և թե՛ զրկանքի ապրումները դրսենորելու համար:

Իսահակյանի լիրիկայում և ընդհանրապես նրա պոեմիայում աչքի է ընկնում բանաստեղծի հայրենիքի, առանձնապես նրա ծննդավայրի բնությունն իր հիասքանչ գեղեցկությամբ: Բնիթերցողը կարծեք իրավես մի պահ փոխագրվում է բանաստեղծի բնության ծոցը—զնում ու շնչում այդ բնության ծաղկաբույր դով, հիանում նրա մեղ ու մռայլ կամ թե պայծառ տեսարաններով, նրա պես—պես թռչուններով, և այլն: Առանձնապես Ալագյազն ու Մանթաշի գեղեցիկ ձորը վերակենուանացած են Իսահակյանի պոեմիայում:

Ալագյազը՝ աստղերի մէջ՝

Աղամանդե թագը զլիին՝

Սարերեն վեր, ամպերեն վեր,

Թիկն է տվել զմբուխա-դահին:

Երդ գեղեցիկ տեսարանի, Փոնի վրա բանաստեղծը պատկերում է իր սիրո ուրախությունը: Սակայն բանաստեղծը չի անտեսում իր հայրենի բնության մեջ ապրող մարդկանց, հայրենի գյուղական ժողովրդի կյանքը:

Հիշենք «Ալագյազի մանիներից» մի բանաստեղծություն («Դաշտի գյուղացին կանանչ գարունին»), ուր հայրենի բնության ֆոնի վրա պատկերված է գյուղացիական—հովվական կյանքն ու զբաղմունքը:

Այսպիսով բնության թեման իսահակյանի ստեղծագործության մեջ կենասական նշանակություն ունի. բնությունը նրա բանաստեղծական պատկերավորման հիմնական միջոցն է, նրա խորհրդարանը, նրա վշտերի, ցալերի ամոքման վայրը, նրա

Էլրազանքի «գմբռուխտե օրօրուցը»—ինչպես անվանում է նա «Մանաթաշի երադ—Հովհանն» («Մանթաշին» ոտանավորը), վերջապես այն համբակենական հանդստարանը, ուր բանաստեղծն ուզում է թաղվել («Ես որ մեռնեմ, ինձի թաղեք Ալագյաղի լանջերում...»—ասում է բանաստեղծը):

Հայրենի բնությունը իսահակյանի բանաստեղծական էության կենսական տարրն է: Այնքան ուժեղ է հայրենի բնության զգացումը նրա մեջ, որ հեռավոր օտար աշխարհում եղած ժամանակն էլ նա իրեն զգում է իր տանը՝ հայրենի բնության հարազատ ծոցում:

Ահա, օրինակ, նա Լայպցիգ քաղաքումն է (1893 թ. 23 սեպտեմբեր), բայց նա իր սիրո վիշտն արտահայտում է գիմելով իր հայրենի «ասրի ամրութին», «արվան-աբվան ծաղիկներին», «բաղի բլութին» և «ամպչող երկնուց զով հովերին» («Դարդու լացեք...» բանաստեղծությունը):

Նա Օքեր-Հոլցումն է (ուր բանաստեղծը եղել է 1893 թ. սեպտեմբերին), բայց նա իրեն զգում է իր հայրենի գյուղում և հարազատորեն, ճիշտ իր մայրենի ժողովրդի նման՝ նրա լեզվով ու ոճով երգում է հանդում վար արած և հոգնած մաճկալի սիրած էակի բերանով («Մաճկալ ես...» բանաստեղծությունը՝ զբանական Օքեր-Հոլցում՝ 1893 թ. սեպտ. 24-ին):

Բանաստեղծը Վիեննայումն է (նույն թվի հուլիսին), բայց նա երգում է Բինդյուլի մասին («Բինդյուլ»—դրված Վիեննայում 1893 թվի հուլիսի 29-ին):

Շընկընկալով հովի է փշում
Զով Բինդյուլի լանջերից...
...Բյուրեղ լընից ցողն է ելնում
Ծիածանի ժըպիտով.
Ծաղիկների ջինջ բողբոջում
Հանդ է առնում շողալով:

Բանաստեղծն իր բազմալաստակ կյանքի ընթացքում բախուրելունքով շատ է եղել հեռու իր հայրենիքից, «թափառել անբարեկ հայրենի համար հներ», «հեռու անապատներ ու ծովեր»: Հայր վայրեր, աշխարհներ», «հեռու անապատներ ու ծովեր»: Հայր իր հոգեկան աշխարհով, իր մեծ սրտով միշտ ամուր կապահանք է եղել հայրենի հողի ու ջրի հետ, հայրենի բնության ու ված է եղել հայրենի հողի ու ջրի հետ, հայրենի բնության ու ված է եղել հայրենի հողի ու ջրի հետ, ստեղծագործական կենսութ ստացել հայրենիքից ժողովրդի հետ, ստեղծագործական կենսութ ստացել հայրենիքից ժողովրդի հետ:

ՊՈԵՄՆԵՐԸ

Իսահակյանի բազմաժանր ստեղծագործության մեջ նշանակալից տեղ են գրավում նրա պոեմները։ Բանաստեղծը հմուտ վարպետ է ոչ միայն լիրիկայի ասպարեզում, այլև լիրիկական և էպիկական պոեմներ կերտելու գործում։

Քննության առնենք նրա պոեմներից երկու նշանավոր գործ, նախ «Արու-Լալա-Մահարին» և հետո «Սամա Մհերը»։

«ԱԲՈՒ-ԼԱԼԱ-ՄԱՀԵՐԻ»

Ռուսական առաջին ռեօլուցիայի վերելքի շրջանում բանաստեղծը արձագանքեց ժողովրդի պայքարին։ Բայց նրա աչքի առաջ ժողովուրդը պարավեց, ռեօլուցիոն վերելքին հաջորդեց ստոլիպինյան սև ռեակցիան և նողկալի իրականությունը ոչ միայն մնաց անփոփոխ, այլ ավելի ու ավելի անտանելի դարձավ։ Իսկ ի՞նչ աներ բանաստեղծը։ Նա կանգնած էր մանր-բուրժուազիայի անկայուն, հեղհեղուկ դիրքերում։ Նա չէր տեսնում պրոլետարիատի դասակարգային ռեօլուցիոն պայքարի ուղին։

Բայց նա չէր կարող և չէր ցանկանում հարմարվել տիրող ռեակցիային, որի խեղդող օղակից ելք էր որոնում։ Բանաստեղծն ապրում էր հոգեկան ծանր տրագեդիա։ Ահա այդ պայմաններում պոետի մեջ հղանում է «Արու-Լալա-Մահարի» պոեմը գրելու միտքը։

Ուշագրավ փաստ է այն, որ Իսահակյանի «Արու-Լալա-Մահարին» և Հ. Հակոբյանի «Նոր առավոտը» լույս են տեսել միաժամանակ, առաջին անգամ միևնույն՝ «Գեղարվեստ» հանդեսում (1909 թ.)։ Զնայած իրենց իդեալան-հասարակական իմաստի հակադիր տարրերությանը, այնուամենայնիվ այդ երկու պոեմներն էլ միևնույն հասարակական պայմաններում են ծնունդ

առել։ Սակայն նրանք իրենց բնույթով տարբեր են, որովհետեւ հանդիսանում են երկու տարբեր սոցիալական խմբերի ու աշխարհը բանում ների արտահայտություններ։ «Նոր առավոտը՝ ժամանակավորապես սպարտված», բայց գեղի ռեզլուցիոն «նոր առավոտը» ձգտող և նրա հաղթանակը նախապատրաստող դասակարգի՝ պրոլետարիատի ռեզլուցիոն մտածողության արտահայտությունն է։ Մյուսը՝ «Արու-Լալա-Մահարին», ճիշտ է, նույնպես աղասության ձգտող, բայց նրա ռեզլիները չեիտակցող, երերուն, ռեզլուցիայի ժամանակավոր պարտությունից հօռակըլած մանր բուրժուական ինտելիգենցիայի տրամադրությունների արտահայտությունն է։ «Արու-Լալա-Մահարին» աղբյուրը մանր բուրժուաղիայի հուսահատ վիճակն է, ռեզլուցիայի տեղատվության շրջանում մանր բուրժուական ինտելիգենցիային հասուկ ինդիվիդուալիզմը, որ սննդում էր բուրժուական տեսությունների պրատոր ակունքներից։

Ռեակցիայի շրջանում ապրած իր արամադրությունները մարմնավորելու համար իսահակյանը որոնում է և գտնում Արարիայի նշանակոր բանաստեղծ ու փիլիսոփա Արու-Ա-Ալա-Ալ Մահարուն (ծնվել է Սիրիայի Մահարի քաղաքում 973թ., ապրելով 85 տարի, մեռել է 1058թին)։ Զնայած պատմական այդ ժամանակությանը, արար բանաստեղծը շատ հարմար էր իսահակյանի ապրումներն ու հայցքներն արտահայտելու համար։ Դիմելով Մահարուն, իսահակյանը չէր հեռանում իր ժամանակից, ընդհակառակը, նպատակ ուներ այն ավելի վառ ու խորը կերպով պատկերել։

Իսկ ինչո՞վ է Հ—Խ դարերի այդ արար բանաստեղծը հարազատ եղել XX դարի հայ բանաստեղծին։ Մահարին Արարիայի անկման շրջանի տիպիկ արտահայտիչն է պոեզիայում ու փիլիսոփայության մեջ։ Բայց նա ժխտում էր ամեն տեսակի կրոնական ուսմունքներն ու չէր ընդունում աստծու գոյությունը։ Պրափոխարեն նա աստվածացնում էր բնությունը։ Մահարին մեծ ժողովրդականություն էր վայելում։ ապրում էր համեստ ու ժուժկալ կյանքով, իր ունեցածից նա բաժին էր հանում աղքատաներին։ Լինելով աղատ մտածող՝ աիրող կրոնական ուսմունքի անհաշտ հակառակորդ, Մահարին հարածանքներ է կրում միջավայրից։ Ինչպես հաղորդված է, Մահարին իր վերիշխող միջավայրից 1000 թից մինչև մահը—1058թ.) անձուկ չին մոտ կես դարը (1000 թից մինչև մահը—1058թ.) անձուկ վարել՝ «փակված երեք բանտում—մարմինը, կուրուկյանք է վարել՝

թյունը և միայնությունը»: Հալածվելով ժամանակակիցների կողմէց, նա իր կյանքն անց է կացրել միայնության մեջ՝ հեռու հսարակական ու քաղաքական կյանքից ու սպայքարից:

Մահարու պետամիստական հայացքների մեջ բնորոշն այն է՝ որ նա ժխտում է մարդկային ցեղի հարատեսության անհրաժեշտությունը: Իր այդ սկզբունքի համաձայն նա չի ամուսնացել, որպեսզի ժառանգներ-հետանորդներ չունենա, և թողել է իր հետեւյալ տապանագեթը:

Իմ հայրը մեղանչել է իմ գեմ,
իսկ ևս ոչ ոքի գեմ չեմ մեղանչել:

«Արու-Լալա-Մահարիի» ընթերցողն անմիջապես կհիշի, որ Բաղդադի հոչակավոր բանաստեղծի այդ նշանավոր տողերն օդագործված են Իսահակյանի այդ պոեմի երկրորդ սուրահում և ծանոթագրված, որ «այդ խոսքերը գրված են բանաստեղծի չիրիմի վրա»:

Բայց ոչ միայն այդ տողերը՝ արար բանաստեղծի ստեղծագործության մեջ հայ բանաստեղծն իր սրտին հարզար շատ մոտիվներ էր գտնում:

Բնորոշ է, Արու Մահարուց Իսահակյանի՝ 1909 թվին կատարած մի թարգմանությունը: Դա 8 տողանի մի բանաստեղծություն է, որն իր արտահայտած արամագրությամբ ու մտքերով կազմում է Իսահակյանի պոեմի իդեական-ստեղծագործական հիմքերից մեկը: Ահա այդ բանաստեղծությունը.

Ես տեսնում եմ՝ մարգկանց տարված կոփիներով, վեճերով,
Աղանդալոր, մոլեկոն, ապուչ ամեն կողմերով,
Թագավորներ, որ խորհում են միայն ուտել, շվայտել,
Նախարարներ, որ հոգում են հարկ ու տուգանք սոսկ կապտել.
Բըոնց անհագ ցանկությունն է՝ հպատակի տները
Ավար առնել, ավել առնել, բանաբարել կիները:
Կա՞ նվիրված արդյոք մի վայր իրավունքին երկրիս մեջ,
Այս խոպարում ման զամ, զտնեմ՝ ձեռքիս լապտեր մի անշեջ:

Ահա այսպես է խորհել ու երգել արար բանաստեղծը X—XI դարամիջում: Եվ իզուր չէ, որ այս բանաստեղծին է Իսահակյանն ընտրել որպես իր գաղափարների արտահայտչի:

«Արու-Լալա-Մահարի» պոեմը կոնկրետ սյուժե չունի, իր ձևով նա լիրիկական-խոհական պոեմ է, ուր արար բանաստեղծի բերանով պատկերված են հեղինակի հոգեկան ծանր ալլրումները և հայացքն աշխարհի, կյանքի, մարդկային հասարակության

ու սիրող սոցիալական-քաղաքական կարգերի նկատմամբ։ Հետեարար Խսահակյանը «Բաղդագի հոչակավոր բանաստեղծի» կերպարի մեջ մարմնացրել է ինքն իրեն—իր ապրումներով ու հայցքներով, իր հասարակական բժրունումներով ու ձգտումներով։

Պոեմի կարճ նախաբանում զեղինակը համառոտակի տվել է իր հերոսի կյանքի նկարագիրը, որի մեջ Խսահակյանը ընութագրել է ինքն իրեն։ Նա արար բանաստեղծի անվան տակ իրեն է նկատի ունեցել, երբ գրել է, «որ՝

Արու-Լալա Մահարին,
Հոչակալոր բանաստեղծը Բաղդագի
Տառնյակ տաքիներ ապրեց
Խալիֆաների Հոյակապ քաղաքում,
Սիրեց ու փորձեց ընկերներին,
Եղալ ուրիշ-ուրիշ ապերի հայրենիքներում,
Տեսալ և գիտեց մարդկանց և օրենքները։
Եվ նրա խորաթափանց ողին ճանաչեց մարդուն։
Ճանաչեց և խորագին տանց մարդուն,
Եվ նրա օրենքները։

Մահարին հիասթափվեց այն ամենից, ինչ որ սիրել էր առաջ։

Ես չատ սիրեցի իմ ընկերներին,
Եվ բոլոր մարդկանց մոտիկ ու հեռուն,
Իժ գարձավ խայթուն իմ սերը հիմա,
Թույն-ատելությամբ սիրու է եռում։

«Բոլոր մարդկանց» ու ողջ հասարակության նկատմամբ առաջացած այդ անհաշտելի «թույն-ատելությամբ» լցված, բանաստեղծն ահա ամեն ինչ թողնում է ու մի գիշեր գաղտնի հեռուում քաղաքից։ Խոկ ո՞ւր է գնում, ի՞նչ ուղիով, այդ ինքն էլ չգիտե։

Անհայտ ուղին էր Արու-Լալային
Բյուր հրապույտով կանչում, փայտայում։

Եվ, չնայած իր անցնելիք ուղղու անորոշությանն ու վերջնական կայանի անհայտությանը, Արու-Լալան անդառնալի հեռանում է հասարակությունից։ Նա «վերջին անգամ» «ետ դարձավ նայեց նիրհած Բաղդագին», «գարշանքով շրջեց ճակատը կնճռու», երբ նորից մտարերեց աշխարհի ու մարդկանց կարգերի, նրանց օրենքների ու բարոյականության անտանելիությունը, որը պատճառ էր դարձել նրա հեռանալուն։ Խսահակյանի քասիտի (պոեմի) սուրահներում հաջորդաբար տրված է բուրժուական հասա-

բակության, նրա օրենքների ու բարոյականության խիստ քննադատությունը, մի քննադատություն սակայն, որը ելնում է մանր-բութուական լինգիլիգուալզմից: Բանաստեղծը կանգնած էր հասարակության ու պատմության իդեալիստական ըմբռնման դիրքերում, և, չնայած դրան, բանաստեղծի այս հոյակապ ստեղծագործությունն իր քննադատական մասով անկատկած սոցիալական մեծարժեք դործ է:

Հայտնի է, որ ցարական ցենզուրան թույլ չի տվել «Արու-Լալա-Մահարիկ» հրատարակությունը, նրանից 1909 թ. միայն հատվածներ են տպագրվել «Գեղարվեստ» ժուռնալում, առաջին անգամ պոեմն ամբողջությամբ՝ առանձին գրքով հեղինակը հրատարակել է կ. Պոլսում՝ 1911 թվին:

Դրա պատճառն, անշուշտ, պոեմի մերկացնող, «բոլոր և ամեն տեսակի գիմակները պատող» սուրբ քննադատությունն է, որը չէր կարող հանդուրժելի լինել սեակցիոն կառավարության ժանդարմական ուժիմի համար:

Պոեմում կա շահագործման վրա հիմնված դասակարգային հասարակության օրենքների սոցիալական էության ըմբռնման առողջ հատիկ:

Ի՞նչ է օրենքը,—մարդկանցից օրէնած,
Բիրս ուժեղների այդ սուրբ դաժան,
Անզորի գլուխին կախված հավիտյան,
Խեղճին խողիսող, հզրին պաշտպան:
Եվ իրավունքը և օրենքները
Բոլոր զայրույթով ատում եմ, ատում,
Գարշ իրավունքով բնարարում են
Եվ գարշ օրենքով լիկում ու մորթում:

Բանաստեղծը ճիշտ է նկատում, որ հենց այդպիսի «իրավունքի և օրենքների» տիրապետության պայմաններում անտանելի ու ատելի է դառնում նաև հայրենիքը:

Ատում եմ, ավա՛զ, և հայրենիքը,
Պերճ արտապայրն հարուստների ցոփ,
Որի հողն արնոտ անդուլ հերկողը
Զոր քար է կրծում իր հացի հանդեպ:

Այս խոսքերը լիովին ճիշտ են բնութագրում հայրենիքը՝ շահագործողների, բութուաղիայի տիրապետության պայմաններում: Ճնշված մարդու կուտակված ատելությունն են արտահայտում բանաստեղծի զայրագին խոսքերն՝ ուղղված բոլոր նա-

Խորդ գարերում աիրապեսած շահագործող դասակարգերի իշխանության. հասցեին.

Յոթն անդամ յոթն ատում եմ, ատում
իշխանությունը—սերունդներ լափաղ,
Անհագ վաշխառու, անկուչա ձրիակեր,
Պատերազմների հավերժ հերյուրող:
Անցած դարերի, գալիք դարերի
Մեծ զաւեճն է նա և մեծն ավազակ,
Իր անցած ուղին—ոճիր ու նախէիր,
Սարսափներ վիճող, ոխակալ ոհմակ:

Բանաստեղծը քննադատում է իշխանությունն այն բանի համար, որ նա խեղդում, ճնշում է մարդուն, խլում նրա աղաւանությունը:

Նա վշշում է միշտ մեր ուսերը վար,
Ամենուր հասնում, ճղմում է մարդուն,
Եվ իրավունքի գաֆան անունով
Բյուր կառափներից բուրդեր է կերտում:
Եվ նզովում եմ իշխանությունը,
Հաղարածիրան մոլի բորենին,
Նրա ամեն քայլն արյունի հնձան,
Ուր արորում է ծերին, մանուկին:

Մերկացնող է բանաստեղծի քննադատությունը նաև կրոնների վերաբերյալ. «Կրոնները ձեր»—ասում է նա—

... Միմիայն շղթա են կոռում,
Եվ սորկության կոփում զնդաններ:

Շեքսպիրյան («Տիմոն Աթենացի») և պուչկինյան («Ժամանակակից») ողություն դրված պոեմի վեցերորդ սուրահի այն տողերը, որոնք ուղղված են փողի, «Հզոր ոսկու» տիրապետության դեմ:

Ապիրատ աշխարհ, ուր հզոր ոսկին
Դարձնում է զողին՝ ազնիվ ու շիտակ,
Ապուչին՝ հանձար, վախկոտին՝ կտրիճ,
Հայտնի պառնիկին՝ անրիծ հրեշտակ:

Բանաստեղծը պարզ տեսնում է, թե ինչպես և ում հաշվին է կուտակվում հարստությունը—դանձը անհատների—հասարակության մի բուռն խմբի ձեռքում.

Եվ ի՞նչ է դանձը, որով հիմարը
Տիրում է մարդկանց, և՛ հանձար, և՛ սեր,—
Բյուրավորների քամլած արյունը,
Մեռեների միս, որի արցունքներ:

Այս բոլոր մէջբերումները վկայում են, որ Իսահակյանը թեև կանոնած է ինդիվիւդուալիզմի դիրքերում, այնուամենայնիվ հասարակական կյանքի ու տիրող բարոյականության նրա քննադատությունն ընթերցողին վարակում է ազնիվ՝ զայրույթով, նրա մէջ բորբոքում ատելություն ու անհաշուռություն այդ հասարակակարգի նկատմամբ, ուր մարդը մարդու համար դայլ է.

Ես ես չեմ գառնա ժանտ քաղաքները,
Ուր բազմաժխոր կրքերն են եռում,
Ռոսաններն արյան, ուր մարդը գաժան
Իր նմաններին է միշտ պատառում:

Այսքան սուր, մտրակող քննադատությանը, սակայն, չի հաջորդում հասարակության վերափոխման մի կոնկրետ, դրական ծրագիր, որոշ հասարակական հեռանկար: Ո՞րն է, հապա, ելքը, փրկության ուղին—անհատի անսահմանափակ ազատությունը, անիշխանականությունը: Ելքը՝ ինդիվիւդուալիզմն է—պատասխանում է բանաստեղծը.

Ոգիս ապաս է, ես չեմ հանդուրժում
իմ վրա իշխող ոչ մի զարության,
Ոչ օրենք, սահման, ոչ ճակատագիր,
Ոչ չար ու բարի և ոչ գատաստան:
Եթ զիմի վերև չգետք է մինի
Ոչ մի հոգանի, ոչ մի իրավունք,
Եվ իմ կամքից զուրս ամեն ինչ բանտ է,
Եվ ստրկացում և բննադատմունք:
Ես կուզեմ լինել անսահման աղասի,
Անզպարտք, անիշխան, այլև անասովլած,
Հոգիս տենչում է միայն, միմիայն՝
Մեծ աղասության—անհուն, անտարած:

Իսահակյանն իր այս պոեմում որոշակի կերպով կրել է նիցշեականության ազգեցությունը: Պետք է նկատել, սակայն, որ նա չի դարձել Նիցշեի անվեցապահ հետեւրդը և որ նիցշեականությունը և Իսահակյանի ինդիվիւդուալիզմը, ինչպես և Նիցշեի Զարասուսարան ու Իսահակյանի Արու-Լալա-Մահարին էապես տարբեր են:

Իսահակյանի քննադատության ելակետը սխալ լինելով հանդերձ, իր էությամբ հակադիր է նիցշեի «Գերմարդու» ուսմունքին: Մինչդեռ Նիցշեն՝ իմպերիալիստական բուրժուազիայի շահերի տիպիկ արտահայտիչը՝ բացարձակապես արդարաց-

նում և բնական-օրինական է հայտարարում ժողովրդի սոցիալ-
լական ձնշումը, թշնամի է ամեն մի դեմոկրատիզմի ու ազատու-
թյան, պահանջում է նոր արխտոկրատիայի ստեղծում, «Ֆեր-
մարդու» անսահմանափակ իշխանությունը «ամբոխի» վրա. Նա
պատերազմը բնական ու կենսական անհրաժեշտություն է համա-
րում («Դուք պետք է սիրեք խաղաղությունը որպես միջոց նոր
պատերազմի դիմելու: Եվ կարճատե խաղաղությունն ալելի,
քան երկարատելը»—ասում է Զարասուստրան), —դրան հակա-
ռակ, Ազ. Իսահակյանի քննադատությունը հենց ուղղված է արդ-
բոլոր սկզբունքների գեմ, ինչպես տեսանք վերևում: Նիցեն
ազատություն և անսահմանափակ իրավունքներ է պահանջում
«նոր արխտոկրատիայի» ու նրանից ծնվող «գերմարդու» համար՝
օրինական համարելով ժողովրդի—ամրութի անպատճեն ու
սուրբությունը. մինչդեռ իսահակյանը նողկանքով ու զայրու-
թով է խոսում հարուստների—հարստահարողների մասին, մեծ
ցափով ու ցասումով է նշում, որ «Երկրի հողն արնոտ՝ անդուլ
հերկողը չոր քար է կրծում իր հացի հանգեպ», որ մի բուռ
հիմարներ, «բյուրավորների քամված արյունից գոյացած գան-
ձով» «ափրում են մարդկանց»: Նիցեն՝ պորտարույժ «Հզորների»
անսահմանափակ իշխանությունն է քարոզում, իսկ իսահակյանը
բուռն ցասումով բողոքում է այդպիսի իշխանության գեմ, դա-
տապարառում է այն հասարակակարգը, «ուր թույլն հանցափոր և
հզորն՝ արդար» է ճանաչվում տիրող «գարշ օրենքների» համա-
ձայն: Իսահակյանը ազատություն է ցանկանում բուռի համար,
բոլոր մարդկանց համար, թեև նա չգիտեր այդպիսի ընդհանրա-
կան աղատության հանելու ճշմարիտ ուղին:

Սիալ է իսահակյանի այս պոեմի մասին անցյալում քննա-
դատության մեջ հայտնված և այն կարծիքը, թե՝ «ինչ վերս-
րերում է ներքին խմաստին, նա առանձին կարեօրություն չի
ներկայացնում»*: Իսահակյանի պոեմի մեջ տրված քննադատու-
թյունն արդեն հերքում է այդ պնդումը: Դրան պետք է ավելաց-
նել նաև «Յաղղագի հոչակափոր բանաստեղծի» բուռն ձգտումը
«գեղի արկեր, անմահ արկեր»: Նա ձգտում է հասնել
այնպիսի աշխարհ, «ուր մարդը մարդուն չի լկել բնալ»: Նա
երազում է «վում արկեր—աղատությունը աշխարհասփյուռ»:
Բանաստեղծը թեև նողկանքով ու զարչանքով փախչում է հասա-

* Ա. Մանվելյան, «Բուռահայ զբականության պատ.», Դ, էջ 129:

բակությունից ու մարդկանցից, քանզի «խարված է աշխարհից» ու «խայթված մարդուց», բայց կը բաղանար նա իր «անհայտ ուղղուց», եթե նույնիսկ մի հարազատ ձայն նրան ետ կանչեր, նա կը բաղանար.

Թե՛ մեկը մեներ ողջ աշխարհի մեջ
Ու սիրան անկեղծ բանար իմ դիմաց,

Բնձ անուշ կանչեր... ևս կդառնայի...
Բայց ոչ ոք չկա, ոչ ոք չի կանչում...

Գնա, քարավան ու ետ մի նայիր..., —

առված է պոեմի առաջին տպագիր վարխանտում («Գեղարք վեստ» 1909 թ. № 3, էջ 62): Կասկածից վեր է, որ «Երգեր ու վերքերի», «Ազատության երգի», «Ալս, մեր սիրութ լիքը դարդ ցավի»-ի, «Հացի երդի» հեղինակը «Արու-Լալա-Մահարի» պոեմով, թեև մի նոր «անհայտ ուղիով», բայց նորից ու նորից «մեծ ճշշմարտություն» էր որոնում: Այս պոեմն էլ այդ «սուրբ ճշմարտությունը» փնտուելու մի ձև էր, ազատասիրական ճգուման մի բուռն, իր բանաստեղծական արտաքինով անզուգական արտահայտություն, որը գեղարվեստական խորը հաճույք է պատճառում նաև մեր օրերի ընթերցագին:

Լեզվի ճկունություն ու գունագեղություն, նուրբ ու խորը լիրիզմ, կանոնավոր թեթևասահ ուիթմ, պատկերների ճոխություն, որը հասուկ է արևելքի կլասիկ պոեզիային, բնության տեսարանների հրաշագեղ նկարագրություններ, ձեր ու բովանդակության կատարյալ ներդաշնակություն.—ահա սրանցով է աչքի ընկնում «Արու-Լալա-Մահարին» գեղարվեստական կողմից: Ինչպես ճշշտ կերպով նկատել է պրոֆ. Ա. Տերտերյանը, պոեմի ոճի, պատկերավորման մեջ աչքի է ընկնում ժողովրդայնությունը: Մահարու մտքերն արտահայտված են գեղեցիկ ափորիզմներով, որ հեղինակը վերցրել է ժողովրդական բանահյուսության արսենալից: Ահա, օրինակ, «ոսկին դարձնում է գողին՝ ազնիվ արսենալից»: Ահա, օրինակ, «կյանքի արտում որո՞մն է աճում», «ծանոթ չները ու շխտակ», «կյանքի արտում որո՞մն է աճում», «ծանոթ չները չեն հաջում վրադ, ծանոթ մարդիկ են հաջում քո վրա»: «Թոթաշեն հեցեք ձեր սրունքներից ստրուկ աշխարհի զազրելի վուշին», մեցեք ներ սրունքներից ստրուկ աշխարհի զազրելի վուշին», «վաշի նրան, ով որ տուն ու տեղ ունի, կասկած է շան պես իրեն չեմին» և այլն, և այլն: Իսահակյանի «Արու-Լալա-Մահատան չեմին» և այլն, և այլն: Իսահակյանի «Արու-Լալա-Մահատան չեմին» մեր կլասիկ պոեզիայի անդին մարդարիտներից մեկն է, բին» մեր կլասիկ պոեզիայի անդին մարդարիտներից մեկն է, որով (նաև իր լիրիկայով) նրա մեծասաղանդ հեղինակը մտել է

Համաշխարհային պոեզիայի նշանավոր վարպետների շարքը։ Իսահակյանի պոեմը թարգմանված է տասը լեզվով՝ ոռուսերեն, անգլիացին, ֆրանսերեն, իտալերեն, յապոներեն, գերմաներեն, իսպաներեն, հրեյերեն և այլն։

Այժմ անցնենք Իսահակյանի մյուս նշանավոր պոեմին՝ «Սասմա Մհեր» վիպերգին՝ գրված 1919 թվին և առաջին անգամ տպագրված 1922 թվին («Արեգ» ժուռանալում)։

«ՍՍ.ՍՄ. ՄՀԵՐ» ՎԻՊԵՐԳԻ

Իսահակյանի ամբողջ ստեղծագործության մեջ, ինչպես և ընդհանուր առմամբ հայկական պոեզիայում, «Սասմա Մհեր» վիպերգը առանձին բարձրարժեք գործ է, որպես բանաստեղծական երկ, որպես հայ ժողովրդական հերոսական էպոսի ինքնատիպ մշակում, որը՝ Հովհաննեսի և Լևոն Մանվելյանի մշկումների համեմատությամբ մի քայլ առաջ է թե՛ իր գաղափարական բովանդակությամբ։ և թե՛ իր ձևով։

«Սասմա Մհերը» ուշագրավ գործ է և այն տեսակետից, որ նա հանդիսանում է իսահակյանի մինչ այդ անցած՝ զգալի զիգզագաներ ունեցող ճանապարհի հաստատուն հանդրվանը, որից հետո սկսվեց մեր մեծ բանաստեղծի կյանքի ու ստեղծագործության նոր՝ հետևողակենթերյան էտապը։ Ակնհայտ է, որ «Սասմա Մհերի» գաղափարական ուղիով էր, որ իր «կյանքի շեմքից» մեծ ճշմարտություն»—սոցիալական արդարություն ու իրավահավասարություն որոնող բանաստեղծը եկավ ու կանգնեց ճիշտ ճանապարհի վրա։

Այստեղ չենք կարող չնշել, որ սխալ է նույնացնել Արու-Լալա-Մահարուն և Մհերին, ինչպես այդ արել է բանաստեղծի «Բնափի երկերի» 1-ին հատ՝ առաջարանի հեղինակը, որի միքանի գրույթներն ևս մենք անընդունելի ենք համարում, որովհետեւ այդ առաջարանի տեսական հիմքը՝ Փորմալիստական-իդեալիստական գրականագիտության սկզբունքներն են։

Իհարկե, «Արու-Լալա-Մահարի» և «Սասմա Մհեր» պոեմների միջև եղեական օրոշ կապ կա (աիրող հանրակարգից զժողովին մինելը և նրա անխնա քննադատությունը), բայց, կրկնում ենք, նրանց հերոսների կերպարների նույնացումը սխալ է։ Մահարուն Մհերի էական տարրերություններն ակնհայտ են։

Մահարուն և Մհերի ամենագլխավոր տարբերությունն այն է, որ մինչդեռ «հոչակավոր բանաստեղծը բաղդադի»՝ հակառակում

է ամբողջ հասարակությանը—ողջ մարդկությանը, հեռանում է մարդուց ու մարդկայի ինից ընթանրապես և փրկության ելք է որոնում «ամայի անսալատում», Սասմա Մհերը, որն իր մեջ մարմացնում է ռամբիկ ժողովրդի կամքն ու գիտակցությունը, նրա ուժն ու թուլությունը, որոշակի հեռանկար ու սոցիալական իդեալ ունի, նույն ժողովրդի ուժով կործանելու տիրող կարգերը՝ հին աշխարհը՝ և բերելու «ռամկի օրենք ու իրավունք»:

Իր վիաբերդի համար ընտրելով մեր ժողովրդական էպոսի վերջին՝ չորրորդ ճյուղը, Ավ. Խսահակյանը նրա հերոսի—Մհերի կերպարի մեջ դատավ իր մեծ հուզումների, վառ ձգտումների հանգրվանը՝ Հոկտեմբերից հետո ստեղծված հասարակական կյանքի նոր պայմաններում:

Ինչո՞ւ Մհերը և ոչ թե նույնիսկ Դավիթը, որն, ինչպես հայունի է, դարձավ հայ ժողովրդի մեծագույն բանաստեղծի՝ Հ. Թումանյանի հասարակական-քաղաքական իդեալների մարմնացումը: Անկասկած, եթե Խսահակյանն ընտրած լիներ էպոսի մյուս ճյուղերից որևէ մեկը, իր վարպետ գրչով կկարողանար մի ինքնուրույն հրաշակերտ ստեղծել, որ կարելի կլիներ դնել հանձարեղ թումանյանի անմահ գյուղաղնապոեմի կողքին: Բայց Խսահակյանին ոգենորել է Դավիթի որդին՝ Սասմա Մհերը, որովհետև հատկապես այդ կերպարն էր համապատասխանում մեր բանաստեղծի հասարակական-քաղաքական այն խորը շըջապարձին, որ ապրեց նա Հոկտեմբերյան Սոցիալիստական ունուցչիայի հաղթանակի ազգեցությամբ:

Խսահակյանն էպոսի այս հերոսի կերպարով զբաղվել է շատ վաղուց, դեռ այն տարիներին, երբ նրա մտերիմ ընկերը՝ Հովհանումանը գրում էր իր նշանավոր «Սասունցի Դավիթը»: Բայց Խսահակյանն այն ժամանակ չգրեց և չէր կարող գրել «Սասմա Մհերն» այնպես, ինչպես և ինչ ոգով նա գրեց Մեծ Հոկտեմբերից հետո՝ 1919 թվին: Իսկ եթե նա այն ժամանակ գրեր «Սասմա Մհերը», ապա այն թերեւ չէր արտահայտի աշխարհում «ռամկի օրենք և իրավունք» բերելու անհրաժեշտության ու հնարավորության մարտական իդեան, որը դրված է այս նշանավոր վիաբերդի հիմքում:

Խսահակյանն այն ժամանակ, Հոկտեմբերից 15 տարի առաջ, բոլորովին այլ հայացք է ունեցել Մհերի կերպարի մասին:

«...Մհերը խոշոր տիազ է, բայց չարիքի, բացասական, դեմոնական...: Ըստին, Մհերը չին Արտավազդին է, չարիքի ողին,

չարի մարմնացումը, որը պատժվում է պարսկց Զոհակի պես, իսկ դրանով ոգելորվել դժվար է...»:

Այս խոսքերը գրել է Խսահակյանը Թումանյանին ուղղված նամակում՝ 1902 թ. Հուլիսի 7-ին *: Այն ժամանակ տիրապետող Հայացքն էլ հենց այդ էր Մհերի մասին:

Խսահակյանը պրետական խոսքի մեջ վարպետի ջանասիրությամբ մոտ երկու տասնամյակ ուսումնասիրեց մեր ժողովրդական էպոսը, խորհեց ու զատեց նրա վեհ կերպարներեց մեկի՝ Փոքր Մհերի մասին և իմերձու եկալ նրա նկատմամբ ճիշտ Եղբակացության, խորապես սիրեց նրան և անհուն ողերությամբ տոգորված, կերտեց գեղարվեստական դործ:

Նա հայ ժողովրդական էպոսից գուրս է բերել հերոսական-դյուցազնական մի կերպար, որի մեջ մարմնացած է ժողովրդի գարավոր ցասումը ոչ միայն օտարերկրյա բնակալների, այլև հատկապես աղջակից իշխողների, շահագործող դասակարգերի դեմ, մի հասարակության,

Որի հոգն արնոտ անդուռ հերկող
Չոր քար է կրծում իր հաղի հանդեպ**:

և որի պայմաններում

Բամիկ չարազատ
Չոր կուտե,
Հարուստ պարագ-մարդ
Մեղը կուտե***:

Թումանյանի «Սասունցի Դավիթն» արտահայտում է հայ ժողովրդի գարավոր պայքարն օտարերկրյա բնապետությունների դեմ, իսկ Խսահակյանի «Սամա Մհերն» աշխատավոր ժողովրդի, «ռամիկների» գասակարդի պայքարն է հայրենի երկրում տիրող անհավասարության ու անարդարության դեմ, ունեսը-շահագործող գասակարգերի ու նրանց բիրտ, անարդար օրենքների դեմ՝ հանուն «ռամիկության»:

Բայց «Սասունցի Դավիթ» և «Սամա Մհերի» միջև կա ան-խցելի օրգանական կապ: Վերջինս առաջինի անմիջական օրդա-նական շարունակությունն է: Դավիթը հայրենի Սասունն աղա-նական «ռամիկության»:

* Խսահակյանի այդ նամակը տպված է «Գր. թ.» 1933 թ. Ժարտի 31-ի Համարում:

** Ավ. Խահակյան, «Արու-Լալո-Մահարի», էջ 53:

*** Ավ. Խահակյան, «Սամա Մհեր», 1938 թ., էջ 14:

տում է օտարերկրյա ժանտ-հրեշի տիրապետությունից, և սակայն Սամնա ռամիկ ժողովուրդը գեռ մնում է ստրուկ ու զորկ, մերկ ու քաղցած, որովհետեւ արտաքին ժանտ-հրեշների ոչնչացումով չվերացավ «իշխաններու, սեպուհներու, ալատներու, հարուստներու» աիրապետությունը հայրենի երկրում: Եվ ահա, հանդես է գալիս Դամիթի հարազատ ժառանգը՝ Սամա Մհերը, որպեսզի շարունակի և ալարտի ժողովրդի պայքարը ամեն տեսակի ճնշումից պատ կարգերի ու երջանիկ կյանքի համար:

Բատհակյանի վիպերգում ուշադրավ են այդ հերոսի՝ Մհերի կյանքի մի շաբթ մոմենտները, որոնք նրան դյուցազնական առասպելական աշխարհից իջեցնում են իրական հողի վրա, դարձնում ուամիկ ժողովրդի իրական, նրա ծոցում ծնված ու ապրած հերոս: Օքինակ, Մհերը ծնվում է առանց որեւէ հրաշքի. Նրա աշխարհ գալու մասին երկնքից ոչ մի հրեշտակ ալիւտում չի բերում: Նա ծնվում է որպես իրական Դամիթի միանդամայն բնական զավակը: Բայց նա իր հորից ժառանգում է առասպելական ուժ, որով նաև գեռ նորածին մանկիկ, կարասում է դութիւնի շղթան, որ «բարուրի բինդերու փոխան փաթթել էին նրան»՝ վորձելու-ստուգելու,

Թե կոտրեց տղան կապանքն երկաթին,

Նա մեր ցեղեն է, առյուծ հոր որդին: (էջ 5)

Ամբողջ վիխերգում այդ մոմենտն է դյուցազնական-առասպելական և մեկ էլ Մհերի Ազուակու Քարի մեջ փակիւն ու անմահ-անմեռ մնալը. մնացած բոլորը՝ Մհերի կյանքում հիմնականում իրական հանդամանքներ ու մոմենտներ են, որ բնութագրում են նրան, որպիս իրական, ժողովրդական հերոսի:

Մհերն անձամբ ապրում ու կրում է ուամիկ ժողովրդի սոսկալի ծանր, տաժանակիր կյանքը և հենց այդ իրական կյանքի դժոխային բովումն էլ աճում ու հզորանում է Մհերը, ներծծելով անհավասարությունից բղխող բոլոր դառնություններն ու տանջանքները, որ վիճակված էին հասարակ, ուամիկ ժողովրդին:

Մհերը գեռ մանկուց «օր ու արեւ չի տեսնում», իր հոր անրավ հարսությունը հորեղբայրն ու մյուս իշխաններն են վայելում, իսկ ինքը Մհերը՝ «անհեր ու անմեր» մի կիսաքաղց «որբ մանուկ» իր «հորեղբայրն» է ծառայում, իսկ հետո, նրա կողմից արտաքսվում է հոր տանից:

Իր թափառումների չորեղիվ Ազնանց Մհերը չափում է աշխարհն իր հայրենի՝ ծայրեծայր և ամենուրեկ տեսնում է, որ

«Հյանքը չար մահ է», «հացն ու ջուրը—ոճի լեղի», իսկ հայրենիքը՝ «զնդան ամուր» ռամիկ ժողովրդի համար:

Այդ ամենը տեսնում է ու վճռում «բերդ ու պատվար շինել» և արդար կովի կոչն է ուղղում բոլոր զրկվածներին, աղքատ ու ձորա, բանվոր, մշակ ժողովրդին.

Ենենք գուշաբ
Ալմարքի զեմ զրկող ու չար.
Ողջ ամերենք
Ու ռամկություն բերենք աշխարհ,
Ռամկի օրենք ու իրավունք,
Որ տեր դատնա ռամիկն իրեն
Սուրբ վաստակին, արդար հացին:

Մհերի կովի այս կոչն էլ կազմում է իսահակյանի վիպերգի իդեական հիմքը:

Հաջորդ գլուխներում (Երրորդ ու չորրորդ) դյուցազներգական շնչով պատկերված է Յասման Մհերի բաղխումն իր հայրենի աշխարհի դաժան տերերի հետ:

Ահա «Մհերն արևազուն» սպառազինված իր դյուցազն հոր դենքերով «Հանց զոռ ամպրոպ, Անդոկ լեռան» վրայից ձայն է տալիս, կովի կանչում իր հայրենի ռամիկ ժողովրդին:

— կյ զուք, Սասմա ծռեր ու ճետ,
կյ զուք, զեղջուկ, մշակ ու ձորտ,
Զեսնել զիացող նիզակ ու նետ
Զեսնել զիացող զուրզ ու դեղարդ,
Թող ամենքը սպառազինվին,
Գան ինձի հետ —
Քանդենք հիմեն աշխարհը չար
Ու ռամկություն բերենք աշխարհ,
Ռամկի օրենք ու իրավունք,
Որ տեր դատնա ռամիկն իրեն
Արդար հացին, սուրբ վաստակին:

Ազ. Իսահակյանը լիովին ճիշտ է մեկնաբանում էպոսի այն մոմենտը, որ Մհերն անեծքի ազգեցությամբ է փակվում Աղոստականությունում:

Մհերի լմբոսաւացումն ընկճելու համար տիրապետողները միջնադարյան կրերի գլխավորությամբ՝

Նզովք արին զոռ Մհերին՝
Հայուարաբելով նրան «ներհակ նեռ» ու «ԴԱ Յասման», որն ուղղում է աշխարհ քանդել»:

Ինչպես էպոսում, նույնպես և խահակյանի վիճերգում Մհերի փակլեն Ագռավու քարանձալում, դա սիմվոլիկ-ալիգորիկ պատկեր է, որի մեջ խորը սեալիզմ կա. մոայլ միջնադարում ժողովրդական ապստամբության հերոսը նդովքի-անեծքի է արժանանում կլերի-եկեղեցու միջոցով, իսկ աշխարհիկ հշիստությունը, օրենքը նրան պատճում է ցմահ բանտարկությամբ:

Ագռավու Քարում բանտարկված Մհերը—շղթայված Պրոմեթեոսն է, դա՝ ժամանակավորապես պարտված ժողովրդի ըմբուտացման սիմվոլն է, ժողովուրդ, որն անմահ ու անպարտելի է իր կյանքով ու պայքարով:

Մհեր այրեն, Քարի խորեն
Խոլ կը թնդա, դղորդ կուտա
Բարկութենեն:
Կը լը ընջա ու կը դոփեն
Զին անձակոծ, կրակ ու բոց,
Ու կը ժամեն Մհերն ու Զին
Աշխարհն հիմեն:

Այս պատկերի մեջ ցոլանում է ժողովրդի անկաշխանող ըմբուտացման ոգին, որը կենդանի է մնում ամենազաժան սկայմանի բում անդամ:

Ժողովրդական էսպոսի համաձայն խահակյանի մոտ ևս Մհերն անմահ մնալով քարանձալում, ուամիկ ժողովրդի մասին է մտածում:

Նորե՞ն ուամիկ դառ կը դատի,
Աշխարհ կուտե,
Ու կը մնա ինքն անոթի՞...:

Հարցնում է Մհերը «լույս աշխարհից» Ագռավու Քարը մտած հովվին և պատզամ է տալիս նրան, որ ինքը հալիտյան չի մնա այրում. նա դուրս կդա այնուեղից,

Երբ չեղբն հասնի
Ուկորին,
Ուամիկ կանչի
Մհերին.

Եվ իր անձավում կազմ ու պատրաստ Մհերը՝
Հագած կուս ասղար,
Միշտ ու միաւլար
Կըսպասե աննինչ՝
Հողին ականջին
Ու ականջը՝
Ուամիկ կանչին:

Այսպես է վերջանում Խսահակյանի վիպերգի առաջին հրատարակությունը (1922թ.): Իսկ դա այն ամենն է, ինչ որ բանաստեղծը հյուսել է համաձայն էպոսի տվյալների:

Բայց Խսահակյանը չի բավականացել էպոսի տվյալով: Տասնհինգ տարի հետո, բացի այն, որ ստեղծագործական մեծ աշխատանք է կատարում, նորից հզկում ու կատարելագործում է իր երկը, նաև ավելացնում է մի նոր հատված՝ «Վերջերգը», որը ոչ միայն էպոսի փոքր Մհերի ճյուղի, այլև ողջ քառամյուղ ու բազմավարիանա էպոսի 1000-ամյա կյանքի տրամարանական լուսումն է և խորիմաստ ավարտումը:

Եվ իրոք, վիպերգի «Վերջերգը» կարդալիս ձեզ թվում է, թե՛ ինչպես այդ երկի հիմնական մասը, նույնպես և այս գեղեցիկ հատվածը, կարծես գրված է ժողովրդական էպոսի կոնկրետ տեքստի հիմնան վրա, այնքան հարազատ լրացում է նաև վիպերգի հիմնական մասի հետ օրգանապես կապված: Բայց ինչքան որ արժեքավոր է այդ կտորը, որպես գեղարվեստական ստեղծագործություն, կրկնակի անդամ արժեքավոր է նաև իր իրեական-քաղաքական հաղեցվածությունը:

«Վերջերգում» Խսահակյանը լիովին հավատարիմ մնալով էպոսի ոգուն, բանաված Մհերին զուրս է բերում անձավից: Մհերը, իր խոստման համաձայն, զուրս է գալիս Ագուալու Քարից ճիշտ այն պահին,

Երբ չեղբն հասավ չոր ոսկորին,
Ահեղ ցալին ճըշաց սամիկի:

Բանակից զուրս է գալիս Յասման Մհերը և գարերով ճնշված ժողովրդի վլուխն անցնելով, մարմնացնելով իր մեջ նրա հազարամյա ցասումն ու կամքը, գրոհում է, և հազար-հազարները նրա հետ մեկտեղ՝

Ագրաներու, իշխաններու,
Սեպուհներու, ավատներու,
Հարուստներու վրա մեկտեղ,
Ավերեցին աշխարհը չար,
Ու ումկություն բերին աշխարհ,
Ռամկի օրենք ու իրավունք,
Որ տեր գառնա ռամիկն իրեն
Սուրբ վաստակին, արգար հացին:

Այս գեղեցիկ հավելումը բանաստեղծը կատարել է գլխավորապես այն պատճառով, որ առանց դրա Մհերի պատմությունը

թերի կմնար, մի հանդամանք, որ Խսահակյանը նշել է դեռ 1902 թվին, երբ նա չէր ձեռնարկել իր վիպերգը գրելուն։ Հ. Թումանյանին՝ նույն տարվա հունիսին գրած նամակում, Խսահակյանը ճիշտ կերպով նկատում է, որ «նա (այսինքն Մհերի պատմությունը) կիսատ է, իսկ վերջը շատ վատ, անմիտ»։ Եվ ահա բանաստեղծն իր վարպետ գրչով լրացնում է կիսատ մնացածը, ինչպես այդ կաներ ժողովուրդն ինքը և բացի այդ էպոսի «վատ, անմիտ վերջը» նա վերափոխում է, տարով ժողովրդական հանձարեղ էպոսին հանձարեղ ավարտում։

* * *

Ավ. Խսահակյանն էլ, ինչպես Թումանյանն իր դյուցազնապոեմում, բանաստեղծական խոսքի հղկման, կատարելազործման հիմնալի օրինակներ է տալիս «Սամա Մհեր» վիպերգում։ Երբ համեմատում ենք այս երկի վերջին՝ 1938 թվի հրատարակությունը նախորդ՝ 1922 թվի հրատարակության հետ *, տեսնում ենք մեծ տարբերություն ի նպաստ ստեղծագործության կատարելագործման։ Այդ տարբերությունը նկատվում է վիպերգի բոլոր գլուխներում։

Փոփոխությունները տեղ-տեղ այնքան մեծ են, որ վիպերգի երկու հրատարակությունները տարբեր մշակումների, երկու տարբեր վարիանտների տպակորությունները նույնական են թողնում։

Խսահակյանի վիպերգն աչքի է ընկնում իր միքանի առանձնահատկություններով։

Ամենից առաջ ուշագրավ է նրա լիրիզմը. «Սամա Մհերը»՝ էպիկական գործ լինելով հանդերձ, չնչում է նուրբ լիրիզմով։ Վիպերգի էպիկական ընթացքը տողորոված է լիրիզմով. տեղ-տեղ ամենի շատ զգացմունքներ ու խոհեր կան, քան գործողության ցուցադրում։ Զգացմունքների ու խոհերի հետ միասին պոեմում կան բնության գեղեցիկ պատկերներ։ Ընթերցողն զգում է, որ «չար աշխարհից» հալածված և նրա հետ անհաշտ պայքարի մեջ մտած դյուցազն Մհերը բնության մեջ է զգում իր ազատությունը և իր զգացմունքներն ու խոհերը բաժանում է բնության հետ։

* Այդ երկու վարիանտների տարբերության համեմատությունը տես մեր՝ «Սամունցի Դալիթ» էպոսի մշակումները հայ գեղարվեստական գրականության մեջ ուսումնասիրության համապատասխան գլուխը։ «Սամունցի Դալիթ» յուղածու, Պետ. համալսարանի հրատարակություն, 1939 թ., էջ 158—162։

—Եւազ Մհեր սիրտը՝ խոլոր,
Միտքը՝ մոլոր,
Ճամբար ընկալ,
Ճամբան տեսալ՝
Սարի կանաչ մարմանդներով,
Չորի մարմանջ աղբյուրներով,
Վայրի հավեր ուրախ-զվարթ
Կը բանելին, ծափ կուտային,
Տաղով-խաղով, ուրախ-զվարթ:
Մհեր գարձալ՝ նրանց ասալ.
«Երանի՛կ ձեզ, վայրի հավեր,
Դուք օքնած էք, մարզն անիժած,
Աղատ, անպարտ,
Ընկերներով ու աղողոր պես
Կապրեք անհոգ ու սեր կանեք,
Ոչ արտատեր կը ճանաչեք,
Ոչ հարկ ու կոս, ոչ թաղալոր,
Երանի՛կ ձեզ, վայրի հավեր...»:

Իսահակյանի վիպերգն աչքի է ընկնում նաև իր բացառիկ ձոխ պատկերավորությամբ: Բանաստեղծն ստեղծել է շատ ինք-նատիպ գեղեցիկ պատկերներ ու համեմատություններ: Ահա մեկ երկու նմուշ.

Սասմա սեպ սարեր ոտներն անդռնդին,
Գլուխն երկնքին, ամպին ու շանթին,
Կը վաղեր Մհեր շանթի ետևն,
Փետուր կը պոկեր արծվի թեեն:

Մի ուրիշ պատկեր.

Սասմա գար-դուրան, աղբյուր հազարան,
Նման սուրացոյ սեդ առյուծներուն՝
Բաշերն արծաթի՝ փոստ քերծերուն:

Վիպերգն աչքի է ընկնում իր ինքնատիպ լեզվով ու ոճով,
իր բովանդակության ու ձեփ բարձրագույն ներդաշնակությամբ:
Գեղարվեստական գործի ձեփի հիմնական մոմենտներն են լեզուն և
ոճը: Իսահակյանի պոեմի առավելություններից մեկը, և շատ
կարեոր առավելությունն այն է, որ միջնադարյան Հայաստանի
սոցիալական կյանքի պատկերումը արվել է ժամանակի, էպոփիա-
յի շունչն արտահայտող լեզվով ու ոճով, համապատասխան լեզ-
վական կուլտուրայով: Ի տարբերություն Թումանյանի («Սա-
սունցի Դավիթ») և Մանվելյանի («Սասունցի Դավիթ և Մարա-
Մելիք» դրամա-պոեմը) մշակումների, Իսահակյանը հաջող ստի-

միզացիս է կատարել, նպատակ ունենալով իր վիպերգի արտաքին ձեւական առանձնահատկությունների միջոցով ևս առաջ էպոսի ժամանակը, դարը: Այդ դիմավորությամբ էլ բանաստեղծն իր վիպերգի հյուսվածքի մեջ հմտությամբ օդապարզել է հնաձեւ արագայայություններ ու բառեր: Ահա օրինակներ, որոնք տիպական են էպոսի դարաշրջանին. «Հանց սուր աշտե» (8), «ու կը ձեներ» (9), «ով զերկաթն իշխե» (6), «վես էր բնութքը» (6), «ի վերաշխարհին» (12), «իրար ետնուց» (18), «գումար փախան» (20), «ենենք գուպար», «դուռք ու գարպաս» (22), «օրանց մեկ օր» (24), «հուրնի ձին» (38) և այլն: Շատ տիպական են նաև հետեւյալ բառերը. վիրտ ու վահան, սուր ու աշտե, տեգ ու նիզակ, զրահ շապիկ, գունդ ու մկունդ, պարս ու աղեղ, և կամ իշխան, սեպուհ, ալատներ, ազատներ և այլն: Բայց ինքնատիպ լեզվից ու ոճից, իսահակյանի վիպերգն աչքի է ընկնում նաև իր հարուստ ու բազմազան տաղաչափությամբ, որի հիմքը մեր ժողովրդական էպոսի տաղաչափությունն է՝ իսահակյանի կողմից մշակված, բարձրացրած նոր ասափհանի:

Կարճ ու երկար տողերի զուգակցումը մեծ մասամբ անապեսայն, ինչպես և յամբական ոտանալորով—ահա «Սամա Մհերի» ասղաչափության հիմնական առանձնահատկությունը, որն և հատուկ է մեր էպոսին:

Աչքի է ընկնում նաև վիպերգի սիթմիկան ու հանգավորումը: Սկնհայտ է, որ բանաստեղծական խոսքի մեծ վարպետը շատ չեմ տահոգվել զեղեցիկ հանդեր ստեղծելու հարցով, և վիպերգում տեղ-տեղ հանդ չկա: Բայց այդ չի խանդարում, որ իսահակյանի վիպերգն օժտված լինի ճոխ-հարուստ հանգավորումով: Արհետականության-ձեւամոլության ոչ մի նշույլ իսկ չկա: Հանդերն իրենք-իրենք են գալիս բոլիսելով՝ բոլանդակությունը, միտքը ձիշտ արտահայտելու ձգուումից: Ահա նմուշներ «Սամա Մհերի» հանգավորումից. (բերում ենք տողերի վերջին բառերը, որոնց վերջին վանկերը կազմում են հանդ):

Լախտին—գետին—գեղապետին, եկան—ճոպան, մշակ—մահակ, հող—գյող, հասել—հնձել—կալսել, խուրձին—հացին, խալար—ծվար, տեղի—լեղի և այլն: Ըստ իր սովորության, իսահակյանը այստեղ էլ հաճախ տողամեջ կամ անմիջապես հաջորդ տողում կրկնում է նույն բառը տողամերջում, բայց այդ նա չի անում հանդ ստեղծելու համար, այլ՝ ցանկացած միտքն ավելի ցայ-

տուն, ուժքին արտահայտելու դիտումով, ճիշտ այնպես, ինչպես
ֆոլկորում:

Իսահակյանը յուրացրել և կիրառել է ժողովրդական էպոսի
ձեր, պատմելու եղանակը, բայց տվել է ամբողջովին ինքնատիպ
վոճի ստեղծագործություն:

Եթե համեմատենք մի կողմից Թումանյանի ու Մանկելյանի
և մյուս կողմից Իսահակյանի մշակումները՝ ժողովրդական էպո-
սից նրանց ունեցած տարբերություններով, կտեսնենք մի շատ
հիմնական էական տարբերություն այդ մշակումների մեջ: Թու-
մանյանի և Մանկելյանի գյուցազնապոեմները («Մասունցի Դա-
վիթ») գրված են ժողովրդական էպոսի պատումների հիման
վրա, նրանք այս կամ այն չափով էպոսի ստեղծագործական
«թարգմանություններ» են: Իսահակյանի վիպերգն էպոսի համա-
պատասխան ճյուղի եղած վարդանաների համեմատությամբ բո-
լորովին նոր մի գործ է, որն իր առանձին մոմենտներով է միայն
հիշեցնում էպոսի այս կամ այն կոնկրետ էպիզոդները:

Էպոսի գրեթե անհշան հատիկից Իսահակյանը ստեղծագործել
է բոլորովին նոր որակի երկ, որը կարող է համարվել էպոսի
չորրորդ ճյուղի մի բարձրարգեստ ու բոլորովին նոր վարդանտ:

Ամենայն իրավամբ կարող ենք ասել, որ մեծ բանաստեղծն
իր այս վիպերգի վերջին վարդիանում՝ «Վերջերգ»-ով հանդերձ,
մի խոչըն հայտնագործում է արել մեր ժողովրդական էպոսի
գանձարանում: Նա տարերայնորեն գտել է, որ հենց էպոսում
ժողովրդի ազգային պատառքական պատերազմը գերանում է
սոցիալական-քաղաքացիական պատերազմի, ուղղված ամեն տե-
սակի ճնշման ու շահագործման հիմքի՝ գասակարգային հասա-
րակության դեմ:

«Ասոմա Մհեր» վիպերգն, անկասկած, հայ բանաստեղծա-
կան կուլտուրայի մեծ հուշարձաններից մեկն է:

ԼԵԳԵՆԴԱՐՆ ՈՒ ԱՌԱԿՆԵՐԸ

Իսահակյանի պոեզիայում առանձին ուշադրության են արժանի նրա լեգենդներն ու առակները, որոնց մշակումով բանաստեղծն ավելի է լայնացրել իր կապերը Փուկլորի հետ և ալելի բազմազան դարձրել իր ստեղծագործությունը:

Նախ լեզենդների մասին։ Իրենց թեմատիկայով ու մոտիվներով Իսահակյանի լեզենդները նրա ողջ ստեղծագործության օրդանական մասն են կազմում և որոշ առումով՝ նրա լիրիկայի թեմատիկայի ու մոտիվների կրկնությունը տարբեր ժանրային ձեւ մեջ։

Լեզենդներն ըստ իրենց թեմաների ու մոտիվների կարելի է խմբավորել այսպես.

— Լեզենդներ մայրական ու որդիական սիրո մասին («Մոր սիրաը», «Մայրը», «Որդիական սեր»)։

— Լեզենդներ սիրո մասին («Լեյլի ու Մեծում», «Սիրահար Նաղոն», «Երկու թռչուն», «Իրիցկնկա աղբյուրը»)։

— Լեզենդներ՝ այլ և այլ ժողովուրդների պատմական անցյալին վերաբերող («Հրեական առասպեկտ», «Յահվեյի վրեժը», «Աթթիլան և իր սուրբ», «Ժողովրդի քնարը», «Մեր նախահայրերը» և այլն)։

«Մայրը», «Մոր սիրաը», «Որդիական սերը»—այս երեք լեզենդներն էլ մի հիմնական միտք են պարունակում, —այն, ինչ որ Իսահակյանն արտահայտել է իր «Պանդուխտ որդին» վերնագրով (գրված 1902 թվին) հուղիչ բանաստեղծության մեջ։—Աշխարհում-կյանքում ամենից հարազարդ մարդու համար՝ մայրն է, որ երեք չի մոռանում իր զավակին։ մայրական սերն անհանդելի է անդամ այն գետքում, եթե որդին դիտակցաբար, թե անդիտակցաբար լըսում է մորը՝ զոհում նրան հանուն մի այլ սիրո։ «Մայրը» և «Մոր սիրաը» լեզենդները թե՛ իմաստով և թե՛

սյուժեով՝ իրար շատ նման են. նրանք հայկական միենույն ավանդավեպի տարրեր մշակումներ են, մեկը («Մայրը») գրված 1907 թվին՝ Ալեքսանդրապոլում, մյուսը՝ նրանից տասներկու տարի հետո՝ 1919 թ. Ժընկում: Երկու մշակումների մեջ էլ մոր սերը հակաղբած է կող սիրուն. երկու դեպքումն էլ կող պահանջով տղան իր հարազատ մորը զոհում է, որպես ապացուց ամուսնական սիրո հավատարմության: Երկու դեպքումն էլ կինը, որպես մայր, հակաղբած է կին-ամուսնուն՝ դատապարտելով վերջինիս անսահման դաժանությունը, որով ամուսնական սերը հակաղբավում է որդիկան-մայրական սիրո զջացմունքին:

«Մայրը» վերնագրով՝ լեզենդի բովանդակությունը հետեւյալն է.

Հստ Շիրակի այս ավանդավեպի՝

Իրեն որդու, հարսի քով
Մի խեղճ պառավ մայր էր կենում,
Շանըր ականջ, կույր աչքով:
Ուս ու ձեռից ընկած, անճար,
Հաց չըտային, չէր ուզում,
Եվ օրն ամրոջ նրանց համար
Աղոթքներ էր մրմնջում:

Հարսն անտանելի էր համարում պառավին և պահանջում ամուսնուց, թէ՝

Տար, կորցրու, ազատվեմ . . . :

Տղան՝ հարսի ամուսինը և պառավի հարազատ որդին մեղքու հանցանք է համարում իր կող այդ պահանջի կատարումը. զիմաղբում է, չկարողանալով հաշտվել իր հարազատ մորը կորցնելու մտքի հետ:

Բայց ամեն օր հարսն անողոք
Ամուսնու սիրսն էր կրծում,
Եվ խստարար պահանջում էր
Իր չար կամքին գոհացում:

«Թշվառ մարդը, ճարը կտրած», «անգութ հարսի աչքի առաջ» իր մորը դնում է պարկի մեջ և տանում հասցնում է մի հեռավոր վայրի անտառ, որ լիքն է գաղաններով: «Ուշ գիշերին հասավ անտառ» և մորը մի ծառի տակ «ձգեց անտեր ու մենակ»: Եվ երբ նա

Ոտքը փոխեց, որ դառնար տում,
Մոր ձայնն հասավ ականջին,—
«Երթառ բարով, աստված քեզ հետ,

Այս պարզ ու սովորական խոսքերի մեջ արտահայտված է մոր սիրո ուժգնությունը, անսահման, անձնազոհ սերը հարազատ զավակի նկատմամբ, այն զավակի, որն ստրկաբար ենթարկվելով իր կնոջ համայականություններին, թեև ակամա, բայց տանից հեռացնում ու լքում է իր հարազատ ծնող մորը: Իսկ մայրը այդ գենգըում էլ միայն իր որդու մասին է մտածում և առաջարկում պարկը հետ տանել, «տանը պետք կըդա...»:

Մայրական սիրո հզորության պատկերը շատ ամենի ուժգին ձևով արտահայտված է «Մոր սիրութ» լեզենդում:

«Մոր սիրութ» հայկական ավանդապիետի սյուժեն փոքր է, բայց անսահման խորն ու հուզիչ: «Միամորիկ մի տղա սիրում էր մի աղջկա»: Իրեւ սիրո ապացույց աղջիկը տղայից պահանջում է, որ նա հանի իր մոր սիրութ և բերի աղջկան.

Աղջիկն ասալ—«ինձ բնավ
Դու չես սիրում,
Թե չէ դնա,
Գնա մորդ սիրութ բեր»:

Տղան լաց է լինում ու տանջվում, նա ինչպես կարող է հարազատ մոր սիրառ հանել, գոհել մորը հանուն աղջկա: Նա մոր սրտի փոխարեն սիրուհուն տանում է «սարի այծյամի սիրութ», բայց աղջիկն իմանում է ու պահանջում մոր սիրութ:

Տղան գնաց, մորն սպանեց,
Երբ վազ կըտար
Սիրութ ձեռքին,
Ոտքը սահեց, ընկավ վար:
Եվ սիրութ մոր տասվ տխուր,
Լացակմած.—
«Վայ, խեղճ տղաս,
Ոչ մի տեղդ չըցալամց...»:

Այս մոտիվն, ինչպես տեսանք վերեռում, Իսահակյանի Խրեկայի ամենակենսական մոտիվներից մեկն է և բոլոր մոտիվներից թերեւս ամենասհարազատը բանաստեղծի սրտին:

Բայց եթե «Մայրը» և «Մոր սիրութ» լեզենդները որդու նկատմամբ մայրական սիրո ուժգնությունն են պատկերում, ապա

* Ավ. Խանիկյան, Բնափր երկեր, Համ. 2-րդ, էջ 24—25:

«Որդիական սերը» (1926թ. վենետիկ)։ Վոքբիկ լեզենդով՝ տրվածէ մոր նկատմամբ որդիական սիրո օրինակը։

«Մի մայր ուներ չորս հատ որդի», նրանցից մեկը հռչակված էր իր կրթությամբ, «ուներ ամբիոն վարժապետի», մյուսը՝ «մի քահանա որբակենցաղ», երրորդը՝ հարուստ վաճառական,

Իսկ վերջնը... թափառական,
Կարիքի մեջ աղքատ ու խեղճ:
Երբ մահն եկալ, մայրը աստծուց
Շնորհ խնդրեց՝ տեսնել չիրմից,
Թէ ինչպիսի՞ վերաբերում
Պիտ ունենաւ որդիներից:
Վարժապետը գրեց ներբող,
Աղոթք կարդաց սուրբ քահանան,
Եվ հարուստ նիմրեց փող,
Բայց ևս սրդին թափառական
Տեկլած սիրուց բերեց...*։

Այս վոքբիկ սեղմ պատմության մեջ արտահայտված է անսահման խորը միտք։ Որդիներից և՛ «ուսայալ, հռչակավոր վարժապետը», և՛ «կրոնավոր, սրբակենցաղ քահանան», և՛ մեծ վաճառականը՝ կորցրել են հարազատ մոր նկատմամբ ունեցած սիրո զգացմունքը։ Իսկական անկեղծ սերը, աղնիվ անձնվեր որդիական զգացմունքը մոր նկատմամբ արտահայտում է միայն չորսրորդ որդին՝ «կարիքի մեջ, աղքատ ու խեղճ թափառական», որն իր «բեկված սիրուն» է բերում մորը։ Այդ «աղքատ ու խեղճ» որդու մեջ բանաստեղծը մարմնացրել է ժողովրդի փիլիսոփայությունը որդիական անկեղծ սիրո մասին։

Իսահակյանի լեզենդների երկրորդ շարքը, ինչպես նշել ենք վերեւում, սիրո մոտիվի շուրջն է պատմում և օրգանապես միանում է նրա սիրո լիրիկայի հետ։ Իսկ սիրո մոտիվն այն հիմնական օղակներից մեկն է (դրանցից ամենաառաջինը), որ կապում է իսահակյանի ստեղծագործությունը ժողովրդականի հետ։ Այս ցիլից ուշագրավ զործեր են «Լելի ու Մելլումը», «Սիրահար Նաղոն», «Երկու թռչուն», «Իրիցկնկա աղբյուրը»։

Ժողովրդական բանահյուսությունից կատարված այս մշակումների թվում առանձնապես արժեքավոր է «Լելի ու Մելլում» սիրավեսլը, որն արտահայտում է մաքուր, անկեղծ սիրո անմահության գաղտնիքը։

Բանաստեղծը լիովին հավատարիմ է մնացել ժողովրդական

* Ավ. Խահակյան, «Ընտիր Երկեր», Հատ. 2-րդ, էջ 21, 1940թ.։

Մայրը վախենալով որդու անեծքից, ասում է. «Ես հալալ արի իմ ծծի կաթը» և ցույց տալիս նրան Լեյլին հանդիպելու տեղը «Սնճանի աղբյուրի ական վրա»:

Իսահակյանն այս մանրամասնությունները բաց է թողել և այդ երկար պատմության փոխարեն տվել է միայն Մեջլումի երազի հայտնությունն իր մորը՝ շատ սեղմ ու գեղեցիկ:

Բաց թողնելով Մեջլումի մոր և Լեյլի հանդիպումը, Իսահակյանի մոտ՝ Մեջլումն ինքն է իր երազը պատմելուց հետո զնում վնասուելու Լեյլին: Այսուհետեւ՝ ժողովրդական վեպի համեմատությամբ Իսահակյանի մոտ չառ է տարբեր նաև Լեյլի և Մեջլումի հանդիպման նկարագրությունը, ուր բանաստեղծը ինքնուրույն շատ բան է ավելացրել, բայց այնպես, որ ավելացվածը հարազատորեն օրդանապես միացել է ամբողջությանը:

Ժողովրդական վարխանակում Լեյլի և Մեջլումի հանդիպումը նկարագրված է ընդամենը վեց տողով: Այդ վեց տողի հիման վրա Փողկորի վարպետ մշակողը կերտել է հետեւյալ հուզիչ պատկերը, որն իր մեջ ընդունելով ժողովրդականը՝ ներկայացնում է ստեղծագործական նոր որակ:

Առավոտ բարի լույս բացվի ձեր վրա,
Առավոտ բարի լույս բացված Լեյլի վրա.

Առավ կուժն ու զնաց աղբյուրը ջրի:
Հողին վկայեց ու եկած Բնագյուղի աղբյուրը ջրի:

— Այ, Մեջլում, բարե քեզ, ասավ Լեյլին:

— Հազար բարին քեզ, աչքիս վրա,

Սրտի սիրեկան Լեյլի:

Մեջլում նայեց Լեյլին

Ու կանգնալ մնաց:

Լեյլին նայեց Մեջլումին

Ու կանգնալ մնաց,

Լեյլի աչքերը զիշերվա երկինք են՝

Արեներով վառ.

Լեյլի մակերը արբշումն առուներ են՝

Ծուփ-ծուփ կը թափեն

Մարմարե կը ծքին...

Յոթն օր, յոթ գիշեր

Ոտքի վրա կանգնան էնոնք,

կը կիմանային թե նոր են եկած:

Այսպես տարբեր են նաև հետագա մասերը, որոնց նոր գեղեցկություն է տվել գեղարվեստական խոսքի վարպետը: Ռւշացրամ տարբերություններից մեկն էլ այն է, որ Իսահակյանը սե-

բավեալը զգալի չափով մաքրել է կրոնական մտածողության աղ-
դեցության մոմենտից :

Իսահակյանի մոտ Մեջլումի հարություն առնելը չկա, ինչ-
պես և չկա Լեյլիի մոր ուղեկցությունն իր աղջկան ու միասին
«ոսկորներն համարելը» և ասոված կանչելը: Դրա փոխարեն
տրված է Լեյլիի ողբը և մահը Մեջլումի «ոսկորների» վրա:

Լաց լացեց, լաց լացեց ու մեռալ
Տնավեր Մեջլումի ոսկորների վրա:

Այնուհետև տրված է «անմուրազ Մեջլումի ու երազ Լեյլիի»
աստղ դատնալը և նրանց՝ տարին մեկ անդամ «կարոտ-ձարավ
սրտով» իրար հանգիպելն ու դրկախառնվելը և ապա բաժանմելը՝

Լեյլին Մեջլումի տեղը,
Մեջլում՝ Լեյլիի.—
Լեյլին՝ հարավակողմ,
Մեջլում՝ հյուսիսա:

Աստղային ավանդություններից կազմված ժողովրդական այս
սիրավեպի գեղարվեստական մշակումը նրա՝ հեղինակի թե՛ մեծ
վարպետության և թե՛ ժողովրդայնության լավագույն ապա-
ցույցներից մեկն է:

Լեզենդների երրորդ խումբը առանձին հետաքրքրության է
արժանի:

Բանաստեղծը բաց է անում ընթերցողի առաջ ժողովրդի
(«Մեր նախաճայրերը») և այլ ժողովուրդների («Ժողովրդի քնա-
րը» և այլն) պատմական անցյալի՝ մերթ հերոսական, մերթ
տիժուր ու մոայլ էջերը և կենսական իմաստություններ քաղում
նրանցից: Հայկական, հրեական, սերբական ավանդություննե-
րը նոր կյանք են ստանում՝ դառնալով նրա հասարակական-քաղա-
քական մտորումների ու խոհերի արձագանքը:

Այդ ավանդությունների մշակումներն օժտված լինելով բար-
ձըր գեղարվեստականությամբ՝ միաժամանակ խորն իմացական
ձանաչողական արժեք ունեն նոր սերունդների համար:

Ահա «Ժողովրդի քնարը» վերնադրով լեզենդը, որ պատկե-
րում է սերբ ժողովրդի տիժուր պատմության ամենաողբերդա-
կան մոմենտներից մեկը:

Սերբ ժողովրդի այդ ավանդության մեջ հայ բանաստեղծն
իր ժողովրդի ողբերդական պատմությունը հիշեցնող հանդա-
մանքներ է տեսել: Բայց էականն ու հիմնականն այստեղ այն չէ,

որ կարդալով «Ժողովրդի քնարը»՝ ընթերցողը կարող է նրա պատկերների մեջ տեսնել նաև իր ժողովրդի պատմական անցյալի ողբերգական էջերը: Էականն այս լեզենդում ժողովրդական երդի կամ «Ժողովրդի քնարի» և բռնակալ տիրապետությունների անհաշտությունն է, որ տրված է խորը հուզիչ պատկերավորությամբ:

Փայլատակում է յաթաղանը կեռ
Արյունաթաթախ Սերբիայի վրա.
Եվ կոնչում են ազուալներն արրշիռ
Դիերով ծածկված դաշտերի վրա:

Այդ սուլթանական ահեղ բռնակալ Արդուլլահ փաշայի կեռ յաթաղանն է, որ փայլատակել է սերբ ժողովրդի գլխին ու սրախողին արել նրան: «Սերբիայի դահիճն» այդ՝ իր արյունոտ հաղթանակն է տոնում մի մեծ խնձույքով, որովհետեւ իր կաղմակերպած «վայրագ ջարդերի համար ստացել է նա Սուլթանից խալթ»: Եվ ահա՝

Բաղմել է փաշան ստուգի թափախն,
Ոսկե դավաթով չերեթ է խմում,
Ու երազում է՝ աչքը դավաթին,
Թե ուսկոկների արյունն է խմում:

Իսկ փաշայի շուրջը նստել են շարքով և՝

Զգարձանում են ննիչարները,
Հաշվում են իրենց սուր յաթաղանով
Մեկն թոցրած սերբ գլուխները,
Եվ հրառում են դիվական խանդով:

Սերբիայի դահիճը՝ Արդուլլահ փաշան՝ հրամայում է խընծույքի դահիճը բերել սերբ ժողովրդական երդչին՝ կույր գուսլակը ծերուկ Միթրկոյին: Սուլթանական բռնակալի փառասիրությունն անսահման է: Փաշան առաջարկում է ծեր գուսլյարին, որ սա երգ հորինի իր մասին, իր հաղթանակի ու փառքի մասին: «Բարեսիրո» դահիճը թեև իր ոտների տակ ծգմել է ամբողջ Սերբիան, արյունով ողողել ծեր երդչի հայրենիքը, բայց, ա՛յ, «խնայել է» նրա չորս դավակների կյանքը և խոստանում է բանտից ազատել նրանց:

Եվ խոստանում է ոսկի ու գոհար,
Նորից խոստանում ձիեր ու այդի,
Բայց լուռ է Միթրկոն...:

Նա տեսնում, է որ փաշայի խոստման համաձայն իր չորս
որդիներն էլ ուրախ տուն են գառնում բանտից, բայց դարձյալ
լուռ է, չի պատասխանում, չի կատարում փաշայի ցանկությու-
նը: Այս անդամ կատաղում է «Սերբիայի դահիճը» և ահեղ
սպառնալիքով կրկնում իր հրամանը.

—«Ու թշվաս դյավուր, գոռում է փաշան,
Երդիք անհապաղ, հրամայում եմ,
Իսկ եթե չերգես, վկա և ալլահն,
Չորս զալակեղ էլ ցցի կը հանեմ»:

Փաշայի կամակատարները պատրաստ են իսկույն կատարելու
նրա հրամանը:

Արյան մեջ խեղզված ժողովրդի երդիչը չի կատարում իր
հայրենիքի ահեղ դահճի հրամանը: Ժողովրդական երդչին չեն
շլացնում փող և առաստ խոստումները («ոսկի ու գոհար, ձիեր
ու այգի») և ոչ նույնիսկ իր հարազատ որդիների կյանքը, քանի
որ նորից ու նորից՝

Տեսնում է Միքան յաթաղանը կեռ,
Փայլատակում է Սերբիայի վրա,
Ել թեածում են ազռավները դեռ
Դիերով ծածկված դաշտերի վրա:
Միքան յասումով կանդում է ոտքի,
Զարկում է թափով գուսլին հատակին,
Եվ երեսնիվնը ահեղ փաշայի
Միքան հաղթական ճշում է ուժգին.
—«Ո՞ւ, սրբաներ, ճիվաղ, տմարդի,
Մորթեցե՛ք, լափե՛ք ավել, առավել,
Սակայն իմացե՛ք,
Որ ժողովրդի քնարը երբեք
Չի կարող ստել...»*:

Բանաստեղծն իր այս ստեղծագործությամբ արտահայտել է
մեծ իմաստություն ժողովրդի ստեղծագործության մասին: «Ճո-
ղովրդի քնարը երբեք չի կարող ստել»: Ժողովուրդը երբեք
«փառքի գաստան» չի հորինել իր դահճների մասին՝ ինչքան էլ
նրանք փորձել են խարել նրան կամ սպառնացել մահվան դատա-
վճորով: Ժողովրդի քնարը կարող է ներբողել միայն աղատադրա-
կան պայքարի վասքը և հայտնական անեծքով իրարանել բո-
լոր բնականերին:—Ահա այս է իսահակյանի այդ լեզենդի
իմաստը:

* «Ընտիր երկեր», Հատ. 2-րդ, էջ 37—40:

«Աթթիլան և իր սուրբ» բարբարոս հոների առաջնորդ՝ * Աթթիլայի ու նրա սրի մասին եղած առասպելի բարձրարկեստ մշակումն է:

Այս երկում պատկերված է անտիկ աշխարհի արյունարքու տիրականներից մեկի կերպարը՝ մարդկության մանկությունը ներկայացնող դարաշրջանի ահեղ տեսիլներից մեկը։ Ժողովուրդների արյան ծարավով բռնված Աթթիլան՝ ձեռք բերելով «Վրկանա բորբ տափաստանում մի կաղնու տակ թաղված» «հզոր, ահեղ սուրբ», իր վայրի հորդաներով արշավեց դեպի Սրեմուտք, իր սուրբ ճոճեց ողջ «արևմտյան աշխարհի դեմ»։

Արյան գետերում ծփում էր ողջ Եվրոպան, բայց Աթթիլայի մեջ ավելի ու ավելի էր բորբոքվում արյան ծարավը։

Իսկ երբ

Պաննոնայի արձակ դաշտում
Վես Աթթիլան՝ կուրծքը բացած,
Կանգնեց մի օր առավոտյան։
Սուրբ երկինք նետեց թափով,
Սուրբ իջալ շառաչումով,
Պատուց կուրծքը Աթթիլայի,
Մխոլց սրտում Աթթիլայի,
Ընկալ մեռած՝ Աթթիլան վար,—
Եվ խաղաղվեց սուրբ վայրադ,
Արյան ծարավը Հագեցավ։

Բարբարոսական հորդաների առաջնորդն իր գաղանային արյան ծարավը հագեցնելու համար երազում էր մի ահեղ սուրբ երբ ձեռք բերեց այն, ինչքան շատ մարդ էր նրանով սրածության ենթարկում, այնքան ավելի էր բորբոքվում նրա գաղանային ծարավը, որն այլևս անսահման ու անզսպելի էր դառնում, բայց երբ նույն սրով ինքը՝ Աթթիլան սպանվեց, այս անդամ «արյունախանձ վայրադ սուրբն էլ խաղաղվեց»։

Անսածարավ դահճի ծարավը կարող է հագենալ միայն նրա իսկ մահով և միայն նրա արյունով կարող է հագենալ սրի ծարավը, որովհետեւ այդ սուրբ կարող էր զործադրել միայն արյան ծարավով բռնված դահճիը։

Եթե Աթթիլան իր ահեղ սրով չսպանվեր, ապա ոչ ինքը, ոչ

* Աթթիլայի (մեռ. 453 թ.) առաջնորդությամբ հոները արշավեցին դեպի Եվրոպա և ստեղծեցին իրենց պետությունը, որ տարածվում էր Վոլգայից մինչև Հոկենսոց, հարկատու դարձնելով և տապա խորտակելով հռոմեական իմպերիան։

իր սուրը չէին հազենա արյունից, եթե նույնիսկ ողջ մարդկությունը սրի ենթարկվեր: Իսկ Աթթիլայի մահը միայն բավական էր մնացած մարդկության կյանքի խաղաղության համար: Առանց դահճի՝ սուրն արյան ծարավի թեև, բայց անգործածելի է, իսկ եթե կա դահճին՝ նա երազով իսկ կդտնի սրի տեղը և ձեռք կրերի այն ու կդործադրի՝ ձգտելով հազեցնել իր աճող անհագ ծարավը: Այս է ահա իսահակյանի մշակած առասպելի իմաստը:

Պատմության հեռավոր ժամանակներին վերաբերող այլ առասպելի մեջ կարելի է տեսնել ժամանակակից իմպերիալիզմի Աթթիլաներին, որոնց աշխարհայիշ սրի արյան ծարավն ալիւլի ու ավելի է բորբոքվում իմպերիալիստական սպանդի մեջ: Նրանց արյան ծարավը կհազենա միմիայն նրանց իսկ ոչնչացումով:

Այս ցիկլից մեծարժեք բանաստեղծական գործ է նաև «Մեր նախահայրերը» պատմական ավանդությունը, որի մեջ տրված է հայ ժողովրդի ավելի քան երկհազարամյա կյանքի նախապատմության գեղարվեստական ուրվանկարը: Ընթերցողը մի պահ հազարամյակներով ետ է վերագրանում գեղի Սարգուրիսի ժամանակները, նրա երեսակայության մեջ պատկերանում է հայ ժողովրդի շատ հեռավոր նախահայրերի ու նախամայրերի դյուցազնական մարտերը՝ հանուն ազատ ու անկախ հայրենիքի ստեղծման: Անդերջ ու ահեղ պատերազմներում թշնամի ցեղերին հաղթելով՝ մեր նախահայրերը, որ մինչ այդ հաստատուն հայրենիք էին որոնում, իրենց «լազերով շառաչուն» կանգ առան՝

Այրաբատյան դաշտի մեջ, Մասիսների հանդիման...
Հիմ գրեցին, վառեցին իրենց երդը սրբազն,
Եվ ծուրին ելավ ու փուլց գետերն ի վար նայիրյան.
Եվ Բագենը կանգնեցին իրենց արև-աստծու,
Քաջ Վահագնի, բաշխիչը հազթանակի և զինու.
Եվ Աստղիկի, բամբիչը վիշապաքաղ Վահագնի,
Աստվածունին գեղեցկի, հզոր սիրո և կյանքի:

Տալով մեր նախահայրերի հայրենիքի հաստատման սկզբնապատմությունը, բանաստեղծն իր զրույցն ավարտում է հետեւյալ քառասողողով՝

Եղան նրանք քաջ պետեր—հայեր ուսկուհ, հաղթական,
Աշխարհն եղավ Հայաստան և պիտ մնա Հայաստան՝
Մինչև արել հանգչի և ցուրտ աճյունը նրա,
Զյուն համայն ազգերի հայրենիքների վրա...*:

* Ավ. Խանիակյան, «Բանաստեղծություններ», 1930 թ., էջ 282:

Իր թեմայով ու բանաստեղծական կատարումով անշուշտ «Մեր նախահայրերը» բացառիկ զործ է Հայ կլասիկ պոեզիայում: Բայց չենք կարող չնշել, որ բանաստեղծի այս գործում արտահայտված է ազգայնական պատմահայեցողության ազդեցությունն: Նախ, որ ոռմանտիպացցիայի է ենթարկված նախահայրերի հերոսականությունն ու նրանց հեթանոսական կրոնը և ազգ՝ Հայ ազգի հավիտենականության միավոն է զարդացված, իդեալիստական մի հայացք, որ հակասում է՝ աղջերի ու ժողովուրդների պատմական զարդացման հեռանկարներին:

Բարձրարգեստ ու արժեքավոր գործեր են Խոահակյանի մյուս լեզվագիրներն էլ («Հրեական առասպեկտ», «Յահվեյի վրեժը», «Սոկրատեսը» և այլն), որոնց վրա չենք կարող կանգ առնել:

Ինչ վերաբերում է Խոահակյանի մշակած առակներին (մինչև այժմ նրանցից տապել են 15-ից ավելի), տպա պետք է նկատենք, որ գրանք վկայում են բանաստեղծի տաղանդի անհուն կարելիությունների մասին, նաև որպես առակազգի: Ինչպես Հայոնի է Հայ առակազրությունը Վարդան Այճեկցուց սկսած մինչև Արովյանը և նրանցից հետո մինչև Աղայանը, Թումանյանը, Ա. Խնկոյանը և Խոահակյանը՝ անցել է զարդացման նշանակալից ճանապարհ: Առակը, արձակ ու չափածո պրոզայից Խոահակյանը բարձրացրել է բանաստեղծական արվեստի մակարդակին՝ տալով նրան լիբիկական-իտոհական երանգ, մի գիծ, որ ավելի է բարձրացնում առակի ներդրություն ուժը—նրա ազդեցությունը ընթեցողի վրա: Խոահակյանի մի շարք առակները, ինչպես, օրինակ, «Կյանքից թանգ բանը», «Հաճույքն ու մահը», «Առակ» (Աստվածաշնչից), «Մի մկան պատմությունը» և այլն, իրենց արվեստով շատ բարձր են և կարող են գրավել լիբիկական լավագույն ստեղծագործությունների շարքը:

ԻՍԱՀՈԿՅԱՆԻ ՊՈԵԶԻՈՅԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թումանյանը գրել է, որ գեղարվեստական խոսքի «ուժը պարզության մեջ է»: Դրա համար նիցշեն տկար է, նաև չունի Գյոթնի պարզությունը»: «Արվեստը պետք է լինի աչքի նման թափանցիկ, պարզ և աչքի նման բարդ»:

Իսահակյանի բանաստեղծական արվեստը հենց ձիշտ այդպիսին է:

Իսահակյանի պոեզիայի, մասնավորապես նրա լիրիկայի բարձրագույն հատկանիշը և նրա հոչակի հիմքն ու աղբյուրը խոր ժողովրդայնությունն է: Անժխտելի է, որ ոչ մի հայ բանաստեղծ իր առաջին գրքով այնքան շուտ չի ժողովրդականացել, ինչպես Իսահակյանը: Այդ չնորհիլ այն հանդամանքի, որ նա հենց սկզբից իր ստեղծագործական ուղին գծեց ժողովրդական բանահյուսության հաստատուն հողի վրա, լայնորեն յուրացրեց այդ բանահյուսության ստեղծագործական ձևերն ու շունչը և հասավ ժողովրդական ստեղծագործության վճիռ պարզությանը:

Մուս բանաստեղծներից մեկը նկատել է, որ պոեզիան ինչքան հեռու լինի երկրից և ինչքան ավելի մոտ երկնքին, այնքան սառն է լինելու այն: Իսահակյանի պոեզիան իր արվեստի բարձրությամբ հանդերձ հեռու է երկնքից և անչափ մոտ է երկրին, արվեստին կենսունակություն ու կրակ տվող հողին, ժողովրդին, այդ պատճառով էլ այս պոեզիան երիտասարդ առողջ սրտի պես ջերմ է ու բարախուն: Թե՛ լեզուն ու ոճը, թե՛ պատկերավորությունն ու հանդագիրումը լիովին ժողովրդական են, Փուլկորացին, վերջինս բարձրացրած նոր բարձր աստիճանի:

Ժողովրդական երգերին հատուկ են, օրինակ, խոսքի առանձին ֆրազների ու բառերի կրկնությունները:

Այդ առանձնահատկությունը կա նաև Իսահակյանի մոտ:
Ահա օրինակներ .

Իմ չոր զլուխ, քուն չունես,
Դարդոս զլուխ, տուն չունես,
Արար աշխարհ ման կուղաս,
Սիրած գրկում բուն չունես....:

Մի ուրիշը.

— Միրելիս, մի հատիկ ես,
Աշխարքի մեջ մի հատիկ ես,
Ես մեռնեմ—քեզի մատաղ,
Դուն ծաղկեր,—մի հատիկ ես:
Ախ, աղջիկ, արտի միջին,
Զան աղջիկ, վարդի միջին,
Յսթ տարի քեզ սիրել եմ
Սրտիս ոև դարդի միջին:

Այս կրկնությունները և՛ էմոցիոնալ ուժ են տալիս ոտտանապորին, և՛ երաժշտականության բարձր հատկություններ, որոնցով օժտված է Իսահակյանի պոեզիան:

Իսահակյանի պոեզիան, մասնավորապես լիրիկան օժտված է գունագեղ և ուժեղ պատկերավորությամբ: Նա գեղեցիկ և հուզիչ, իմաստով լի պատկերներ է ստեղծում համեմատություններով ու հակագրություններով: Ահա՝ համեմատություններով ստեղծված պատկերների նմուշներ .

Քո աչերդ—հրեղեն ծով,
Ծովերի պես մազեր ունես,
Սիրտս՝ նազակ, սերդ՝ խենթ հով,—
Հովերի պես նազեր ունես:

Կամ»

Ջմրուխտ թասով գինի ես...,
Թաթիկներդ լուսեղեն —
Լույս թունիկներ հեքիաթի,
Դու կրուքս վարդի պես,
Դու կփայլես աստղի պես:

Առանձնապես աչքի են բնինում Իսահակյանի գործածածէ էպիտետները, որոնք մեծ դեր են խաղում իրեն պատկերավլորման միջոց, ըստորում նա լայնորեն օգտագործում է բնությու-

նը: Խսահակյանի քանաստեղծական ստեղծագործական լարորա-
տորիայի համար, ինչպես նկատել ենք վերևում, ողջ բնությունն
իր կենդանի ու անկենդան աշխարհներով ծառայում է իրեն վառ
գույների անսպառ աղբյուր, որից օգտվում է նա իր ստեղծա-
գործությունների համար: Եթե նկարչության մեջ կան բա-
նաստեղծներ, և պոեզիայում էլ կան նկարիչներ, ապա Խսահա-
կյանը մեծատաղանդ նկարիչ է մեր պոեզիայում, մեկը, որի
իսոսթի վրձնի տակ մարմնավորվում է մարդկային հոգեկան աշ-
խարհը բնական առարկայականությամբ: Նրա ստեղծած պատ-
կերները տեսողական շոշափելիությամբ են օժտված այնպես, որ
Խսահակյանին կարդալիս ընթերցողը ոչ միայն լսում ու զդում է,
այլև տեսնում, հայցըով շոշափում է պատկերվածը: Բա-
նաստեղծը իր հոգեկան ապրումները առարկայացնում է, որով
ավելի տպավորիչ է դառնում բանաստեղծական երկը:

«Իմ սարդարդեր, իմ ծով-ցավեր», «Լամ ու արցունքս աղի-
ծով դառնա», «Տես իմ սիրտըս—արյուն-ծով է», կամ ահա մի
տուն բնության գեղեցիկ զարդանկարով:

Դու նըշխում նուռ զար վրադ,
ես քու քուփի եմ, շատիդ մեջ,
Դու քեխուշ վարդ վարդ վրադ,
ես սերեկ եմ վշիդ մեջ,

Կամ այն պատկերը, որով բանաստեղծն արտահայտում է իր եր-
դի և շրջապատող խորթ, հեղձուկ միջավայրի հակադրությունը
և անհամատեղությունը.

Անտոն քոչնակս, իմ իեղճ, տխուր երգ...

Այս փուշ-աշխարհում, քար-սրտերի մեջ...

Դու՝ օտար թաշուն ժեռ քարերի մեջ:

Խսահակյանը լիրիկական պոեզիան մի քայլ առաջ տարագ՝
այն ժողովրդին ամենի մոտեցնելու ուղղությամբ: Նա գրել է
տառնյակ բանաստեղծություններ, որոնք իրենց ոճով, լեզվով,
իրենց արտահայտչական ձևերով խորապես ժողովրդական են:
Ահա նրա «Աշրդի խաղեր» շարքը և «Ալագյազի մանիներից» շատ
կտորներ որ գրված են ճիշտ ժողովրդական ստեղծագոր-
ծությունների, նաև աշուղական սիրային երգերի նման: «Դար-
դըս լացեք», «Ալրեցի», յարս տարան», «Մաճկալ ես...», «Ախ,
մեր սիրտը», «Օխտը սարտվ հոռո քեզնից», «Էս ճամբեն ոլոր-
մոլոր», «Սկա-մութ ամպեր», «Զմեռն անցավ...», «Իմ բախտին»,

«Ցղայի խաղը» («Ալագյազի մանկներ» շարքում), «Պաքեթը» (նույն շաբաթից) և ուրիշ շատերը:

Բերենք մեկերկու նմուշ՝ Իսահակյանի այդ կարգի բազմաթիվ երգերից:

Ահա, օրինակ, կտորներ, որոնք հիշեցնում են մեր ժողովը դական քայլակները.

Ով կյանք ունի, դարձ էլ ունի,
Դարդին դարձան յար էլ ունի,
Մենակ ես եմ անքախտ ծնել—
Սիրոս դարձու ու ճար չունի:

Ահա ուրիշ օրինակ, մի փոքրիկ սիրային բանաստեղծություն, որ իսկ և իսկ ժողովրդական սիրելով է.

Սամերդ հյուսել	Փշերն ինձ թողիր,
Կանգնել ես կալը.	Դու քաջիր վարդը,
Օրըս ու արել,	Դու սիրաը գըցիր
Կապել ես ալը.	Էս դժոր դարդը:

Սարեսաք արիր,
Ու գաղաք չունեմ,
Դարդամահ արիր,
Անունիդ մեռնեմ...

Իսահակյանը ունի նաև բարձրարվեստ տաղաչափություն, որը շատ բազմազան է, թեթևահաս, եռանդուն ու երաժշտական սիթմիկայով հարուստ:

Բանաստեղծն ստեղծել է տաղաչափություն կլասիկ նմուշներ: Նրա ոտանավորները մեծ մասամբ կառուցված են յամբանապեստյան խառնուրդով, պատահում են նաև զուտ անապեստյան ոտանավորներ, որոնք հետագայում աիրապետող դարձուն Վահան Տերյանի մոտ:

Ահա Իսահակյանի լիրիկայից անապեստյան ոտանավորի մի նմուշ:

Իմ հոգին, [տարագիր] մի թռչնուն,
Մըրկնվ [զարնված], թևաթնափ,
Հողմերն են [հեզ զլինիս] շառաչում,
Եվ ուղիս [անհատնում] և անափն եվ այն:

Իսահակյանի մոտ անապեստյան ոտանավորներ շատ չկան. բայց դրանք որոշ նշանակություն են ունեցել Վահան Տերյանի համար: (Փակադերում նկատենք, որ Իսահակյանի հիշյալ ոտանավորը դրված է 1905 թվին, իսկ Տերյանը անապեստյան ոտա-

նավորներ սկսել է գրել 1906 թվից և ավելի շատ 1907—1908 թվերից)։ Իսահակյանի պոեզիայում գերակշռում են յամբական և յամբ-անապեստյան ոտանավորները։

Բերենք մերքանի նմուշներ։

Յամբական քառոտնյա ութ վանկանի ոտանավոր։

Ով կյանք |ունի|, դարդ էլ ունի,

Դարդին |դարման| յար էլ ունի,

Մենակ |ես եմ| անընխութեան ծնել

Սիրալս |դարդա| ու ճար |չունի|.

Չուտ յամբական ոտանավորները քիչ են, տիրապետողը յամբի ու անապեստի խառն գործածությունն է ամենաբազմազան կոմբինացիաներով։ Ահա, օրինակ, յամբական ոտանավոր, բոլոր տողերը մեկական անապեստով։

Ներկա |եղան| սիրելիանիս| պատկեն,

Ուշախ |դեմքով| կը ծըլին |ծաղկել|՝ արնավառ,

Կամ թե՝

«Նորից |եկան| գարնան| անուշ| օքերը,

Ցուպս |առեմ| ընկնեմ| սար ու| ձորերը»

Ահա դարձյալ յամբական ոտանավոր՝ յուրաքանչյուր քայակի երկրորդ ու չորրորդ տողերը մեկական անապեստով, վերջուած։

Ես կուղելի խընավառ

Անապատ չամայի... և այլն։

Միօրինակությունից խուսափելու համար իսահակյանը համախնույն ոտանավորի սկզբան ու վերջը տարբեր չափերով է կառուցուած։ Ահա օրինակ՝

«Ես ճամբեն ոլոր-մոլոր» ոտանավորը, սրա ա. բ. և դ. քառակների բոլոր տողերը կազմված են մեկ անապեստից և երկու յամբից, իսկ դ. քառյակի ա. և դ. տողերը՝ միայն յամբից, անապեստ գործածելով միայն բ. և դ. տողերի վերջուած (127)։

Իսահակյանը փորձել է նաև քորեյական չափե՝ յամբի ու անապեստի խառնուրդով։

Ցուրա է |օ՛քս| բնուք ու լատագ,

Քամին |չաչնեմ| չառաչնեմ,

Ա՛խ, իմ |սիրալս| ինդն, վէլահար,

Տիսնը |մըմնանչ| լուռ ու մօնջ, (84)

Այս քառյակի արևոտ և դեմք տողերը քորեյական են մեկական յամբով, իսկ բարձր և դեմք տողերը՝ յամբական՝ մեկական անապիստ վերջում:

Իսահակյանի տաղաչափական արվեստի ուժը՝ ձեր և բովանդակության կատարյալ ներդաշնակ միասնությունն է, որն զգաւում է թե՛ լիրիկայում և թե՛ լեզենդներում ու պոեմներում: Նրա պոեզիայում ձեւապաշտության որևէ նշույլ անողամ չկա. բանաստեղծական խոսքի բոլոր ձեւերն ու պրիոմները նրա մոտ՝ ուղղակի նպատակ ունեն լիաբունն ու ցայտուն արտահայտելու տվյալ բովանդակությունը, բանաստեղծի միտքը, ապրումը:

Սակայն իսահակյանի պոեզիայում բանաստեղծական արվեստի տեսակետից աչքի է ընկնում մի հիմնական թերություն: Դա հանգավորման նկատելի աղքատությունն է նրա շատ ոտանալորներում: Իսահակյանի համար հաճախ երկրորդական-երրորդական հարց է տողերի վերջավորության բարեհնչունությունը, հանգավորումը, որը բանաստեղծական արվեստի մյուս պայմանների առկայության հետ միասին՝ մեծ դեր է խաղում ոտանավորի ընթերցումը հաճելի և տպավորիչ դարձնելու գործում:

Ահա միքանի քառյակներ, որոնք զուրկ են հանդերից.

Թարթիչներդ շուք կուտան
Դեմքիդ վրա թալլին,
Սերտս շուքի տակ ամուշ՝
Եվար մոտած կերազե: (Հատ. I, 47):

Կամ

Ես շատ եմ լացել սուրբ սիրու համար
Եվ ես լավ դիտեմ դինը ամենին —
Սերն է անկումը մեր աստվածության,
Շրջմուիկ շուրը կրքերի նահնի: (Հատ. I, 107):

Այսպիսի օրինակներ շատ կարելի է ցույց տալ իսահակյանի մոտ. այդ և նման այլ քառյակներում բանաստեղծական ստեղծագործությանը հատուկ բոլոր հատկանիշները կան, բայց հանգերից: Դրանք անհանգ բանաստեղծություններ են, թեև անկառած պակաս բանաստեղծական չեն, ինչպես, օրինակ, «Մայրիկ հիվանդ եմ» ոտանավորը:

Նկատենք սակայն, որ այդպիսի անհանգ ոտանավորներ համեմատարար ավելի քիչ են, քան թույլ ու աղքատ հանգեր ունեցող ոտանավորները, որոնք զգալի քանակությամբ կան իսահա-

կյանի մոտ : Հանգավորման թուլությունն ու աղքատությունն արտահայտվում է նրանով, որ իսահակյանը հաճախ հանդէ ստեղծում կամ մեկական նման ձայնավոր հնչյուններով և կամ նույն բառի կրկնությամբ տողերի վերջում, մի հանգամանք, որ գրալի չափով անհրապույց է գարձնում ամենաբանաստեղծական ուսանալունին իսկ :

Ահա մի քառյակ, որի առաջին տողն անհանգ է, իսկ մյուս Երեք տողերը նույնահանգ են, բայց միայն մի ձայնավորով (ա) :

Ճակատիդ վրա, աստղի պիս,
Պստիկ, պատիկ մի վերք կա.
Թող համբուրեմ լավանա,
Դու իմ կորիճ երեխա... (275) :

Այսպիսի միահնչյուն աղքատ հանգեր են նաև հետեւալներ՝ դասաւագանք—վայելե (I, 11), առնի—ճմիկ (115), խնձորն է—չը խածե (111), թելերս—սիրտս (129), առա—չկա (133), և այլն և այլն: Աղքատ են և այն հանգերը, որոնք կտղմիմած են երկշնչյուն (մի ձայնավոր և մի բաղաձայն) վերջավորումից: Օրինակ՝ նման—թափառական (67), գտնի—լինի (66), պարսեղում—լինում (71), իրար—համար (73), սրտին—հակաին, սեր—ձմեռ—դիշեր (75), վերքից—աեղից (76), և այլն: Հաճախ առանձին հոգ չտանելով հանգեր ստեղծելու ուղղությամբ, իսահակյանը նույն բառի կրկնությամբ է բավականանում: Այսեղ պետք է նկատել, որ բանասաեղծը այսպիսի դեպքերում հանդիպումարեն նույն բառի կրկնությունը տողավերջում կատարում է ոչ թե հանգ ստեղծել չկարողանալու հետեանքով, այլ հանգի անհրաժեշտությունը չի զուրմ և, ընդհակառակիը, նույն բառի կրկնությունն անհրաժեշտ է գտնում իր աղքումը—միոքը ճիշտ և ուժգին արտահայտելու նպատակով:

Վերցնենք, օրինակ, այս ութ տողանի ստանավորը.

—«Եղ ի՞նչ կըրակ կանես, մերիկ»:
— «Բալաս, վերքիդ գեղ կեփեմ»:
— «Ախ, իմ վերքը սիրտս է, մերիկ,
Դեղ ու դարման ի՞նչ անեմ:
Սրտիս վերքը խորն է, մերիկ,
Լալի, դարձի հույս չըկա,
Մի քըթըթիք սիրտս, մերիկ,
Խոր-խոցերսւա ճաք չըկա»: (79)

Այստեղ հանդ չկա, դրա փոխարեն կրկնված են «մերիկ» և «չըկա» բառերը, բայց տվյալ դեպքում գեղեցիկ ու հարուստ հանդերը չէին կարող փոխարինել մասնավորապես մերիկ բառի կրկնությանը: Եվ ընդհանուր առմամբ հենց այդ է պատճառը (տվյալ ապրումը—միտքը տպավորիչ և ազգու կերպով արտահայտելու նպատակը), որ իսահակյանը հաճախ է խախտում ոտանավորի հանդավորման տրաղիցիոն պահանջը և հանդի փոխարեն կրկնում է միևնույն բառը (երբեմն էլ մեկից ավելի բառերը նույն քառյակում):

Բայց այս ամենից չպետք է եղբակացնել, թե՝ ընդհանուր առմամբ թույլ է իսահակյանի համբավորման արվեստը:

Իսահակյանը վարպետություն է հանդես բերում ոչ միայն արտաքին (տողավերջի) հանդավորման դործում, այլև ներքին հանդեր ստեղծելու մեջ: Հաճախ այդ երկու մոմենտները միաժամանակ են հանդես գալիս, տալով արտաքին (տողավերջի) և ներքին հանդերի հիմնալի ներդաշնակություն, լիարուն ուժգնություն հաղորդելով ոտանավորի ներքին իմաստի արտահայտությանը: Իսկ երբեմն էլ ներքին և արտաքին հանդերի ներդաշնակությանը միանում է ալլիտերացիան (նույնահնչյուն բազաձայների կրկնությունը բառերի մեջ) և ասսոնանսը (միանման ձայնավորների կրկնությունը) միևնույն բանաստեղծության մեջ: Բահաստեղծական խոսքի այդ բարդ արվեստը մեծ կատարելության հասալ Վ. Տերյանի լիրիկայում:

Այդ արվեստի մի հիմնալի նմուշ է իսահակյանի «Իմ հոգին տարագիր» եռոտնյա անապեսոյան ոտանավորը (նրա ազդեցությամբ է Տերյանը նույն 1905 թվին գրել իր հայտնի «Անջատման երգը»): Նրանում կան և՛ արտաքին և՛ ներքին հանդեր, նրանում կա նաև ալլիտերացիա ու ասսոնանս: Վերջնենք այդ ոտանավորի հենց վերջին քառյակը միայն:

Իմ հոգին վերավոր մի թռչուն,
Չունի բույն, չունի քուն ու անդոքք.
Հոգմերն են հետ զլիիս շառաչում
Եվ ուղիս ու ու մութ և մոլոր...

Այս քառյակում վերջահանդ են կաղմում՝ քոչուն—շառաչուն և անդոքք մոլոք բառերի ընդգծված վերջավորությունները, հանդ են կազմում նաև առաջին տողի «վիրավոր» և երկրորդ տողի «անդոքք», ինչպես և երրորդ տողի «գլխիս» և չորրորդ տողի «ուղիս» բառերի ընդգծված հնչակցումները, ալլիտերա-

զիւա են կազմում երկրորդ տողի չերը, չորրորդի մերը և աստոնանս՝ երկրորդի ու չորրորդի ու-երը («չունի բռւյն, չունի քուն» «և ուղիս մե ու մութ»), ըստորում երկրորդ տողի առաջն չորս բառերը միաժամանակ և հանդ են կազմում («Զունի բռւյն, չունի քուն»):

Այսպիսով ակնհայտ է, որ իսահակյանը չի հետևում հանդ ստեղծելու արագիցիոն շարլոն ձեին, երբ մեծ մասամբ հանդավորում է քառասողի կամ ա. դ. և բ. դ. տողերի վերջալորությունները: Իսահակյանն օդապարզելով հայկական պոեզիայի տաղաչափության փորձը, հանդես է դալիս իր ինքնատիպ տաղաչափությամբ, ըստորում և հանդավորման իր արվեստով:

Կիրառելով վերջահանգը՝ իսահակյանը առանձին ուշագրություն է դարձնում և ներքին հանդավորմանը, որը տեղաբեր փոխարինում է վերջահանդին, աննկատելի դարձնելով նրա բացակայությունը:

Ահա, օրինակ, այս քառյակը.

Դերեզմանիս չորս դին փովին
Ցորեն արտերն ու ցոլան,
Եվ ուուիներն մազերն արձակ,
Վրաս ընկնին, անուշ լան: (93)

Այստեղ ա. և դ. տողերը վերջահանդ չունեն, իսկ բ. և դ. տողերի վերջահանդն են «ու ցոլան—անուշ լան» բառերի ընդուղված «լան»-երը: Բացի այդ կան և այլ հանդեր նույն քառյակում. այսպես, հանդ են կազմում «չորս դին—փովին» «ցորեն արտերն» «և ուուիներն» «մազերն» բառերի նմանահնչյուն վերջավորությունները (թեն, տերն, ներն, զերն), վերջապես հանդ են կազմում նաև ա. տողի վերջին («դին փովին») բառերը և դ. տողի երկրորդ (ընկնին) բառը:

Ահա այսպիսի մի օրինակ էլ.

Հայրենի դետի զմրութաս ափերին
Մեր իմ տնակն է կը մենալոր,
Ախ, ես հեռավոր ճանապարհներին
Քայլում եմ հիմա մենակ ու մոլոր:

Իհարկե, այս քառյակն ամելի հաջող է, քան նախորդը. այս-ամել ոտանակորի ոիթմն ամելի սահուն է ու գրավիչ: Հանդ են կազմում ոչ միայն ա. դ. և բ. դ. տողերի վերջավորություննե-

րը, հանդ են կազմում նաև ա. առղի վերջին («ափերին») ու երկրորդի երկրորդ («հին») բառերը, ինչպես և երկրորդի վերջին (մենավոր) և երրորդի երրորդ (հեռավոր) բառերն իրենց միահնչյուն վերջավորություններով:

Այլպիսի բազմազան ու հարուստ հանգավորումով են օժանդակած իսահակյանի թե՛ լիրիկական բանաստեղծությունները և թե՛ լեգենդներն ու պոեմները:

Գեղարվեստական բարձր արժանիքների շնորհիվ իսահակյանի պոեզիան Հովհաննես է Հովհաննես թումանյանի ու Հովհաննես ստեղծագործություններին հավասար չափով ծառայել է իրուկ անսպառ աղբյուր հայկական երաժշտության համար: Իսահակյանի պոեզիայից իրենց երաժշտական ստեղծագործությունների համար օգտվել են ավելի քան 15 երաժշտագետներ՝ սկսած 900-ական թվերից սկզբից: Բանաստեղծի խոսքի լիրիկան հորդառատ աղբյուր է եղել երաժշտական լիրիկայի համար: Հայ երաժիշտներից ամենից ավելի մոժանոս Մելքյանն է աշխատել իսահակյանի պոեզիայի տված տեքստերի վրա: Նրա ձայնադրություններից առանձնատպես նշանավոր է «Շափաղ կուտասը», «Ո նա մացրել է իր «Զմրուխտյան» երգերի շարքը: Անուշավան Տերյաններյանը ձայնադրել է «Ուռենին», իրրև քառաձայն խմբերդ: Իսահակյանից ձայնադրվել են ավելի քան հիսուն բանաստեղծություններ: Տարածված հայտնի երդեր են «Դարդն լացեք», «Մաճկալ հս», «Ախ, մեր սիրտը», «Հովիերն առան», «Սև մութ ամպեր», «Զմեռն անցալ», «Ախ, ալ վարդի», «Ես որ մեռնեմ», «Սև աչքերեն շատ վախեցիր», «Քույր իմ նազելի», «Գիշերն եկավ» և այլն, և այլն:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԲ

Մեր գրականության պատմությունն ու քննադասությունը կամ բոլորովին անտեսել է և կամ թերագնահատել իսահակյանի գեղարվեստական արձակը: Մինչդեռ արձակը նրա ստեղծագործության մի պատկառելիք բաժինն է կազմում և անկատակած նշանակալից տեղ է գրավում հայ արձակագրության մեջ: Ճիշտ է, իսահակյանը մեծ վարպետ է պոեզիայում և ամենից առաջ որպես լիրիկ բանաստեղծ, բայց նա ոչ պակաս չափով վարպետ է նաև արձակի ասպարեզում: Եվ, ինչպես պոեզիայում, արձակում ևս իսահակյանն օրիգինալ, ինքնատիպ հեղինակ է՝ իր ուրույն թեմատիկայով ու յուրահատուկ ստեղծագործական ձեւերով:

Իր մի աշխատության մեջ* պրոֆ. դոկտոր Արսեն Տերտերյանը իրավացի կերպով քննադատել է տարածված այն սխալ և անհիմն կարծիքը, ըստ որի՝ իսահակյանի արձակն ամրողապես համարվել է «մենության ու պասսիվիզմի» արտացոլում և գեղարվեստական արտահայտությունն»: Անշուշտ չի կարելի անտեսել մենության ու պասսիվիզմի առկայությունը իսահակյանի արձակում, բայց և չի կարելի չտեսնել, որ արձակագիր իսահակյանը տվել է նաև այնպիսի գործեր, որոնք ուեալիստական ճշմարտացիությամբ պատկերում են իրական կյանքը:

Իսահակյանի ստեղծագործության մեջ արձակը երևան է գալիս 900-ական թվերի սկզբին: Նայելով նրա երկերին, ամենից առաջ աչքի են ընկնում այն ընդհանուր զծերը, որ միացնում են նրա ստեղծագործության արձակի և պոեզիայի բաժինները:

Իսահակյանն արձակագրությունն սկսում է արձակ բանա-

* Պրոֆ. Ա. Տերտերյան, «Հայոց նոր գրականության պատմություն», պրակ 5-րդ, 1939 թ., էջ 78:

սաեղծություններից։ Նրա առաջին արձակ գործերը, ինչպես և հետագայում գրվածների մի զգալի մասը, հիմնականում արձակ բանաստեղծություններ են։ «Սիրո երգը» (1901 թվին հրատարակված «Վատակ» ժողովածվում), «Երգի հրապույթը» (1904 թվին), «Եղնիկը», «Սիրահար քամին» (1907 թ.), «Օմար Խայամի վեճը աստծու հետ», «Զեր ինդրածը իմ ոտների տակն է» (1909 թ.), հետագա տարիների գրածներից՝ «Մանկությունը», «Աղավոր արագիլը» (1912 թ.) «Լիլիթ» (1921 թ.), «Լի-Թայեղո» (1924 թ.), «Հեքիաթ» (ն. թ.), և շատ ուրիշ գործեր։

Իսահակյանը գեռ չի հրատարակել մի ընդհանուր ժողովածու, ուր ամփոփված կլինեին նրա բոլոր արձակ երկերը։ Բայց ժինչեւ այժմ հրատարակված՝ «Արձակ էջեր» հ. Ա. (1922 թ.), «Լիլիթ» (1927 թ.), «Համբերանքի չիբուխը» (1929 թ.), իսկ վերջերս էլ (1940 թ. սկզբին) «Բնտիր երկերի» բ. Հասորը՝ պարունակում են հեղինակի բավագույն արձակ երկերը։ բացի այդ առանձին գրքույթով լույս են տեսել «Աղա նազար» (1912 թ.) և «Նրանք զրոշակ ունեն» (1932 թ.) գործերը։ Մնացած արձակ երկերը, այդ թվում «Ռւստա Կարո» վեպի մի շաբք հատվածները, լույս են տեսել զանազան պարբերականներում։

«Ռւստա Կարոյից» մի ընդարձակ հատված տպագրվել է հեղինակի «Ծննդիր Երկերի» Բ. Հասորի «Արձակ էջերում»։

Թեմատիկայով, ինչպես և իդեալան-սուեղծագործական առումով ու մոտիվներով Իսահակյանի արձակը բազմազան է, ինչպես նրա պահպան։

Իսահակյանը շոշափել է բազմապիսի թեմաներ, որոնք ընդգրկում են՝ անհատի հոգեկան-մտավոր ու բարոյական աշխարհը, պատմական անցյալը և ժամանակակից սոցիալական կյանքը։

Ժամանակակից բուրժուական հասարակակարգում տիրող սոցիալական անհավասարությունը, ճնշումն ու անարդարությունը, բուռն բազոքն այդ կարգերի գեմ, ժողովրդի աղքատ ու զուրկ բուռն բազոքն այդ կարգերի գեմ, ժողովրդի աղքատ ու զուրկ կայանքը, վիշտն ու տառապանքը, երազանքը ժողովրդի-մարդկային երջանիկ, անվիշտ կյանքի մասին, կյանքի ու մահվան պրոբլեմները, սերը-ահա իսահակյանի արձակ երկերի մեծ մասը չիմնական թեմատիկան։

Ահա արձակագիր իսահակյանի առաջին գործերից մեկը՝ «Արևի մոտ» փոքրիկ նովելը (գրված 1905 թ.), որ մերկացնում է բուրժուական քաղաքում իշխող քար-անդթությունը դեպի գործությունը մարդը։ «Մի որր երեխա, ցնցոտիկարիքից ու քաղցից մեռնող մարդը»։

ներ հազած, կուչ էր եկել հարուստ տների պատերի տակ... մեկ-նել իր ձեռքը գեղի մարդիկ»: Բայց «ոչ մի մարդ չէր նայում, չէր ուզում նայել խեղճ ու որք երեխային»: «Միայն արևն էր տաքացնում նրա ցնցոտիածածկ մարմինը, բայց ահա մայր մտավ արել սարերի ետև, ակսեց փչել մի ցուրտ քամի, երեխան այժմ դողում է ցրտից: Նա ծնողներ չուներ, որս էր ու անօդնական, ո՞ւր գնար, ի՞նչ աներ...»: Նա մտածում է գնալ ու հասնել արե-վին, նրա մանկական երեակայության մեջ արել պատկերանում էր որպես մի մանուկ, որ մայր մտնելով գնացել էր իր մոր մոտ, իրենց տունը՝ «սարի ետեղ»: Որք երեխան հեռանալով ան-գութ քաղաքից, արև էր փնտում: Նա հավատում էր, որ կհաս-նի արեին: Եվ գյուղական հովի ընտանիքում նա իրեն դգաց ինչպես արեի մոտ:

Հեղինակը ցույց տալով բուրժուական քաղաքում տիրող ան-գթությունը, դրան հակադրում է գյուղական աշխատավորի պարզ և անկեղծ մարդասիրությունը: Կապիտալիստական քաղա-քում մեռել է, չկա մարդկայնություն, չկա կարեկցանք դեպի մարդը, այն կա՝ միայն գյուղում, ուր դեռ չի ապականել կա-պիտալիզմը:

Իսուհակյանը կյանքի երջանկությունը՝ փնտում է այնտեղ, ուր չկա փողի—անսիրտ «կանխիկ հաշվի» բարոյականության տիբասկետությունը, ուր մարդիկ սպրում են իրենց ճակատի քրտինքով—սեփական աշխատանքով, ուր չկա իշխող—հարստահա-րող բունքը: Երջանկությունը շքեղ ու շուայլ, ուրիշիւ աշխա-տանքով ձեռք բիրված հարստության մեջ չէ: Երջանկություն չկա քաղաքային հարուստի տանը, բայց կա ջրաղացպանի հա-մեստ, աղքատիկ խրճիթում («Երջանիկ խրճիթը»):

Այդ տեսակետից շատ ուշագրավ է «Գարեբարդիականը» (1907թ.) վերնազրով գեղեցիկ պատմվածքը: Այստեղ հեղինակը ծեր զարիբարդիականի նկարագրի, նրա կյանքի ու հայցքների պատկերման միջոցով խորը սոցիալական ընդհանուրացումներ է կատարում՝ հանգելով կապիտալիզմի ոչնչացման անհրաժեշտու-թյանը:

Պատմվածքի բովանդակությունը՝ «մի ծեր խորացի կոչկա-կարի» կյանքն է:

«Դրացիները նրան անխանում էին Զիոնիանի»: Նա ապրում էր քաղաքացիների կոչկեները կարկառելով: Նրա «անշուք, մերկ սենյակի մեջ աչքի էր ընկնում ոսկեղոծ շրջանակի մեջ Գարի-

բալըի մեծաղիք պատկերը, որ կախված էր ծերունու գլխավերկը: Զիովաննին Գարիբարդի զեկավարած խոալական ազգային-ազատագրական պայքարի մարտիկներից է: Նա ութիննը տարի շարունակ էղել է կամավորների բանակում, իր ընկերների հետ միասին, նա էլ շատ վերքեր է ստացել, որոնցով և լավացավ Հայրենիքի մեծ վերքը»: Խոալական աշխատավոր ժողովրդի պայքարով օտարերկրյա ճնշումից «ազատվեց սիրելի Խոալան, միացավ, զորեղացավ...»: Իսկ ի՞նչ մնաց ժողովրդին, Զիովաննին ու նրա զինակից ընկերներին և Գարիբարդի հետնորդ սերունդներին: «...Այնքան թանգ արյուններով դրսի թշնամիներից, օտար տերերից ազատված Խոալիան ընկավ մի նոր տեսակի գերության մեջ—մեր արյունակից տերերի ճանկն ընկավ, հարուստների և կառավարության պաշտոնյաների. Հարուստները ոսկի շղթայով կասեցին—կաշկանդեցին Խոալիան և իրենց ծանր թաթը դրին խոալական չարքաշ ժողովրդի սրտին և ճնշեցին. աղքատ է, շատ աղքատ մեր գյուղացին ու բանվորը. իմ որդին սպանվեց մեր կառավարության զինվորների ձեռքով, մի բանվորական գործադուլի ժամանակ, իսկ հարս գործարանի ծանր աշխատանքից թոքախտով մեռավ. Ես զայրացա ապերախտ Հայրենակիցներիս դեմ, լացնցի ընկերներիս արյունով ծաղկած հոլի վրա և որր թոռիս վեր առա, հեռացա այն դաշտերից, որոնց վրայով ես էլ, հազարների հետ, հաղթական անցել էի մի ժամանակ, ես չցանկացա ստրուկ լինել մեր ազատած Հայրենիքում, մենք էլ մարդ ենք, հապատություն ունենք»:

Մերունի գարիբարդիականի այս խոսքերը կոմենտարների կարիք չունեն: Գարիբարդիական Զիովաննինի կենդանի կերպարի միջոցով Խոահակյանը ուսասական առաջին ուերլուցիայի շրջանում («Գարիբարդիականը» դրված է 1907 թվին)՝ միանդամայն ճիշտ է հասկանում, որ ճնշված ժողովրդի ազգային պատությունը օտարեկրյա լծից դեռ ազատություն չէ բուն ժողովրդի համար, որովհետեւ այդ ազատությունից օգտվում են «արյունակից տերերը»: Պետք է նկատել, սակայն, որ Խոահակյանը կանգնած լինելով այդ ճանապարհի սկզբին, կամ ավելի ճիշտ՝ շատ մոտ այդ ճանապարհին, այնուամենայնիվ նա այն ժամանակ չկարողացավ ուղիղ գծով շարունակել ու զարգացնել «Գարիբարդիականի» սոցիալական իդեան: Դժբախտաբար, այնպես պատահեց, որ Խոահակյանը «Գարիբարդիականից» հետո բավ-

կան երկար ժամանակ թափառեց «անհայտ ուղիներով»՝ ինդիվի-
դուալիզմի ուղինով։ Այդ թափառումների «անհայտ ուղիների»
ստեղծագործական արտահայտությունները կան նաև նրա արձակ
երկնբում։ Հեռու լինելով սոցիալական պայքարից, նա մերժընդ-
մերթ շատ էր հեռու դնում իր թափառումների ընթացքում, հաս-
նելով մինչև բուդդայականության ուսմունքի դռները («Բուդ-
դան», «Բուդդան թուչուն»)։

Ամբողջ աշխարհում, «տիեզերքում ամենուրեք տիրում է
մշտնջենավոր անողոք անարդարությունը»։ Աշխարհը—երկիրը
«արյունազանեդ ցեխի մի անոթ է, որ լիքն է մարդկանցով, ոձե-
րով և որդերով, կենդանիներով և այլ գաղաններով, որոնք ան-
գուլ ու անդադար հռչուտում են իրար, պատառուտում իրար»։
«Մարդիկ դժություն և սեր չունեն» իրար նկատմամբ—ասում է
նա Բուդդայի բերանով («Բուդդան»)։ Ամենուրեք «կյանքը տա-
ռապանք է»։ «տեսա կյանքը մի բնու է, որ ծանրանում է ժամ
ժամի վրա»—կրկնում է նույն միտքը մի այլ տեղ՝ դարձյալ
Բուդդայի բերանով («Բուդդան թուչուն»)։ Իր այդ անհուն տա-
ռապանքների մեջ քար է աշխարհը, վիշտը համատարած է, իսկ
կարեկցանքը, վշտակցությունը չկա, կամ հազվադեպ է։ Հնարա-
վոր չե՞ արդյոք մարդկանց միջյց անգթությունը, քարսրտու-
թյունը վերացնել, հնարավոր չե՞ «մարդու կրծքի քարը իսկա-
կան սիրտ դարձնել»։ Այս հարցն է ահա կազմում «Երդի հրա-
պույրը» երազ-պատմվածքի (1904թ.) հիմնական մստիմը։

Երբ «աշխարհ եկալ երգը, երգի միջոցով հալլեցին» քար
սրտերը և այդ օրվանից սերը վշտի հետ անբաժան բռւն դրեց
մարդկանց սրտերի մեջ...»*։

Երգի—պոեզիայի ազեցությամբ սեր ու վշտակցության
դգացում առաջացավ մարդկանց սրտերում, բայց երգը անկարող,
անզոր եղավ վերացնելու վիշտը աշխարհից, որովհետեւ նա անկա-
րող է ոչչացնել աշխարհում ամենուրեք տիրող անողոք անար-
դացարությունը, սոցիալական անհավասարությունն ու ճնշումը,
որը մարդկային վշտի հիմնական աղբյուրն է։

Եթե անհնար է վերացնել վիշտը, եթե անհնար է ցամաքեց-
նել վշտի ակունքները, ապա պետք է գտնել—ցույց տալ սփոփան-
քի միջոցը։ Իսկ այդ միջոցը փոխադարձ վշտակցությունն է։

*«Արձակ էջեր», 1922 թ., էջ 26—28։

վշտակցիք ուրիշին, որպեսզի այդ ուրիշն էլ քեզ վշտակցիք, ըստ-որում նախ ուրիշինը, հետո քոնը: Այդ իդեան է արտահայտում, օրինակ, «Ահմեդի ուղար» նովելը (1912թ.): Ուշադրավ դործ է «Հորս գութանը» վերնագրով փոքրիկ սրամմածքը*, որն արտահայտում է գյուղական ժողովրդի հայացքը աշխատանքի դերի նկատմամբ, մի հայացք, ըստ որի «աշխարհը գութանի վրա է հիմնված»:

Տալով աշխատասեր հայ դյուղացու կերպարը, հեղինակը օտարերկրյա բռնակալի՝ թյուրքական սուլթանի արյունոտ քաղաքականությանը հակադրում է հայ ժողովրդի խաղաղասիրությունն ու աշխատասիրությունը:

Իսահակյանն իր արձակում հաճախ է գիմում Արևելքի պատմությանը: Նրա արձակ երկերի մի դրայի մասի թեմատիկան վերցված է Արևելքի կյանքից: Արևելքին դիմելն Արևելություրուական քաղաքականությանը, կալիսալիզմին հակադրվելու միջոց է Իսահակյանի համար: Արևելքը հարազատ է իր մինչկապիտական պարզ հարաբերություններով, իր մեծ մտածողներով ու բանաստեղծներով, աշխարհի մարդկության տառապանքով առգործած, աշխարհում տիրող չարիքին թշնամի «մարդարեներով»: Բայց նույն Արևելքն իր հին ու նոր պատմությամբ Իսահակյանի մոտ հանդես է գալիս նաև իր դեսպոտներով՝ ու բռնություններով, ժողովուրդների տաժանակիր կյանքով: Արեւելքի պատմության այդ կողմի սրաւկերումն էլ նպատակ ունի հարվածելու ժամանակակից բուրժուական կարգերին, որոնք այլ ձևերով փաստորեն վերսկանդնել են արևելյան դեսպոտիզմի ճշումները ժողովուրդների նկատմամբ:

«Ֆաթիկ Սուլթան Մեհմետ» (1921թ.), «Շիհուանդ-Շիբողդիխանը» (1907թ.), «Զինական մի հին զրույց» (1935թ.), «Զինական մեծ պարսպի Երդը» (1935թ.), «Զինդիկ Խանը» (1907թիվ), «Զիլի Սուլթանի Երդը» (1933թ.). այս պատմվածքներում շատ վառ ու ցնցող պատկերներով ներկայացված են Արևելքի (մասնավորապես չինական ու թյուրքական) ամենանշանավոր արյունաբրու դեսպոտներից միքանիսի դաժանատեսիլ կերպարները:

Իսահակյանը ընթերցողի աչքի առաջ կանգնեցնում է այդ դեսպոտներին իրենց կենդանի գաղանային դեմքերով և ամեն իրեն հատուկ դաժանություններով: Ահա, օրինակ, «Ֆամակն իրեն հատուկ դաժանություններով գանգնիսի դաժանատեսիլ կերպար-

* «Արեգ», 1929թ. № 5:

թէհ Սուլթան Մեհմեդ» վերնադրով պատմվածքը (պատմական պատկեր) :

Այսուղին ըստ երեսութին վերաբերում է Թուրքական սուլթան Մեհմեդ Ա-ին (1430—1481), որը դահ է բարձրացել 1451 թ. և իշխել է ամբողջ 30 տարի:

Պատմությունից հայտնի է, որ սուլթան Մեհմեդ Ա-ի հսկա տիրակալությունը հիմնված էր աներևակայելի բնությունների վրա: Նվաճող կոչված այդ սուլթանը արյունաբրու գեսպոտ էր: Բայց հայտնի է նաև, որ նա առանձին հակումն ուներ դեպի գեղարվեստը, դեպի պոեզիան ու նկարչությունը:

«Նա իր արքայական հովանավորությունը տարածում էր բանաստեղծների ու փիլիսոփաների վրա և սիրում էր նրանց հետ խոսել բարձրագույն նյութերի մասին: Ինքը ևս գրում էր պարսկերն լեզվով գաղելներ, —Ավելի կեղծ անունով»: Եվ ահա, սուլթանն իր արտաքին ու ներքին քաղաքականության հարցերը լուծելուց հետո պատվիրում է, որ իր առջև բերեն հրավիրված բանաստեղծներին և իտալական նշանավոր նկարիչ Զենտիլ Բելլինին:

Եվ իրոք, ներս հրավիրված արվեստագետների հետ սուլթանը գրույց է անում բացառապես արվեստի շուրջը: Նա բանաստեղծ Համդիին հայտնում է, որ ինքը կարգացել է իր «սիրելի Զամբի» «Յուսուֆ և Զուլեյկան» և ցանկություն է հայտնել, որ Համդին «այն ևս թարգմաներ ժողովրդի համար այնպես կատարյալ, ինչպես թարգմանել է Նիզամիի «Լեյլու-Մեջրումը»»:

Բանաստեղծներից հետո Սուլթանն սկսում է իր համար շատ բնութագրական մի զրույց «վենետիկցի նշանավոր նկարիչ» Զենտիլ Բելլինիի հետ:

Սուլթանին վրձինի այս «հոչակավոր վարպետը ցույց է տալիս մի պաստառ, որի վրա նկարած ուներ Հովհաննես Մկրտչի կտրած գլուխը: Սուլթանը հիացած գովում է նկարի վառ գույները, ապա հարեւանցի ասում—«Սակայն պարանոցի այս կտորը միաը, որ դեռ նկատվում է կտրած գլխի վրա, իրականին չի համապատասխանում»: Նկարիչը զարմացած նայում էր սուլթանին:

— Այո, —շարունակեց Սուլթանը, —երբ մեկը գլխատվում է, պարանոցը իսկույն ոչնչանում է, որովհետեւ նրա մկանները մորթերի ջղերի և երակների հետ անմիջապես քաշվում-կծկվում են գլխի և իրանի միջև:

Այսպիսի գիտողություն կարող էր անել միայն բազմահմուտ-

դահիճը, որն անթիվ գլխատումներ էր կատարել և ուշադիր հետաքրքրությամբ ու վայրի սառնասրությամբ հետեւել, թե ինչ ձևեր են ստանում գլխատված մարդու մարմնի երկու մասերը՝ իրանն ու գլուխը, և ուրեմն կարող էր նկատել, թե գլխատված պարանոցն ինչ վիճակի մեջ է լինում:

«Գեղարվեստամբ փաղիշահը» նկատում է «նկարչի կատաձանքը» իր արած գիտողության ճշտության մասին և իր ասածը նկարչի առաջ փորձով հաստատելու համար հրամայում է պալատական զինավառ դռնապան-պահակին, որ մի ստրուկ բերե: Ստրուկին դահիճ բերին. Սուլթանի ակնարկի վրա պահակը թրի մի հարվածով թոցքեց ստրուկի գլուխը ներկաների սարսափած աչքերի առջև. հետո Սուլթանը հրավիրեց նկարչի ուշադրությունը կտրած գլխի վրա:

— Ճշմարիտ չէ՞ ասածս, սիրելի Բելինի:

— Այո՛, իսկ և իսկ, իմաստուն արքա—պատասխանում է Բելինին՝ զսպված սարսափով (89—90):

Իսահակյանն իր արձակում տվել է և՛ ոսմանտիկական գործեր (օրինակ «Լիլիթ» ժողովածուն, «Արձակ երկերի» զգալի մասը) և՛ ուելիստական ստեղծագործություններ:

Ուելիստական ուղղության գործերից են՝ «Բնկերը», «Համբերանքի չիրուխը» (1928թ.), «Կալվածատերերի մոտ», «Մուսար Պալլովիչի երազը» (1933թ.), «Նրանք գրոշակ ունեն» (1932թ.), «Երվանդ Միրարյան» (1933թ.) և այլն, որոնք աչքի են ընկնում իրենց սոցիալական ակտուալ թեմատիկայով՝ ուրարձր գեղարվեստական ընդհանրացումով:

Ուշագրավ է և նշանակալից, որ Իսահակյանն իր ուելիստական արձակը տվել է գերազանցապիս սովիտական շրջանում: Իր ամենածավալուն արձակ գործը՝ «Ուստա Կարո» երգիծական վեպը, որը գեռ անալարտ է, և որի վրա հեղինակն աշխատում է մոտ 30 տարի, զգալի չափով նույնական հետհոկտեմբերյան շրջանի գործ է: Անավարտ լինելու պատճառով առայժմ հնարավոր չէ գերջնական խոսք ասել «Ուստա Կարոյի» մասին, բայց այս գործի զանազան ժամանակներում լույս տեսած միքանի հասուածների * հիման վրա կարելի է որոշ ընդհանուր

* — «Ուստա Կարոյից» մինչև այժմ տպագրվել են հետևյալ հատվածները.

— «Լելի և Մեղմում»՝ Հովիկ Մահսույի պատմածը, («Հարիդոն» 1911թ.

№ 02 և «Դիր և կրանք» 1911թ.):

— «Ուստա Կարոն հովիվների մոտ» («Գեղարվեստ» 1913թ. № 5):

Վկտորվություններ անել ու գնահատել հեղինակի այդ նշանավոր աշխատությունը:

«Ուստա Կարոն» հեղինակի մտահղացման համաձայն լինելու է Հայկական «Դոն-Քիշոտը»:

Վեպի լույս տեսած հասպածները վկայում են, որ «Ուստա Կարոյի» ամենամեծ արժանիքը նրա ժողովրդայնության մեջ է:

Վեպի մեզ հայտնի հասպածները ցույց են տալիս, որ «Ուստա Կարոն» լինելու է մի խոչոր գեղարվեստական գործ: Իսահակյանի հատկապես այս երկը (ոչ պակաս չափով նաև «Համբերանքի չիրուսը») ներծծված, ներթափանցված է «Ժողովուրդ-ների առակներով», ու առածներով, զրույցներով ու ասումներով»: Վարպետորեն օգտագործած են ժողովրդական ավանդություններ («Արաքսի ծնունդը», «Աշուղ Վշտալիի պատմածը»), սիրավեպեր («Լեյլ-Մեջլումը», վեպի «Ուստա Կարոն Հովիմների ժոտ» հասպածում) և այլն:

Հեղինակը ոչ միայն իր հերոսներին է համով-հոտով խոսեցնում, այլև ինքն է պատմում ու նկարագրում իր հերոս Ուստա Կարոյի «Հաղլադյուտ չնորհքով»: Ինչպես Ուստա Կարոն է խոսում առակներով ու առածներով, իր միտքն ամելի ցայտուն, «կրու ու կոփ» արտահայտելու համար, այնպես էլ հեղինակն է պատմում ու նկարագրում՝ իր առածը համեմելով ժողովրդական բառ ու բանով: «Ուստան նմանը չունեցող խոսքաշեն մարդ է»—ասում էին զյուղացիներն Ուստա Կարոյի մասին: «Ուստա Կարոյում» հեղինակը մարմնացրել է իր աշխարհայացքի—մտածողության շատ հիմնական գծեր, որոնք արտահայտվում են վեպի համակական դրացմունքով գծված գործող անձերի և մասնավորապես Ուստա Կարոյի կերպարի մեջ:

Աշխատասիրությունը, սերը և անխոլիի կապը ժողովրդի հետ, ամրության անհավասարության քննադատությունը, սիրո ուժի պաշտամունքը - և կնոջ սիրային-ամուսնական

— «Արաքսի ծնունդը» (Աշուղ Վշտալիի զբուցը)» («Արեգ» ժուռնալ, 1922 թ. № 2):

— «Ուստա Կարոն և զյուժեցի վաճառականները» («Արեգ», 1922 թ. № 8):

— «Ո՞վ էր Ուստա Կարոն» («Գրականության քրեստոմատիա», 9-րդ դաս, 1937 թ.):

— «Գյումբեցի կապիստն Ղաղարը»—«Նախերդանք», «Ղաղար աղայի տոհմը, մկրտությունը և ընտանիքի գաղթը», «Կապիստն Ղաղարը» պատմում է իր «գլուխ դալածները» (Ալ. Իսահակյան—Ծնոտիր Երկեր, Հ. Տ. 1940 թ., էջ 182—201):

Հավատարմության հարցին առանձին մեծ կարևորություն տալը —ահա մի շարք գծեր, «բոնք աչքի են ընկնում «Ուստա Կարոյի» լույս տեսած հատվածներում»:

Պետք է նկատել, սակայն, որ Ուստա Կարոյի—ուրեմն և իրա՝ հեղինակի հայացքը սիրո ու կնոջ մասին քիչ հակասական է: Նա ընդունում է, որ մերը չատ զորավոր ուժ է, բայց դրա հետ միասին նա կնոջ հավատարմության մասին խիստ բացասական կարծիք է հայտնում: «...Դու չգիտե՞ս, որ կնիւա ճամպեն մեկ գրկեն մեկել դիրկն է»—ասում է նա հովիվ Հոչոյին, երբ լսում է, որ Հոչոյի սիրած աղջիկը թեե խոսք էր տվել, բայց ուրիշները խումբ են ու Հոչոյին անմուրազ թողնում:

Իսահակյանի ուեալիստական արձակ գործերից ուշադրության է արժանի «Բնկերը» (կամ «Բարեսիրտ շունը») վերնագրով պատմվածքը:

Իր այս պատմվածքում Իսահակյանը մի կոնկրետ իրական գեղքի նկարագրությամբ հաստատում է «Արու-Լալտ-Մահարի» պուեմում կատարած ընդհանրացումը: Բուրժուական դայլային բարոյականություն ունեցող հասարակության մեջ քիչ թե չառ գիրք ունեցողներն իրենց վարքի մեջ արտահայտում են բուրժուական հարաբերությունների հակամարդկայնությունը: Շունչ ամելի բարեսիրտ, ամելի զթասիրտ է գեպի մարդը, քան թե բուրժուական հասարակության մեջ գիրք ունեցող անհատը: Այս է «Բնկերը» պատմվածքի միտքը:

Հետաքրքրական փաստ է, որ հետհոկտեմբերյան շրջանում՝ «Սամա Մհեր» վիպերգից հետո, Իսահակյանը գրել է գերազանցապես արձակ երկեր:

«Ուստա Կարոյի» միքանի հատվածներից բացի, նրա ուեալիստական գործերից են նաև «Հին գյուղը» (1924թ.), «Բայրամ Ալին», «Համբերանքի չիրուխը» (1928թ.), «Երվանդ Միրարյանը» (1929թ.), «Կարլածատերերի հետ» (1932թ.), «Նրանք դրոշակ ունեն» (1932թ.), և միքանի այլ պատմվածքներ, ինչպես նկատեցինք վերեւում:

Հին, մինչսովովետական շրջանի հայ գյուղի մոայլ խավարի ու աղքատության ցայտուն ուեալիստական պատկեր է տրված «Հին գյուղը» (1934թ.): Հիշողություն-պատմվածքում: «Հին գյուղի» մի այլ, ամելի ծավալուն ու կենդանի պատկեր է «Համբերանքի չիրուխը» վերնագրով պատմվածքը (1928թ.): Այս գրվածքի հերոսը՝ Օհան-ամին ոչ միայն իրական ու կենդանի

մարդ է, Օհանն-ամին մեր կլասիկ գրականության ամենակենդանի կերպարներից մեկն է: Իր մի շաբք գծերով, աշխարհի ու կյանքի մասին հայտնած իր մարքերով՝ Օհանն-ամին հիշեցնում է Հ. Թումանյանի «Հառաչանք» պոեմի ություննամյա ծեր գյուղացւուն: Իսահակյանի Օհանն-ամին էլ՝ թումանյանի գյուղացունման իր բազմամյա կյանքի բարձրությունից «նայում է աշխարհին, միտք է անում աշխարհի բանը», բայց և տարբերությում է նրանից, որովհետև թումանյանի ծեր գյուղացին ուզում է հրացան վերցնել ու հետեւ չորսն՝ «աշխախանի գյուղացին՝ աշխախանի գյուղացին»: Իսկ Իսահակյանի գյուղացին արգեն զաքախ է գարձել, ճերբակալիկ ու բանտ է նստել: Բայց երկուսն էլ գյուղացիական պայքարի նույն էտապի ներկայացուցիչներն են, որ իրենց մեջ մարմնացնում են աշխատափոր գյուղացիության ազատազրական ձգտումները, երադանքը հողի և ազատ կյանքի մասին: Ըմբռստացումը տիրող սոցիալական ճնշման ու անհամարտարության դեմ և կյանքի, մարդկանց ու աշխարհի մասին վիլիսովիայելը—ահա այս գծերով է օժտված Օհանն-ամին:

Իսահակյանի այս գործում տրված են ժողովրդական իմաստության մի շաբք վառ արտահայտություններ աշխարհի, մարդկանց ու կյանքի մասին:

«Մարդը կերթա, աշխարհքը կըմնա».

«Մարդը գնացական է, նրա լավ գործը մնացական. ըսել է՝ ինքն է մնացական: Ա՛յ, խոսքի օրինակ, էս շաբարը քցեցիր չայի մեջ՝ հալավ, կորավ, չկա, բայց չայն անուշացավ: Էնպես էլ լավ մարդը կըմեռնի, բայց նրա լավ գործը աշխարհք կանուշցնի: Թե չե՝ առանց լավ մարդու աշխարհքը շատ զառն է՝ օձի լեզի...» (24)—ասում է Օհանն-ամին: Իսկ ո՞րն է հիմնական հատկանիշը «լավ մարդու»—ըստ Օհանն-ամու.—ամենից առաջ աշխատասիրությունը, իր ճակատի քրտինքով ապրելը և մարդու կյանքի իմաստն էլ աշխատանքն է: «Հո հարստության համար չեմ դատում. իմ աչքս կուշտ է: Տղերքս իրանց համար, ես՝ ինձ համար: Իմ հացս քրտինքովս պիտի ուտեմ: ...Աշխարհքից բան տանող չի եղել, բայց մենակ թե մարդս էս աշխարհքն եկել է աշխատանքի համար»:

Օհանն-ամու վիլիսովիայությունը՝ նահապետական պարզ, աշխատասեր ու անշահասեր գյուղացու վիլիսովիայությունն է, որն իր սուր ծայրերով ուղղված է «արունքուեր աշխարհի» դեմ, բուրժուական ձրիակերության—պարտարուծության, շահագործման ու շահամոլության, ինչպես և գծծի ժլատության դեմ:

Սնկասկած ռեալիստական գործ է և «Երվանդ Միքարյան» վերնագրով սատիրական պատմվածքը*, որը մեծարժեք ստեղծագործություն է թե՛ իր սոցիալական խմասառվ, և թե՛ իր գեղարվեստական կատարումով։ Հատկապես այս պատմվածքում աչքի է ընկնում Խաչակյանի ստեղծադրության վարպետությունը՝ մարդու հոգեբանություն տալու, տիպական խարակությունը գործում։ Այս պատմվածքի հերոսը ծայրահեղ էղոցենտրիկ մարդու տիպ է։

Առաջին հայացքից թվում է, թե Երվանդ Միքարյանը մի անհավանական եղակի բացառություն է իր եսամոլությամբ, իր «փորաբանության» արտասանվոր տեսությամբ։ Երվանդ Միքարյանի «Տանարանյան» նրա կյանքի զեկավար «սկզբունքների» հանրագումարն է։ Միքարյանը «ամեն առավոտ, ուսուցչական իր պաշտոնին դնալուց առաջ, ուշադիր կարդում էր «Տանարանյան», որպեսզի ցերեկվա կյանքի ընթացքում անշեղ հետեւ նրա պատվիրաններին»։ Ահա միքանի պատվիրան այդ «Տանարանյաից»։

«Ուրիշ մարդ այնքան ինձ համար արժեք ունի, ինչքան որ նա պետք կդա իմ կյանքիս ու առողջությանս համար։

Թեև գլուխը փորի վրա է, բայց փորը գլխից վեր է։

Այս մարդուն հաց տուր, երբ հաստատ գիտես, թե առնվազը փոխարենը պիտի ես ստանա։

Ով որ հացիս եղ քսեց, նա իմ սիրելի և հարգված եղացը ըստ մարդուն է։

Պատվիրաններից մեկն էլ ասում է թե. «Մի պատառ հացը հաղար խթանից ու խորհրդից շատ է»։

«Աշխարհը եսն է։ Ամեն ինչ եսին պետք է ծառայի»։

Այս պատվիրանների համաձայն Միքարյանի համար աշխարհում ոչինչ նվիրական ու սրբազն բան չկա, բացի իր անձնական գոյության ապահովությունից, ապահովությունն, որ, ըստ Երվանդի, պետք է արտահայտվի ամենից առաջ փորը միք կուշտ լինելու մեջ։ Եվ աշխարհի, բնության նորմալ կյանքը նրա մոտ պայմանավորված է իր փորի կշտությամբ։

«Երբ կուշտ կերած ու խմած էր լինում, աշխարհի իրերը իրենց տեղումն էին լինում»։

Եվ ինքն էլ հաճախ ասում էր — «Երբ կուշտ եմ լինում, երկ-

* Տպված է «Նոր ուղի» ժուռնալում, 1929 թ., № 1, էջ 103—110։

բազունդը իր առանցքի շուրջը դառնում է կանոնավոր կերպով»:

Այդպիսով, Միբարյանն իր բոլոր հարաբերություններն արտաշխարհի հետ պայմանավորում է իր եսի շահերի, իր փորի լիության երաշխիքով: Այդ սկզբունքով է նա մոտենում նաև կնոջ և տղամարդու փոխարարերության հարցին:

«Կինը կշտացնողինն է, և ոչ քե նրան երկրպագողինը»: Բառ երվանդ Միբարյանի կնոջ և տղամարդու փոխարարերությունը գուտ անասնական ու նյութական հիմք ունի, մարդկային-բարոյական ոչինչն չկա, հետեւարար և չկա սեր, սիրո զգացմունք:

Այսպիսի դավանանք ունենալով, երվանդ Միբարյանը, իրեն ընջապատող մարդկանց հասած ամենածանր դժբախտության մոմենտին իսկ՝ շարունակում է հետեւողական լինել:

Պատմվածքի մյուս և հիմնական մոմենտն այն է, որ ցույց է տալիս նույն այդ էղողենորիկ մարդու վերաբերմունքը Հայաստանի սովորացման նկատմամբ: Եվ իսահակյանի այս գործի բուն իմաստն էլ այդ մոմենտով է արտահայտված:

Ահա այդ մոմենտը. 1920 թվի վերջերն է. Հայաստանը դաշնակների արյունոտ տիրապետության տակ, հասել է կործանման եղբին. երկրում համատարած սով է:

«Գիտե՞ս, էն ժամանակ մի զարի հացը մի գլուխ արժեր» պատմում է Միբարյանը:

Ահա այս օրերին երվանդ Միբարյանը հարևան գյուղից ստանում է—«մի գարի բոքոն»: Ծոյն է գնում և բերում տուն. խնամքով, գաղտնի թաղցնում իր սնդուկում, կողպելով այն, որպեսզի տնեցիներից ծածուկ մի՛մի կտոր ուտի:

Հենց այդ օրը լսվում է ուրախ լուրը Հայաստանի սովետացման մասին՝ ոռուսական կարմիր բանակի օդնությամբ, դաշնակների մահատարած տիրապետության տապալման մասին:

Միբարյանն իրենց գյուղում հանդիսավոր է ուռու կարմիրքանակյինի և ուրախությունից գնում է իր պահած զարի բոքոնը բերում ու սիրով և խնդրանքով ամբողջությամբ տալիս է նրան:

«Ինչն էր դրդիչն այս զոհարերության, որ կյանքիս մեջ թերևս առաջին անգամն էր կատարվում: ...Ես բերանիս պատառը, որ նույնիսկ մորս և եղբորս երեխային չեմ տալիս, բոլոր սրտովս ամի ոռուսին...»—ինչո՞ւ, հարցնում է երվանդը և բացատրում. «Տվի, որովհետև այն հաստատ համոզումն ունեի, որ

կոմունիստ ռուսի հետևից գալու է հաց, խաղաղություն և տպահովություն»:

Ակնհայտ է, որ ծայրահեղ եսամոլ Երվանդ Միքարյանն այս դեպքումն էլ ելնում է իր տասնարանյայի պատվիրաններից, որոնցից մեկը ասում է «Այն մարդուն հաց տուր, երբ հաստատ գիտես, թե առնվազը փոխարենը պիտի հետ ստանաս» (Էջ 103): Բայց չնայած այդ հանդամանքին և այն՝ հենց չնորհիվ այդ հանդամանքի, իսահակյանի այս պատմվածքը սոցիալական իմաստ է պարունակում:

Փր. Էնգելսն իր «Բանվոր գասակարգի դրությունն Անդլիայում» նշանավոր աշխատության մեջ նշում է կազմիտալիստական մեծ քաղաքում (օրինակը՝ Լոնդոնն է) աիրող «բիրտ անտարբերությունը, լոկ մասնավոր շահերի մեջ կղզիանալու ամեն մեկի այս անզգացմունք վերաբերունքը»:

«Մենք գիտենք,—շարունակում է Էնգելսը,—որ յուրաքանչյուր անհատի այս մեկուսացումը, այս սահմանափակ եսասիրությունն ամենուրեք ներկա հասարակության հիմնական սկզբունքն է կազմում», իսկ այդ «սկզբունքը» ոչ մի տեղ այնքան անամոֆարար, այնքան բացահայտորեն, այնքան գիտակցորեն չետարտահայտվում, որքան հենց այստեղ, խոշոր քաղաքի այս ժխորի մեջ: Այն հանգամանքը, որ մարդկությունը տարրալուծվելով՝ մոնադների (մենակների) է վերածվել, որոնցից յուրաքանչյուրն իր առանձնակի կենսական սկզբունքն ունի, իր առանձնակի նպատակը, այդ տարրալուծումը, ատոմների այդ աշխարհն այստեղ իր գագաթնակետին է հասել»*:

Հասկանալի է, որ բուրժուական «հասարակության այդ հիմնական սկզբունքը»—«բիրտ անտարբերությունը, լոկ մասնավոր շահերի մեջ կղզիանալու այս անզգացմունք վերաբերունքի» հոգերանությունը, ըրջապատող մարդկանցից «մեկուսանալը, սահմանափակ եսասիրությունը»—բոլոր անհատների մեջ համասարչափով չի արտահայտվում, այլ մեկի մոտ թույլ, մի ուրիշ մոռ շատ ավելի ուժեղ կերպով:

Երվանդ Միքարյանը, որպես ուժալիստական գեղարվեստական տիպ, իր մեջ խտացնում է բուրժուական հարաբերություններին մատուկ մարդկային հոգեբանության այդ բնորոշ գիծը, սահմանուկ:

* Ֆր. Էնգելս, «Բանվոր գասակարգի դրությունն Անդլիայում», 1934 թ., էջ 66—67:

հատկանի հսահմբությունը, որն իսահակյանի պատմվածքում արտահայտված է Երգանդի «Տասնարանյա» պատվիրաններում ու նրա գործողությունների, նրա վարք ու բարքի մեջ: Բայց ծայրահեղ է գոցենտրիկ Միբարյանի «անձնազոհության» քայլով նշվում է Հոկտեմբերյան ռեռլուցիայի, սովետական իշխանության հզոր ուժը՝ Երկրի կյանքի վերափոխման գործում: Այդուժն այնքան հզոր ու հաստատուն է, որ նույնիսկ եսամոլ, ամենինչ իր ստամոքսի ու կյանքի արդահովման շահերին ենթարկող Միբարյանը, որի համար «Աշխարհը եսն է, ամեն ինչ եսին պետք է ծառայի», նույնիսկ նա՝ սովետացման դեռ առաջին օրը ուռական Կարմիր Բանակի, սովետական իշխանության հաղթանակների մեջ տեսավ «Հաց, խաղաղություն, ասպահովություն»: Եվ հենց այս էլ կազմում է իսահակյանի պատմվածքի գլխավոր խմաստը:

Հիշենք, որ իսահակյանը 1926—1930 թվերին Սովետական Հայաստանումն էր: 1926 թ. սկզբին գրած «Արու-Լալայի վերադրձը» նշում է ժողովրդական բանաստեղծի հաստատուն վերադրձը իր նոր հայրենիքը, Սովետական Հայաստան, ուր նա՝ հիշյալ հինգ տարիներին արգեն հաստատապես կանգնեց սովետական գրականության գիրքերում:

Իսահակյանն իր արտասահմանյան վերջին տարիներին է դրել այնպիսի արժեքավոր արձակ գործեր, ինչպես «Կարլածառերերի մոտ», «Նրանք զրոշակ ունեն», «Ռոտմիստր Պավլովիչի երսպը», որոնք սոգորված են կոմունիզմի գործի նկատմամբ նվիրվածության ողով:

Այդ Երկերից առանձնապես երկուսը՝ «Կարլածառերերի մոտ» և «Նրանք զրոշակ ունեն» պատմվածքները նշանակալից են Հեղինակի ստեղծագործական-գաղափարական էլուստցիան պատկերացնելու տեսակետից:

«Հայտառում եմ ու համոզված եմ սոցիալիզմի վերջնական համաշխարհային հաղթանակին»: «Պատմությունը մոտենում է իր նպատակին—սոցիալիզմին», —դրել է իսահակյանը Փարիզից—1932 թ. վերջերին*:

Անհաջող ատելությունը կապիտալիզմի նկատմամբ, ինչպես ցույց ենք տվել վերեռում՝ իսահակյանի մինչհոկտեմբերյան չըրջանի ստեղծագործությունների մեջ էլ կա: Բայց այստեղ նորն այն է, որ այդ անհաջող ատելությունը հասել է կապիտալիզմի

* «Գրական Բերթ», 1932 թ. № 29/11:

Խորատակման պատմական անհրաժեշտության ըմբռնման աստիճան-նին. Խսահակյանը տեսնում է արդեն, թե ով է խորտակելու այդ-ատելի կարգերը, ենելով Հոկտեմբերյան ռևոլուցիայի փոր-ձից: «Նրանք գրոշակ ունեն» (1932 թ.) պատմվածքի գաղափարական հիմքն այն ճիշտ միտքն է, որ պատմության նպատակը սոցիալիզմն է, խսկ սոցիալիզմի կրողը միմիայն պրոլետարիատն է: «Կարվածատերերի մոտ» վերնագրով պատմվածքը* (1932 թ.) ուշագրավ է նրանով, որ հեղինակն այստեղ հիմնովին վերագնահատում ու վերջնարկանապես դեն է նետում իր երեմնի որոշ համակրանքը Նիցշեի փիլիսոփայության, ինչպես և պե-սմիզմի փիլիսոփայության նկատմամբ, ինչտա քննադատելով ու մերժելով այդ ռեակցիոն փիլիսոփայությունները:

Խսահակյանն այս շրջանում արդեն հաստատորեն կանգնում է գիտական մտածողության հողի վրա և այն ճիշտ հայացքն է արտահայտում, որ և՛ Նիցշեի, Մայնլենդերի ու Շոպենհաուերի տեսությունները և՛ բոլոր իոլելիստական այլ և այլ փիլիսոփայական սիստեմները շահագործող դասակարգերի, բուրժուազիայի ու բուրժուականացած կարվածատիրության ռեակցիոն իդեոլո-գիայի տարրեր արտահայտություններն են: Խսահակյանը ցույց է տալիս, որ մասնավորապես Նիցշեի արիստոկրատ գերմարդու փիլիսոփայությունը խոշոր սեփականատերերի կենսական շահերն է արտահայտում և ուղղված է «ամբոխի»—ժողովրդի դեմ:

Խսկ ո՞րն է «գերմարդու վեհ աշխարհն», ըստ կալվածատեր «համբունական ուսանող» Հովհենիի: Այդ «վեհ աշխարհում ասում է նա,—ժողովուրդը, ամբոխը հովիտներում և դաշտե-րում պիտի աշխատի, հաց արտադրի և սերունդ առաջ բերի: Սա է նրա կյանքի իմաստը: Խսկ գերմարդը պիտի սալառնի այդ նյութական գործերով զբաղվող ամբոխի վրա: Ճիշտ մեր լեռնե-րի արծվի պես... երկրից, նյութից բարձր, աչքերը լույսին հա-ռած»: Ակներեւ է, որ գերմարդու «վեհ աշխարհի փիլիսոփայու-թյունը» ոչ այլ ինչ է, եթե ոչ ժողովրդի ստրկական—տաժանա-կիր աշխատանքի վրա հենված «նոր արիստոկրատիայի» (Նիցշեի արտահայտությունն է) սանձարձակ ազատությունը: Նիցշեա-կանությունը՝ և ամեն տեսակի այլ ուսմունքներին հեղինակը հա-կագրում է «նոր գարաշրջանի մեծադրույն միտքը՝ սոցիալիզմը»: «...Միայն ճշմարիտ սոցիալիզմի հաղթանակով երկրի վրա

* Տպված «ՀՈԿ» ժուռանալում, 1933 թ. № 1:

կրարձրանա իսկական անհատականությունը։ Միայն նա կարող է պատագրել մարդուն հացի մզձավանջից, որ ստրկացնում է նրան . . . :

Ազատությունը հնարքավորություն կտա մարդուն զարդացնելու իր անհատականությունը բազմակողմանի ձևով։ Սոցիալիզմը հոմանիշ է բախտավորության, ազատության, անհատականության։

Պատմվածքում ներկայացված գեղքը վերցված է մեր երկրի մոտավոր անցյալից։ Իսկ այժմ այդ «հավիտենական ուսանողներն» իրենց կարլածատիրուհի մոր հետ այլևս չկան—ասված է պատմվածքի վերջում։ «...Փոխվեց ժամանակը։ Եկալ նոր սերունդ, նոր մարդիկ, որ կարողանան ձեռք զարկել սոցիալիզմի իրականացմանը։ ...Եթե այսօր մտնեն Սյունյաց աշխարհը, չես գտնի այլևս ոչ նախկին ավատատերերին և ոչ նրանց ճորտերին։ Հողը պատկանում է աշխատավոր ձեռքին։ Եվ բոլոր աշխատավորները միասին, համագործակցաբար կերտում են իրենց ընդհանուր բարօրությունը, տեսնելով այս ընդհանուր գործի մեջ իրենց անձնական շահերի բողոքումը»։

* * *

Արդ, ի՞նչ ընդհանուր եղակացություններ կարելի է անել իսահակյանի գեղարքվեստական արձակի վերաբերյալ, ի՞նչ առանձնահատկություններով է աչքի ընկնում այդ արձակը։

Ամենից առաջ աչքի է ընկնում արձակադիր իսահակյանի ստեղծագործական վարպետությունը։ Նրա բոլոր արձակ երկերն էլ մեծ հետաքրքրությամբ են կարդացվում, որովհետեւ հեղինակը ոչ միայն նյութի լավ ընտրություն է անում, այլև հիանալի պատմել գիտե, գրավում է ընթերցողին։

Իսահակյանի արձակի մյուս առանձնահատկությունը և արժեքավոր կողմը ժողովրդայնությունն է, որի հիմքը Փոլկորի լայն ու հմուտ օգտագործումն է, մշտական օրդանական կապը ժողովրդի բանալոր ստեղծագործության հետ։ «Համբերանքի չիրուխը», «Ուստա Կարոն» և մյուս շատ գործեր այդ կապի ցայտուն արտահայտությունն են։

Իսահակյանը հիացել է Թումանյանի «Գիքորի» «բյուրեղացին վճիռ ոճով», «ոճի հօտակությամբ ու պարզությամբ» *։

* Ա. Իսահակյանի գրախոսական հողվածը Հ. Թումանյանի «Գիքորի» մասին։

ԲնդՀամուր առմամբ հենց այդ հատկությամբ է օժտված նաև իսահակյանի արձակը:

Ոճի ու լեզվի պարզությամբ, վճիտությամբ իսահակյանն անկասկած իր մի շարք արձակ երկերում համում է չ. Թումանյանին:

Այս հատկությունների շնորհիվ էլ իսահակյանն արձակում հիմնականում ռեալիստ հեղինակ է, թեև ռոմանտիզմը անհշան չափով չեւ, որ արտահայտվել է նրա մոտ. մի շարք պատմվածքներում հեղինակի տոնը սովորական չէ, այլ խանդալատ է, ռոմանտիկ շնչով համակված: Արձակում ռոմանտիզմն արտահայտվում է մասնավորապես այնտեղ, որ իրական կյանքի ու մարդկանց սառը նկարագրության և օրյեկտիվ ճշմարտացիությամբ պատկերելու փոխարեն, հուզական ու խոհական շեղում է կատարվում, կամ երբեմն ամրողջությամբ գրավում է լիրիկական տրամադրությամբ: Այդ առանձնահատկությամբ, իսահակյանի արձակը մեծ չափով տարբերվում է Թումանյանից: Իսկ ժանրային տեսակետից իսահակյանն իր մեծ գրչակցի նման նովելիստ է, նովելի վարպետ: Բայց Թումանյանը մի մեծ առավելություն ունի. Աղայանից հետո նա եղակի դեմք է, որպես հեքիաթագիր, թեև իսահակյանն, իր «Աղա Նազար»-ով ցույց է տվել, որ ինքը նաև ժողովրդական հեքիաթի վարպետ մշակող է:

Իսահակյանն իր պատվավոր տեղն ունի հայ գեղարվեստական արձակի մեջ:

ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԿՐԱԾ ԵՎ ԹՈՂԱԾ ԳՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իսահակյանն, ինչպես տեսանք, մեծ հեղինակ է, հայ գեղարվեստական մաքի բարձր գագաթներից մեկը։ Բայց նա էլ, ինչպես բալոր գրական մեծությունները, բարձրացել է ուրիշներից կրած ազգեցության աստիճաններով, կանգնել իր մեծ նախորդների ու մեծ ժամանակակիցների ավագ սերնդի ուսուերին և այդպիսով հասել սեփական ինքնուրույնության։

Իսահակյանի կրած գրական ազգեցությունների աղբյուրները հետեւյալներն են։

ա) Ժողովրդական բանահյուսությունը—Փոլկլորը։

բ) Հայ գրականությունը։

գ) Եվրոպական գրականությունը։

դ) Առասական գրականությունը։

ե) Արեելքի կլասիկ պոեզիան։

Այդ աղբյուրներից կրած ազգեցությունների մասին ինքը իսահակյանը գրել է 1916 թվին՝ պատասխաննելով Յուրի Վեսելիցիու հայութի անկետային։ Մեր նշած աղբյուրներից առաջինի մասին իսահակյանն ասում է հետեւյալը. «Այնքան, որքան իմ ստեղծագործության մեծ մասը պատկանում է ժողովրդական մոտիվների կարգին, ապա ինձ վրա ամենից շատ ազգել են Հայ ժողովրդական երգերը, ապա և արեելյան այլ ժողովուրդներինը, ինչպես և մալոուսականը»։

Այնհայտ է, որ իսահակյանի ամենագլխավոր ուսուցիչը եղել է ժողովուրդն իր հոգու անհուն գանձերով, իր ստեղծագործական վառ Փանտազիայով։ Ի՞նչ է իսահակյանը վերցրել ժողովրդից —բանաստեղծության պատկերավորությունը, ստեղծագործության մոտիվներ (սիրո, պանդխտության), ինչպես և

ատեղծագործական պրիոմներ, լեզու, պոետիկայի մի շարք առանձնահատկություններ—հաշայի ամենը իսահակյանն ամենից շատ սովորել է ժողովրդից:

Ժողովրդական բանահյուսությունից հետո, իսահակյանի կրած աղջեցության աղբյուրներից երկրորդը հայ կլասիկ պոետիան է,—միջնադարյան հայ տաղերգուններից՝ Գրիգոր Աղթամարցին, կոստանդին Երզնկացին, Նահապետ Քուչակը, նոր շրջանից՝ Պ. Դուրյանը և մասնավորապես Հովհաննես Հովհաննիքան:

«Պայքար քրիստոնեական ասկետիզմի դեմ, որը պահանջում է հրաժարվել երկրային ուրախ կյանքից, բողոք հանուն սիրո, ուրախության ու երջանկության» (Ա. Իսահակյան), բնության գեղեցկությունների (գարուն, վարդ ու բլուզ) ու սիրո պաշտամունք—ահա թե ինչն է սիրել իսահակյանը՝ միջնադարյան տաղերգուններից: Նա հաճախ օգտվել է նրանց բանաստեղծական փորձից ու կուլտուրայից: Իսահակյանի լիրիկայում կարելի է շատ պատճերներ ու արտահայտություններ գտնել, որոնք վերցված են Հիշյալ տաղերգուններից կամ հիշեցնում են նրանց: Օրինակ, Գր. Աղթամարցու «Տաղ վասն վարդի» գեղեցիկ բանաստեղծության շունչն է զգացվում իսահակյանի սիրո լիրիկայի այն հատվածներում, ուր բանաստեղծն իր սիրուհու գովքն է անում, նրան բնության գեղեցկությունների հետ համեմատելով:

Այսպիս. Աղթամարցին ասում է.

Ունքերդ է քաշած քան զրափած սուր,
Թարթափդ քո թեք քան զիշտար սուր,
Մպանանիս դերիս օրն հազար բյուր....:

Կամ՝

Թարթափդ է խամչար՝ ինքն պողպատ դուռ:

Իսահակյանն ասում է.

Քո ունքերդ, իմ սիրեկան,
Կեռ են դահճի քրի նման: (38)

Ինչքան էլ տարբեր են Աղթամարցու և իսահակյանի ստեղծած համեմատություններն, այնուամենայնիվ նմանություններն էլ ակնհայտ են:

Մի օրինակ էլ բերենք. Գր. Աղթամարցին իր «Տաղ սիրո» բանաստեղծության մեջ ասում է.

Խունկ և հարլե, ծաղիկ դաշտաց
Ախճառելի Հոտ քո բուրյաց,
Ելից զաշխարհս համատարած,
Հորժն մարդիկ եղին արբած:

Այս գեղեցիկ պատկերը Իսահակյանի մոտ էլ կա, բայց ար-
տահայտված միայն մեկ տողով՝ պահելով Աղթամարցու ամբողջ
քառյակի իմաստի ուժը:

Ահա Իսահակյանի համապատասխան տողը.

Աշխարհը հարթեց քո անուշ հոտով.
Մեսակ ևս քեզնից մնացի անմաս: (55)

Իսահակյանի խոր խոստովանությամբ, նաև, որպես բանա-
ստեղծ, շատ է պարտական իր մեծ նախորդին ու ժամանակակ-
ցին՝ Հովհաննիսյանին, որին Իսահակյանն աշակերտել է ոչ մի-
այն գովրցում (Հովհաննիսյանն Իսահակյանի ուսուցիչն է եղել
Գեորգյան ճեմարանում), այլև պոեզիայում։ Հովհաննիսյանի
ժողովրդական բանաստեղծություններն են Իսահակյանին մղել
դեպի ժողովրդական ստեղծագործությունը։ Դիմելով իր դպրո-
ցական և գրական ուսուցչին, Ավ. Իսահակյանը երախտազիտու-
թյան խորին զգացումով գրել է հետեւյալը.

«Ես առաջին անգամ խմեցի բանաստեղծության նոր, խոկա-
կան աղբյուրից, որովհետեւ զու ինքու էիր ոսկեղեն աղբյուրը, որ
կարկաչում էիր հայոց հին ու նոր երգերի սահմանադում» *:

Այլպիսով, Իսահակյանը Հովհաննիսյանի պոեզիան «բանա-
ստեղծության նոր, խոկական աղբյուր» է համարել, որից ինքը
խմել է և ստեղծագործական ուժ ու կարողություն ստացել,
մինչև որ կանգնել է իր սեփական ճանապարհի վրա։

Հովհաննիսյանի սիրո և բնության երգերը, նրա ժողովր-
դական մոտիվները («Արագն Էկավ», «Ալադյազ բարձր սարին»,
«Այ, վարդ աղջկեկ», «Աշուղ», «Նոր գարուն» և այլն) խորը
տպակորություն են թողել Իսահակյանի վրա։

Սիրո, բնության, անձնական վշտի մոտիվները Հովհաննի-
սյանի և Իսահակյանի մոտ զուգաղիքում են արտահայտչական
ձևերի, արտահայտված տրամադրությունների նմանությամբ։
Հովհաննիսյանի լիրիկայում եղած սիրո կարուղ, սիրո երազան-
քը, անմուրազ սիրո վիշտն ու մորմոքը և սիրուհուն «նենգավոր

* «Բաղվի ձայն», 1913 թ. № 89:

Հույս» անվանելու մոտիվը ամենալրազմազան ձևերով կա նաև
Իսահակյանի լիրիկայում:

Ժողովրդական բանահյուսությունից ու հայ կլասիկ պոե-
զիայից հետո իսահակյանի կը ազդեցության երրորդ աղբյու-
րը եվրոպական գրականությունն է, մասնավորապես Բայրոնի և
Մանավանդ Հայնեյի պոեզիան:

Անդլիացի բանաստեղծի՝ Բայրոնի ապրած «Համալմարհային
վշտի» ազդեցությունն առկա է իսահակյանի պոեզիայում: Այդ
ազդեցությունը կարելի է ցույց տալ կոնկրետ փաստերով: Օրի-
նակ՝ Արու-Լալայի հրաժեշտը չատ է հիշեցնում Զալդ Հարութի
հրաժեշտը Բայրոնի նույնանուն պոեմի նախերգանքում: Երկու
դեպքումն էլ գեղոհություն ու բողոք կա այն հասարակական
միջավայրի նկատմամբ, որտեղից հեռանում են պոեմների հերոս-
ները:

Ահա թե Բայրոնի հերոսը՝ Զալդ Հարութը ինչպես է հրա-
ժեշտ տալիս իր հայրենիքին.

Զեմ ափսոսում վայելքս հին,
Ոչ վտանգից կսարսեմ,
Այս է, որ չեմ թողնում մեկին,
Որի համար արտասվեմ:
Եվ այժմ ահա ես մենակ եմ
Լայնասարած այս ծովում,
Բայց թե ինչո՞ւ կը հառաչեմ,
Երբ ինձ համար չեն ցավում:—
Շունչը երկար չի ունալու,
Մի ուրիշը կը ինսմի,
Եվ, թե լինեմ ես զանալու,
Պատառ-պատառ ինձ կանի*:

Զալդ Հարութը խոսում է նաև կանանց մասին. Նա գրում է,
որ «կանանց ափսոսանքին չի կարելի հալատալ», որովհետեւ
«դալմաճանությունը նրանց օրենքն է, լացը նրանց համար սովո-
րական է»:

Այսպես հրաժարվելով ամեն ինչից, Զալդ Հարութը գիմում
է իր նավին.

Դեռ, իմ նավակ, մենք սրանք
Շովի վրա փրփրաղեղ.
Ուր որ կուզես, հոգ մի, զնանք,
Միայն հայրենիք չանես:

* Հ. Թուժանյանի թարգմանությունից:

Աղջույն, ողջույն, մութ ալիքներ,
Ողջույն խուզեր, անապատներ...
Բարի գէշեր, հայրենիք:

Բայրոնի պոեմի նախերդանքի և Խսահակյանի Արու-Լալա-Մահարիի արամաղբության նմանություններն ակնհայտ են: Երկու դեպքումն էլ հայրենիքից հեռացման հրաժեշտի դառնացած ապրումը կա, խորը գժողոհություն այն հասարակական միջավայրի ու պարմաների դեմ, ուր ասպեկլ են թե՛ Բայրոնն ու թե՛ Խսահակյանը: Ակնհայտ է, որ «Արու-Լալա-Մահարին» գրելիս Խսահակյանը որոշ ներշնչում է ստացել Բայրոնի «Զալդ Հարություն»:

Բայրոնի և Խսահակյանի ստեղծագործություններից ուրիշ նմանություններ էլ կարելի է հիշել: Խսահակյանի «Խսրայելացիք Բարելոնում» (1893) բանաստեղծությունը գրված է Բայրոնի «Բարելոնյան ջրերի մոտ» բանաստեղծության նմանությամբ, և այլն:

Եվրոպական գրականությունից, սակայն, ամենից շատ խսահակյանը ներշնչում ստացել է Հայնեյից: «Իմ պաշտելի Հայնեն»* արտահայտվում է մի տեղ Խսահակյանը:

«Քանի որ ես առանձնարես իմ զարգացմամբ ավելի շատ պարտական եմ Գերմանիային, ապա և զգում եմ, որ ինձ վրա շատ ուժեղ կերպով ազդել են Նիցեն, Հ. Հայնեն և գերմանացի այլ գրողներ»**, գրել է Խսահակյանը Յուրի Վեսելովսկու առաջարկած անկետայում:

Իր տեղում արգեն խոսել ենք Նիցեի ազգեցության բնույթի մասին. այստեղ կանգ առնենք Հայնեյի թողած ազգեցության վրա: Խսահակյանի լիրիկան իր թեմատիկայի ու մոտիվների, ինչպես և ստեղծագործական ձևերի շատ զդալի մասով հիշեցնում է Հայնեյի լիրիկան և հատկապես նրա սիրո լիրիկան: Խսահակյանի «Երգեր ու վերքերը» Հայնեյի «Երգերի գրքի» արամագրությամբ է լցված: Հայնեյի անհաջող սերը դեպի Ամարիան, Խսահակյանին գեպի Շուշիկը—շատ նման են: Խսահակյանն էլ կարող էր իր «Երգեր ու վերքերի» մասին դիմել ընթեռցողին Հայնեյի հետեւյալ քառյակով.

* «Խորհ. Արգ.», 1937 թ. № 1, Խսահակյանի հոդվածը «Երանց մոտ և մեզ մոտ»:

** Юр. Веселовский, «Русское влияние в совр. арм. литературе», 1909 г., стр. 25.

Ես թափել եմ իմ գրքում այս
Տրտունջներս, ցալ ու հառաջ,
իմ այս գիրքը երբ դու բանաս,
Կրացվի սիրան իմ քո առաջ:

Հայնեյի «Նրգերի գրքում» ուժգնորեն պատկերված է սիրուն հոգուն տանջանքը և ողբերգությունը. այդ տեսակետից բնորոշ է նրա «Պատանեկական տանջանքներ» շարքի «Հրաժեշտ տված սրտիս տիրուհուն» բանաստեղծությունը, ուր տրված է մի մուայլ ու ձնչող պատկեր, թե ինչպես, երբ բանաստեղծը «սարսող զիշերով» գերեզմանոցից անցնելիս տեսնում է, որ շիրիմներից մեր պահ դուրս են գալիս սիրուց անմուրազ մեռելները և ամեն ժեկը պատմում է իր սիրո ողբերգությունը:

Ուշագրավ է, որ նրանցից «գանդրահեր մեկի» պատմությունը շատ է նման իսահակյանի սիրո պատմությանը: Այդ «գանդրահեր» աղան իր սիրուհու մասին պատմում է.

Ժպտում էր ինձ նուրբ, խաղաղիկ,
Կյանքիս լույսն այդ, ծաղկանց ծաղիկ.
Որին, ավաղ, քաղեց աղահ
Կոշտ ու հարուստ մի սրիկա:
Կին ու հարուստ անիծեցի
Իմ զինու մեջ թույն ածեցի,
Մահը ինձ հետ խմեց կենաց... և այլն:

Հենց ճիշտ այդպես է խափանվում նաև իսահակյանի երգած սերը. այստեղ էլ նրա յարին տանում է հարուստ աղան և նա մնում է մենակ, անբուժելի վերքը սրտում: Հայնեյի մոտ էլ սիրուհին անհարաժեշտ դաշլաճան է զուրս գալիս, նրա մոտ էլ երգված է սիրո անհուն կարոտը, նրա մոտ էլ սիրող սիրու կյանքի և մահվան սահմանադժումն է իրեն զգում սիրո տանջանկյանից կերպով աղղել է ստեղծագործական-արտահայտչական ձևերից մեկը—սիրո մոտիվը երազի պատկերներով արտահայտելու: Հայնեյի մոտ շատ կարելի է հանդիպել երազային պատկերների. ահա մեկ-երկու օրինակ:

Հայնեյի լեբեկայից իսահակյանի վրա շատ որոշակի ու ակնհայտ կերպով աղղել է ստեղծագործական-արտահայտչական ձևերից մեկը—սիրո մոտիվը երազի պատկերներով արտահայտելու: Հայնեյի մոտ շատ կարելի է հանդիպել երազային պատկերների. ահա մեկ-երկու օրինակ.

Երազին մեջ լուս զիշերին
ինձ մոտ եկակ իմ սիրելին.

Երազում տեսա զվարճալի մի մարդ.
Սիրածիս կողքին այդ մարդն էր կանգնած,
Առ Փրակով տեսա ևս ինձ երազում...
Եվ ինձ մոտ էր սիրականն իմ սիրատուն:

**Այդպիսի օրինակներ շատ կան նաև Իսահակյանի մոտ. ահա
մեկ-երկուսը դրանցից.**

Երազիս տեսա, որ ծովի ափին,
Ես ընկած էի խոր վերքը որտիս.
Երազ տեսա ձեր տան առաջ
Զուլալ աղբյուր կը բգիսեր.
Երազիս տեսա օրօր ու չօրօր
Քարվան էր անցնում զնդալով անուշ
Երազիս մեջ ծովը տեսա. (138)
Երազիս մեջ միջը տեսա,
Ոսկի ալիք ցուլալիս.
Մեր տղի հետ յարիս տեսա
Ոսկի նալով ման դալիս: (261)

Հայնեն և Իսահակյանը հոգեհարազատ բանաստեղծներ են և
այդ պատճառով էլ գերմանական կլասիկ պոեզիայի այդ մեծ
ներկայացուցչի ազգեցությունը իսահակյանի վրա պատահական
չէ, այլ շատ բնական ու հասկանալի: Ասենք նաև, որ այդ ազգե-
ցությունը չի սահմանափակվում սիրո մոտիվների շրջանակում:
Հայնեյի և Իսահակյանի աշխարհազգացումների, աշխարհը բոն-
ման մեջ էլ շատ ընդհանուր գծեր, նկատելի հոգեհարազատու-
թյուն կա: Տիրող կարգերի ու բարքերի հետ չհաջոտվելը և կըր-
քուտ, սուր քննադատություն երկուսի մոտ էլ կա. ինչպես և լա-
վագույնի, ազատ, ուրախ ու երջանիկ կյանքի վառ ձգտումը,
որը նրանց երկուսի պոեզիայի հրեղեն միջուկն է կազմում:

**Այժմ՝ կանգ առնենք Իսահակյանի՝ ոռուսական գրականությու-
նից կրած ազգեցության մասին: Պատասխանելով Յուրի Վեսե-
լյովսկու անկետացին ոռուսական գրականությունից իր կրած աղ-
զեցության մասին, Իսահակյանը գրել է հետևյալը.**

«Ես միշտ սիրել եմ ոռուսական գրականությունը...: Ավելի
ես չեմ կարող չընդունել, որ գեռ մանկական տարիներից սկսած
իմ սիրելի բանաստեղծը՝ բարձր, ինչպես կազբեկը և խորը,
ինչպես Դարյալը՝ եղել է Լեռմոնտովը, որի ստեղծագործու-
թյամբ ես հաճախ ողեցնչվել եմ, և առանձնապես նրա բանա-
ստեղծություններով, «Դև», «Մծիրի» և հատկապես՝ «Երդ վաճա-
ռական կալաշնիկովի մասին» պոեմներով: Սակայն, ես չեմ կա-
րող ցույց տալ, թե իմ բանաստեղծություններից ո՞րի մեջ է

զգացվում նրա ազդեցությունը * : Խսահակյանն այսուհետեւ նշում է, «որ իր ներքին աշխարհի վրա ուժեղ տպավորություն են թողել Գոգոլն իր անմահ «Մեռյալ հոգիներով» և ավելի շատ Դոստոյևսկիին * :

Եվ իրոք, առանձնապես Լերմոնտովից կրած ազդեցությունն զգալի է իսահակյանի պոեզիայում։ Ճիշտ է նկատել բանաստեղծը, որ այդ ազդեցությունը դժվար է ցույց տալ իր առանձին առանձին բանաստեղծություններում, բայց ուշադիր ընթերցողը չի կարող չզգալ, որ իսահակյանի պոեզիայում կա լերմոնտովյան ոգու, լերմոնտովյան տրամադրությունների շատնք։ Լերմոնտովի պոեզիայի պաֆոսը հաղորդված է նաև իսահակյանին։ Մուռա մեծ քննադատ Վ. Բելինսկու ընտւխագրությամբ՝ լերմոնտովի պոեզիայի պաֆոսը՝ «մարդկային անձնավորության բաիտի ու իրավունքների մասին եղած հարցերն են», «մարդկային անհատականության իրավունքը, որոնում այն պատճառների, որ մարդիկ անազատ են, ստրկացված, անհուն տենչ-ձգտում՝ ազատագրելու մարդուն՝ նրան ճնշող ուժերից, —ահա լերմոնտովյան իրկերի հիմնական մուռնիքը»։ Իր տեղում՝ իսահակյանի ստեղծաւործությունը վերլուծելիս, արդեն ցույց ենք տվել, որ իսահակյանի մոտ էլ այդ պաֆոսը կա։

Իսահակյանի կրած գրական և իդեալական ազդեցության աղբյուրներից մեկն էլ Արևելքի կլասիկ պոետիան է: Նրա ստեղծագործության մեջ հաճախ կարելի է հանդիսավոր Արևելքի նշանավոր բանաստեղծներին, որոնք, անկասկած, հարազատ են եղել Իսահակյանի համար: Հեշենք միքանի փառաեր: Իսահակյանի նշանավոր պոեմի հերոսը՝ «Բաղդադի հռչակավոր բանաստեղծ» Արքունական Մահարաշտրան է (X—XI դ. ապրած): Իսահակյանն իր միքանի այլ գործերի նյութ է դարձրել Արևելքի՝ ուրիշ՝ ավելի նշանավոր բանաստեղծների կյանքը: Օրինակ՝ «Լիլիթ» ժողովածվության կարելի է հանդիպել Արևելքի երեք հայտնի բանաստեղծների, պարսկական բանաստեղծներ Սաադիին, («Սաադիի վերջին գարունը») ու Օմար Խայամին («Օմար՝ Խայամի վեճը աստծու հետ»): և չինական ՎIII դարի նշանավոր բանաստեղծ՝ Լի-Թայի-Պոյին («Լի-Թայի-Պոյ»), որի կյանքի շատ մոմենտներ նման են Իսահակյանի կյանքին: Կարելի է ասել, որ մասնավորապես այդ վիճակին բանաստեղծի կյանքի պատկերման մեջ Իսահակյանը հենց

* Юр. Веселовский, «Русское влияние в совр. арм. литературе», 1909 г., стр. 25.

իրեն է զգացել և ընթերցողն էլ ավելի շատ նրան է զգում, քան Լի-Թայի-Պոյին: «...Բանաստեղծը կանգնած կյանքի ու մահան միջեւ... երգում էր և անհուն գեղեցկությունը աշխարհի, և հավերժական կակիծը բոլոր գոյությունների...: Ժողովուրդը լսեց նրա երգերը և սրտադին սիրեց նրան» (67—68)—Լի-Թայի-Պոյի մասին ասված այս խոսքերը շատ բնութագրական են ոչ միայն չին բանաստեղծի, այլև նրա հայ բանաստեղծ-կենսագրի համար: Ահա մի այլ մոմենտ, որ նույնպես հիշեցնում է իրեն, իսահակյանին:

«Նրա (այսինքն՝ Լի-Թայի-Պոյի) արկածասեր և անհանգիստ հոգին տենչում էր ինքնիշխան ազատությունը թափառաշրջիկ գուսանի և խմասուն մենությունը ներահայաց ճղնալորի» (70): «Եվ թափառում էր նա խեղճ ու խոնարհ ժողովրդի մեջ, որի պարզ սիրտը և անչար հոգին սիրում էր բանաստեղծը»:

Խոնարհների ցալին և ուրախությանը մասնակից, նրանց անշուք խնձույքներում խոսեցնում էր բամբիռու, «րի խինդն ու հառաջները արձագանդում էին չին աշխարհի բոլոր ավերում» (74): «Եվ փառաբանում էր նույնպես... անհատական ազատությունը անսանձ և հայրենիքի պաշտումը անձնվեր ու մահը միաժամանակ... աչքերը աստղերին հառած և հոգին տիեզերքի առեղծվածով տեսլացած» (76):

Ահա մի այլ մոմենտ. չինական մի նահանգ ապստամբում է իշխողների կեղեքումների գեմ: Եվ Լի-Պոն ըմբոստ ժողովրդի հետ էր:

Կյանքից այրող խոսքերով վառում էր ռազմիկների խիզախությունը...: Պարտվում է ապստամբությունը. բանաստեղծը դատապարտված ապստամբների շարքումն է և աքսորվում է հայրենի երկրի սահմաններից գուրս: «Օտարության մեջ, հարազատ ժողովրդի սրտից հեռու, տառապում էր նա, և իր անհուն կարութ երգում էր հրով ու արցունքով» (79):

Այս ամենը բնութագրում են ոչ միայն հեռավոր ժամանակ-ների չին բանաստեղծին, այլև հենց իրեն՝ իսահակյանին, հիշեցնելով նրա կյանքի ու ստեղծադործության նույնանման մոմենտները:

Ահա թե ինչու ասում ենք, որ իսահակյանը ստեղծադործական ներշնչում, իղեաներ ու հայացքներ է վերցրել նաև Արևելքի բանաստեղծներից. նրանցից շատերի հետ ևս հոգեհարազատություն զգալով:

Ակնհայտ է, որ իսահակյանի ստեղծագործության մեջ շատ
ուժեղ արտահայտված՝ կյանքի և մահվան մասին փելիսովայա-
կան խոհերի գլխավոր աղբյուրը Արևելքի խոհական, փելիսովա-
յական պոեզիան է, ինչպես և Արևելքի կրոնական ուսմունքները
(Բուդդայի, Կոնֆուցիոսի և այլն), որոնց ուսումնասիրությամբ
շատ է զբաղվել իսահակյանը:

Իր գրական գարգացման ճանապարհին ազգեցություններ
կրելով հայ և օտար բանաստեղծներից, նրանցից առանձնազես
սովորելով գեղարվեստական խոսքի վարպետություն, իսահա-
կյանը հետագայում զծեց իր սեփական ճանապարհը հայ գրակա-
նության գարգացման պատմության մեջ:

Աշակերտը բարձրացավ, հասավ իր ուսուցիչներին և դար-
ձավ ուսուցիչ, որին աշակերտեցին շատերը: Իսահակյանը գրա-
կան մի նոր սերնդի ստեղծագործական մղում տվեց: Այդ նոր
սերնդի ամենափայլուն ներկայացուցիչները եղան Շուշանիկ
Կուրզինյանը և Վահան Տերյանը, որոնք իրենց գրական կյանքի
ուղին սկսեցին՝ հետեւով իսահակյանին:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Իր մոտ 50-ամյա գրական գործունեության ընթացքում ինչ-քան էլ տարբեր, հաճախ, իրարամերժ հոսանքների ազդեցության է ենթարկվել Խսահակյանն, այնուամենայնիվ իր աշխարհազգացումով ու աշխարհը բռնումով, իր մտածողության պրոֆիլով և ստեղծագործության արտահայտած սոցիալական խմանով ու ձգտումներով՝ հիմնականում կանգնած է նույն այն գիրքերի վրա՝ ինչ Հովհաննես Թումանյանը։ Դրանով էլ բացատրվում է նրանց հոգեհարազատությունն ու մտերմությունը։ Հիշենք, որ Խսահակյանին սովետական կարգերի հետ կապող առաջին կենդանի օղակներից մեկը Հովհաննես Թումանյանն էր։

Հետաքրքրական է Թումանյանի և Խսահակյանի 1920—1921 թվականի նամակադրությունը։

1921 թվի հունիսի 1-ին Վենետիկից (Խտալիա) Թումանյանին գրած նամակում Խսահակյանը ցանկություն է հայտնում Հա-Հայստան վերադառնալու մասին։ Այդ նամակում ուշադրավ են այն տողերը, որ վերաբերում են «Հայկական հարցի» նկատմամբ եվրոպական պետությունների (մասնավորապես Անգլիայի ու Ֆրանսիայի) նենք ու զաժան վերաբերմունքին և նրանց հակառակ՝ Սովետական Ռուսաստանի ազատագրական դերին։ «Եվրո-պան ոչ միայն չի օգնում մեզ, այլև թշնամի է և հրճվում է հայկական բնաջնջումով, սրան համոզված եմ փաստերի վրա, ինձ համար Անգլիան և Ֆրանսիան այնքան դաժան գտնվեցան, ինչքան Գերմանիան։ Քրիստոնեություն, քաղաքակրթություն, մարդասիրություն՝ դատարկ հնչյուններ են եվրոպացու աչքում, պետք է երես դարձնել այս ալազակներից և մոտենալ Ռուսաստանին...»։ «Ըստիս, շարունակում է Խսահակյանը—Հայստան և հայ ժողովուրդ կարող է ազգել միայն Ռուսաստանի հետ,

կամ բնավլ չի կարող ապրել։ Մնացածը հիմարությունից վեր մի բան է»։

Նույն այս նամակում նշելով, որ սովետական իշխանության հաստատման և Սովետական Հայաստանի օգնության չնորհիվ «Կովկասի վիճակը լավ է», «դրությունը կայուն, մանավանդ այստեղ» «այլևս կուիլ չկա զանազան ցեղերի միջև», «անցել է նաև արտաքին վտանգը»—իսահակյանը հայտնում է թումանյանին իր ցանկությունը Հայաստան վերադառնալու մասին։ Թումանյանը ստանալով իր մտերիմ գրչակցի նամակը՝ պատասխաննամակով ողջունում է նրա մտադրությունը և գրում անպայման գալու մասին։ Թումանյանը գրում է իսահակյանին թիֆլիզից։

«Ավո ջան։

Ստացել եմ նամակդ։ Ասում ես, եթե հարմար ժամանակ է, կանչեր, կդամ։

...Ասում եմ։

— Արի։

Արի, Ավո ջան»։

Թումանյանը հրավիրում է իր ընկերոջը գալ հայրենի հողը, «մեր աշխարհը», որն այնքան ավերված վիճակումն էր և սովետական իշխանության չնորհիվ վերականգնվում ու վերանորոգվում էր։ Թումանյանն իսահակյանին հայտնում է առանձնապես այն մեծ հոգատարության մասին, որ սովետական կառավարությունը ցուցաբերում է ամեն մի ժողովրդի կուլտուրայի ու գրականության և անվանի գրողների նվազմամբ։ «Մանավանդ գրականությունն ու գեղարվեստը երբեք էսքան ուշադրության առարկա չեն եղած մեր աշխարհքում։ . . .Մի շարք գրողների ու գեղարվեստագետների կենսաթոշակ են նշանակել, իսկ շուտով կհրատարակվի և կիմանաս, որ տալիս են ամեն արտօնություն, ամեն հարմարություն ու հնարավորություն։ Նրանց թվում կը կարդաս և քո անունը»։ «. . .Մի խոսքով, իմացիր, որ արդեն ապահով ես Էստեղ և կարոտով սպասում ենք ամենքս։ Թերեւ այժմ կազմենք մեր Վերնատունը մեր երկրում ու վերջին օրերս միասին անց կացնենք։ Բոլորն այժմ կարող են լինելու իրենց գործով գրադպեն»։

«. . .Դե, արի, Ավո ջան»։

Թումանյանը գրանից երկու տարի հետո մեռավ անմուրազ, բախտ չունեցավ իր վերջին օրերն իր աղատադրված հայրենի բախտ չունեցավ իր վերջին օրերն իր աղատադրված հայրենի մտերիմ ընկերոջ ու գրչակցի հետ անցկացնելու։ Նրա մահում մտերիմ ընկերոջ ու գրչակցի հայտնատունը մեր երկրում ու վերջին օրերս միասին անց կացնենք։ Բոլորն այժմ կարող են լինելու իրենց

նում և գրեց խորը վշտով, մեծ կորստի ափսոսանքի զգացմունքով իր, հարազատ ջերմությամբ տողորված հողված իր հանձարեղ ընկերոջ հիշատակին («Հովհաննես Թումանյան».
«Արեգ» 1923 թ. № 4):

Խսահակյանի մեջ օրեցօր ավելի էր ուժեղանում հայրենիքի կարոտը, իր ազատագրված ժողովրդի մեջ լինելու վառ իղձը: Բայց ինչքան էլ նա հեռու էր հայրենիքից, նրա հողին միշտ հայրենի ժողովրդի ձայնն էր լսում, նրա հարազատ կանչը, որ մարմնացած էր Թումանյանի մտերմական բառերի մեջ.

— Արի, արի Ավո ջան:

1925 թվին Իսահակյանը պատրաստվեց վերադառնալ Սովետական Հայաստան: «Օտար ափերից» հայրենիք վերադառնալու ցանկությունը՝ Իսահակյանի մեջ ստեղծագործական հղացում է առաջացնում. իր վերադարձը նա պատկերացնում է որպես «ժանտ քաղաքներից» անապատ փախած «Բաղդադի հռչակավոր բանաստեղծի» վերադարձը: Եվ ահա նա փորձում է դրել «Արու-Լալայի վերադարձը», որի մասին 1925 թվի հունվարին իր մի նամակում հայտնում է հետեւյալը.

«Անցյալ օրեր մտովս անցավ գրել «Արու-Լալայի վերադարձը» և փորձի համար այս տողերը շարեցի...»:

Եվ համրամ ծփաց ականջե ականջ
Պողոսաներում ամբողջ սստանի,
թե Արու-Լալան վերադարձել է,
Գանգուխոս ափերից ակուխն հայրենի
— Մենք ճանաչեցինք իսկ և իսկ նրան.
Տեսնողներն այսուս պնդում են համառ.
թեև անցել են երկար տարիներ,
երբ նա մեր միջից փախավ զաղտնաբար:
Տեսանք՝ հոգնարեկ օրերի րեսից,
Բայց սուր կար մեջքին և քայլը թափով,
Ճակատն հինալուրց անամազ ու վճիռ.
Եվ որին հենած՝ կանոնել էր մենակ,
Նայում իր շուրջը հածող ամբոխին.
Ժպտում էր բարի, ողջույն էր տալիս,
իրեն անձանոթ անց ու գարձողին:
Եվ ուրիշները շտապ, վաղեվազ,
Զայնում են, անցնում զռեհե զռեհ,
թե Արու-Լալան օտար ափերից
Դարձել եկել է, դարձել եկել է...»:

* Տպված է «Խորհրդ. Հայաստան» թերթի 1926 թ. հոկտեմբերի 13-ի № 235-ում՝ «Արու-Լալայի վերադարձը», վերնագրով:

«Այս վորք է—զբում է այսուհետև իսահակյանն իր՝ հիշյալ նամակում,—չարունակությունը Հայաստանում՝ իրական հողի վրա, իրականությամբ ներչնչվելով»։ Գրելով այդ նախնական վորքը, Աբու-Լալայի—այսինքն՝ իր վերադարձի մասին, «հռչակոր բանաստեղծը» շուտով վերադառնում է «օտար ափերից», «պանդուխտ ափերից ակութին հայրենի»։

Աւշագրավ է, որ հասարակությունից իր խաղաղ ուղարկերեւ քարավանով անապատ փախած Աբու-Լալան վերադառնում է «սուրբ մեջքին», այդ նշանակում է, թե նա եկել է ակտիվորեն մասնակցելու սոցիալական արդարության համար մղվող պայքարին և ձեռք բերած ազատությունը գենքով—որով պաշտպանելու գործին։

1926 թիվ սեպտեմբերին իսահակյանն արդեն այստեղ էր, իր նոր, ազատագրված հայրենիքում, որն իր հարազատ զավակին զբարաց ընտունեց։ Թե ինչպիսի ողերություն ապրեց է առաջանաստեղծը իր վերադարձին, այդ ցույց է տալիս նրա «Սովետական հայաստանում» վերնագրով հողվածը*, ուր նա գրի է առել իր վառ տպավորությունները։ Հողվածի առաջին տողերն արդեն շատ բան են առաւմ։ «Մեր հին հայրենիքում, մահից հարություն առած մեր նոր Հայաստանում տակալին ես նոր քառագայի եմ»—այսպես է սկսում իսահակյանն իր հողվածը և դաքանի եմ։

«Ես ականջ էի միայն դարձել, չըս ուշադիր՝ և լսում էի ամենքին...»։

«Ես աչք էի դարձել միայն և նայում էի շուրջու...»։

«Ես լսեցի ականատեսներից մեր ժողովրդի դառնագին կրածներն աշխարհը հոշոտող պատերազմից սկսած մինչև քաղաքացիական կռիվների վախճանը, մինչև սովետական կարգերի ցամացումը»։ «Լսեցի նույնպես, թե ինչպես վերապրեց հաստատման ըրջանը»։ «Լսեցի նույնպես, թե ինչպես վերապրեց մեր ժողովրդը, շնորհիվ իր ապրելու երկաթե կամքին, և նոր ժողովրդը Սեծ ու կոլուցիան գլխավորող ուռասկան հզոր ժողովնորհիվ Սեծ ու կոլուցիան գլխավորող ուռասկան հզոր ժողովը կամ վերդի, որի երկայնաբազուկը հասել է օգնության, ինչպես իմ վերդի, որի երկայնաբազուկը հասել է օգնության, ինչպես իմ վերդի առաջ հասավ տարերքին զոհ եղած Շիրակին ու Լենինականին»**։

«Տեսնում եմ՝ ապերի և մոխիրների միջից իսպանությամբ»

* «Թորհ. Հայաստան» 1926 թ. նոյեմբերի 28-ի №-ում։

** Խոսքը վերաբերում է 1926 թ. երկրաշարժին։

զրահավորված կանգնում է աշխատավորական, Սովետական Հայաստանը՝ համամարդկային գաղափարներով, համաշխարհային բոլվանդակությամբ և ազգային ոճով ու գեմքով:

Մեր փոքրիկ ածուն, համազոր և համահավասար համամիութենական հսկային, որն իր տիտանական ուսն է դրել մարդկությունը վերստեղծող ավելի արդար, բացարձակ արդար կյանքի առարկայացման գործի տակ»: Խսահակյանը հիացմունքով ու խանդավաված տեսնում է բոլորովին նոր աշխարհ, նոր իրականություն, նոր ժողովուրդ: Վերջիշելով նողկալի ու դաեան կարգերն անցյալի, Խսահակյանը նույն այդ հոգվածում նշում է, որ «ցարական կրունկի ներքո դիմացըրկված զանդվածներն ուղղում են իրենց ողնաշարը, անձնավորվում են ու մարդանում...»:

Հոգեպարար տալավորությունների ուժգնությունից Խսահակյանի հոգվածը վեր է ածվում արձակ բանաստեղծության, իսկ վերջում չափածո բանաստեղծության: Ժողովրդական բանաստեղծի տարիների, տասնամյակների հայրենաբազմ կարոտն է հորդում նրա հուզումնալից տողերում: Բանաստեղծն ուզում է գրել, ընդգրկել իր բազուկների բոլոր տարողությամբ նոր, սովետական հայրենիքի «նվիրական շենք ու սե հողը», գրկել և այդ հողի—Երկրի կյանքը վերափոխող՝ «գաղտիարացնող և իմաստավորող աշխատավորներին»: Նա ուզում է սեղմել իր հոգուն ու համբուրել դարավոր զղթաները կտրած աղատ հողը, որ աշխատավորինն է և հավիտյան նրանը կմնա: Բանաստեղծին ոզերում է այն, որ իր մայր հայրենիքը կանգնել է նոր ճանապարհի վրա և անարդել թռչում է, «աւլասմբակ թռչում՝ նոր օրերի աստղին»:

Իոչ ու խոթերն թշնամական՝
Թոփչքդ չեն կասում:
Աշխարհաշահ ճշմարտության
Նոր խոսքեր ես ասում:
Դու, հին երկիր, նոր ու պայծառ,
Իմ ժողովուրդ, իմ հաց,
Արիաթե անմահ թռչուն,
Հուր ու սրից ծնած....:

1926 թվից մինչև 1930 թիվը Խսահակյանը մնաց Սովետական Հայաստանում: Այդ ժամանակամիջոցում հրատարակվեցին նրա երկերի միքանի ժողովածուները՝ «Համբերաների չիրաւալը» (1929 թ.), «Արու-Լալա-Մահարի» պոեմը (1929 թ.), «Լիլիթը» (1927 թ.) և «Բանաստեղծությունների» գիրքը (1930 թ.):

Այնուհետև իսահակյանը միքանի տարով նորից գնաց արտասահման:

Արտասահմանում իսահակյանը մնաց 1930 թվից մինչև 1936 թիվը, ապրելով Փարիզում: Այդ ժամանակաշրջանը շատ նշանակալից է բանաստեղծի կյանքի ու ստեղծագործության համար: Արտասահմանում նա ալլուսմ էր ու գործում, որպես սովետական Հայրենիքի «անձնվեր ու անկեղծ բարեկամը՝ անդավաճան կանգնած նրա կողքին»*:

Այդ մասին են վկայում 1931—1936 թվերին արտասահմանում իսահակյանի գրած մի շարք գեղարվեստական երկերը («Նրանք զբոշակ ունեն», «Կալվածատերերի մոտ», «Ծուռմիսուր Պալլովիչի երազը»—պատմվածքները, որոնց մասին իր տեղում խոսեցինք) և Հոգվածները Սովետական Հայաստանի նվաճումների, մասնավորապես սովետական կուլտուրայի ու գրականության զարգացման մասին:

Ուշագրավ են իսահակյանի գրած միքանի հոդվածները, որոնցում մեր առաջ պայծառորեն կտնդնում է ոչ միայն իսահակյան գրականագետը, այլև իսահակյան սովետական քաղաքացին, որն հեռավոր Եվրոպայում հոգեստ ամուր կարգած սոցիալիստական Հայրենիքի հետ, զգում էր իր ժողովրդի ազատ կյանքի շունչը:

Ահա միքանի փաստեր:

1931 թվի սկզբին, «Անուշ» օպերայի ներկայացման առթիվ իսահակյանն իր մի հոգվածում թումանյանին բնութագրելով որպես «մեր ազգային իսկական բանաստեղծը», սխալ և անհիմանամարելով այդ պատիվը Գամառ-Քաթիպային տալը, անհրաժեշտ է համարում առանձնապես հիշել, նորից շեշտել Թումանյանի դրական վերաբերմունքը սովետական իշխանության նկատմամբ.

«Նա առաջիններից եղավ, որ քաջամարտիկ կանգնեց Սովետական Հայաստանի կողքին: Պայքարեց նրա թշնամիների դեմ, խորապես համոզված լինելով, որ Հայաստանը սովետականացման փաստով դուրս եկավ արյունոտ վիրապից, ընկերացավուում մեծ ժողովրդին և զինվորվեց մեծագույն գաղափարին՝ սոցիալիզմին: Բարձրացրեց իր հուժիու և ազգու ձայնը Սովետական Հայաստանի պաշտպանության համար»:

Ուշագրավ է նաև 1933 թ. նոյեմբերի 29-ին Փարիզից գրած նամակը:

* Իսահակյանի 1932 թ. նոյեմբերի 29-ին Փարիզից գրած նամակը:

Հակյանի գրած նամակը: «Ես Սովետական Հայաստանի և նրա կառավարության բարեկամն եմ, անձնվեր և անկեղծ բարեկամը, անդավանան կանգնած եքա կողքին: Հայաստանի շահերն իմ շահերն են, նրա աղնիսի մշակները՝ իմ ընկերները: Յուրաքանչյուր ալյուս, որ դրվում է այդաեղ, ինձ ոգևորությունն է պատճառում, յուրաքանչյուր ցորենի հասկ, որ հասակ է ձգում մեր նվիրական արտերում, ինձ անչափ ուրախացնում է, ապրեցնում է ինձ:

Հավասում եմ ու համոզված եմ սցիալիզմի վերջնական համաշխարհային հաղթանակին: Եվ սա իմ մեջ ոչ թե զգացում է միայն, այլև իրերի լոգիկան, որովհետեւ գիտությունը, տեխնիկան, զանգվածների գասակարգային գիտակցությունը օրեօր, ամեն ժամ տանում է, մոտեցնում է պատմաբայցունն իր նպատակին՝ սցիալիզմին»:

Այդ համոզմունքով ու հայացքով էլ հսահակյանը արտասահմանում մեծ հետաքրքրությամբ հետևում է սովետական կուլտուրայի ու գրականության նվաճումներին: Հեղենք այդ մասին նրա գրած միքանի հոդվածները՝ տպմած «Հոկ» ժուռնալում: Իր տարեկան քննական ակնարկներում ընդհանուր հանրագումարի բերելով Սովետական Հայաստանի գրականության նվաճումները 1933 և ապա 1934 թվին, մի շարք հայ սովետական գրողների (Արագի, Ստ. Զորյան, Դ. Դեմիրճյան և այլն) այդ տարիների գործերը վերլուծելով ու գնահատելով, հսահակյանը ընդհանրացումներ է կատարում սովետական արվեստի ու գրականության մասին՝ ճիշտ կերպով նշելով այն հիմնական առանձնահատկությունները, որոնցով մեր արվեստն ու գրականությունը տարբերում են եվրոպականից:

«Սովետական արվեստը մարդանհասի և հասարակական ապրումների, պայքարի, ձգտումների և բնության մեծածավալ կյանքի խորապես զգացված համադրությունն է և ոչ մտածին, գրական մտահայեցողությունները»: Սովետական երկրում, — ասում է իսահակյանը, «ստեղծվում է մի նոր, առողջ աշխարհազգացում—նրբացած, բարձրագույն կուլտուրայի միջով անցած՝ հասարակության երջանիկ և ներդաշնակ կենակցությունը հզոր, բարեկամացած բնության հետ»*:

Իսահակյանը՝ «սովետական աշխատանքի կուլտուրայում»

* Ավ. Իսահակյան, Մի երկու խոսք Խորհ. Հայաստանի գրականության ժամանակաշինության 1933-ի ընթացքին, «Հոկ» 1933 թ. № 10—11, էջ 30—31:

առանձնապես բարձր է գնահատում այն, որ այդ «կուլտուրան» մոտեցրել է տաղանդները իրականությանը, աշխատող զանդվածներին, որոնք գործում են հողի ու ջրի հետ, որոնք տարերքի հետ սերտ շփման մեջ են»: Սովետական դրուները «ապրում են աշխատավորների հետ, տեսնում են նրանց աշխատանքը բնության մեջ, բնության հետ: Զգում են, խանդավառվում են: Մարմնանում են աշխատավորների և բնության հետ»*:

Իսահակյանը վերջնականապես հայրենիք վերադարձավ. մեր մեծ Միության կյանքի մի շատ նշանակալից մոմենտին, այն ժամանակ, երբ ընդունվեց ու գործադրության մեջ մտավ Ստալինյան Սահմանադրությունը:

Բանաստեղծը սիրով ու խանդավառությամբ ողջունեց՝ նրա բառերով ասած՝ «Միութենական հոկայի» կյանքի ու պայքարի նոր, Ստալինյան օրենքը, որի մեջ՝ նա իր պայծառ հայացքով տեսակ ազատ ու երջանիկ կյանքի, կուլտուրայի ու գիտության ծաղկման արտացոլումը: «Ստալինյան Սահմանադրությունն ազատագրված անհատի աշխատելու և իր աշխատանքի արդյունքը վայելելու նվիրագործումն է անդասակարգ հասարակության մեջ»—գրեց Իսահակյանն իր ողջույնի խոսքում («Ողջույն Սահմանադրության»—«Խ. Հ.» 1936 թ. 14-ն դեկտեմբերի):

Բանաստեղծի այդ սրտագին խոսքերի մեջ խոտացած կերպով արտահայտված է նրա հասարակական-քաղաքական էվոլյուցիայի ավարտումը: Միայն սոցիալիստական ռեկուլյուցիան ինչպես մյուս ժողովուրդներին, նույնը և հայ ժողովրդին, տվեց ազատ հայրեժողովուրդներին, նույնը և ազատ ու երջանիկ կյանք: Միայն նիք, ազատ հող ու ջուր և ազատ ու երջանիկ կյանք: Հոկտեմբերյան Սոցիալիստական ռեկուլյուցիայի հաղթանակի չնորհիվ իրականացար!

Բամկի օրենք ու իրավունք,

Որ տեր դառնա ռամիկն իրեն

Սուրբ վաստակին, արդար հացին:

Եվ չէ՞ որ հենց դրան էլ է ձգտել «Մհերի» մեծ հեղինակը անդադար որոնելով «սուրբ ճշմարտությունը»՝ իր համար կյանքի ճանապարհին փորձելով «բյուր ուղիներ»: Յամայա կյանքի ճանապարհին փորձելով «բյուր ուղիներ»: Այդ որոնումների ընթացքում ինչքան էլ նա ստիպված էր հեռացնել իր հայրենի հողից ու մայր ժողովրդից, այնուամենայ-

* Ավ. Խանհակյան, «Երանց մոտ և մեղ մոտ» հոդվածը. «Եղորհութային Արքանություն», 1937 թ. հունվ. 1, № 1, էջ 13:

նիվ նրա սիրտը անխզելի կապված էր իր հողի ու ժողովրդի հետ և այդ անխզելի կապն էլ նրան վերջնականապես հայրենիք բերեց՝ ապրելու և նոր երդեր երգելու իր «Հայրապատ ստեղծագործ ժողովրդի հետ»:

Իսահակյանը երջանկություն ունեցավ ակտիվորեն մասնակցելու հայ ժողովրդի հանճարեղ դյուցազներգության՝ «Սասունցի Դավթի» 1000-ամյա Հոբելյանին, ըստորում դարձավ հեղինակ-ներից մեկը այդ Հոբելյանի առթիվ գրված հայտնի նամակ-բանաստեղծության՝ ուղղված ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինին:

Իր աղատ ու հարապատ ժողովրդի հետ միասին հողեպես վերածնված հայ կենդանի կլասիկ մեծ բանաստեղծը մի հիանքունչ, խորիմաստ բանաստեղծությամբ ողջունեց նաև ընկեր Ստալինի փառապանծ կյանքի 60-ամյակը:

Ահա այդ բանաստեղծությունը՝ «Մեծ Ստալինին» * վերնագրով.

Բարձրացրել ես դու պատմության սուրբն ահեղ

Երկրի վրա՝ ոճիրներով ծանրաբեռ,

Ստեղծագործ խօսք հըսոր և անշեղ,

Ողջ աշխարհի սրտում կրակ է վառել:

Ելան ծովերն ու ծովերին միացան,

Դու վարեցիր ժողովուրդներ բազմահեծ

Ազատության, արդարության հանգրվան,

Նոր մարդկության մի նոր աշխարհ լուծընկեց:

Քոնկիւն է արյան հեղեղը կրկին,

Վրնջում են նժույշները երկաթի,

Սակայն սանձը մըրիկների զայրապին՝

Դու բոնել ես քո կուռ ձեռքում աղղովատի:

Ել տանում ես հաղթանակից հաղթանակ

Հայրենիքը մեր անեղերք, աննկուն,

Քեզ անսպառ կամք ու կորով, երկար կյանք,

Ո՞վ մեծ զործի մեծ առաջնորդ իմաստուն:

Այս բանաստեղծությունն անկասկած ներկայիս սովորակայ պուեղիայի ստալինյան ցիկլի մարգարիտներից է և իրա՝ 65-ամյա բազմավաստակ բանաստեղծի ստեղծագործական կենսունակության վառ արտահայտություններից մեկը:

Ընկեր Ստալինին նվիրված այդ հիանալի ներբողը արժեքավոր է նրանով, որ ցայտուն կերպով պատկերում է նոր մարդ-

* «Խորհրդային գրականություն», 1939 թ. № 12, էջ 63:

Հղության հանճարեղ Առաջնորդի համաշխարհային-պատոմական գերը։ Նա միաժամանակ հանդիսանում է Խսահակյանի՝ մոտ 50-ամյա գրական կյանքի իղեալիան մի նշանաձողը, որ վկայում է բանաստեղծի ստեղծագործական ոգու հզոր ուժի ու նոր կարելիությունների մասին, մեր օրերին ու իր անվանն արժանի նոր գործեր տալու նրա անսպաս կարողության մասին։

Ի՞նչ փառավոր, բայց և ինչպիսի՞ փորձություններով լի ուղի է անցել մեր ժողովրդի հոչակալոր բանաստեղծը, որ այժմ իր իմաստուն ծերությունն է ապրում սոցիալիզմի երկրում, իր նոր, վերածնալած հայրենիքում։

Ավետիք Խսահակյանը Յասման Մհերն է հայկական պոեզիայում, որն անցյալում բուռն զայրույթով, անհուն ցասումով ծառացել է տիրող կարգերի դեմ, ապրել մեր ժողովրդական էպոսի Յասման Մհերի տառապանքն ու տանջանքը, իր սրառում կուտակել ուամիկ ժողովրդի անհուն վիշտն ու դարավոր ցասումը, միշտ ականջ է դրել ուամիկ կանչին, և երբ «Հեղին հասալ սակորին», «ուամիկ կանչեց Մհերին»—նա դուրս եկալ իր հեռավոր միայնությունից, եկալ ու հաստատորեն միացավ իր ժողովրդին՝ կանդնելով «կոմունիզմի աշխարհաերթ բանակի» շարքերում։

1939—1940

ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԶ

•	7—10
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	11—45
2. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԼԻՌԻԿԱՆ	46—65
3. ՊՈԵՄՆԵՐԸ	66—77
4. ԼԵԳԵՆԴՆԵՐՆ ՈՒ ԱՌԱԿԱՆԵՐԸ	78—87
5. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅԻ ԳԵՂԱՐԳՆԵՍՏԱԿԱՆ ԱՌԱՆՉԱՆԱՑ-	88—105
ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
6. ԳԵՂԱՐԳՆԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿ	106—115
7. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԿՐԱՇ ՈՒ ԹՈՂԱՇ ԳՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ-	116—125
ՆԵՐԸ	
8. ԲԱՆԱՏԵՂՆԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ	



Խմբագիր Հ. Մկրտչյան
Տեխն. Խմբ. Ս. Խաչատրյան
Սըբագրիչ Հ. Դոլոխանյան
Կոնտրոլ սըբագրիչ Լ. Արովյան

Պատվեր № 352, Զակազ № 352, տիրած 1500, տիраж 1500

Հանձնվել է արտադրության 23/XI 1940 թ.

Ստորագրվել է տպագրելու 15/I 1941 թ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության
տպարան, Երևան, Ալլավերդյան № 65
Տիպոգրաֆия Гос. изд. полит. литературы, Ереван, Аллавердин № 65

A II
50023